US..A9
1952 г.

17206

Дозволено цензурою. 5 ноября 1866 г. Тифлисъ.

9(3)
Ս-50
№2334
10 NOV 2011
2 SEP 2008

ԳԱՍԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Աշխատասիրուեալ

ՊԵՏՐՈՍԻ ՍԻՄԷՕՆԵԱՆՑ.

149

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԴԱՐԵՐԻ.

ԹԻՖԼԻՍ.

Ի տպարանի Համբարձումայ Էնֆիաճեանց եւ ընկերութեան:

1867

ՄԵԾԱՐԳՈՅ

ՊԱՐՈՆ ԿԱՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑԻՆ

ՆՈՒԷՐ - ՆՈՒԱՍՏ

ԱԹԱՍԱՍԻՐՈՂԻՑ

ՑԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տեսնելով, որ մեր ազգային հոգևոր դպրոցների մէջ, արդէն քանի ժամանակ է, լինում է դասատուութիւնը ընդհանուր պատմութեան և նկատելով աշակերտների դժուար դրութիւնը, որոնք, չունենալով իրանց ձեռքին մի դասագիրք այդ գիտութեան, ստիպված էին արտագրել ամբողջ տետրակներ, յանձնառու եղանք պատրաստելու այս փոքրիկ դասագիրքը ընդհանուր պատմութեան, որ գոնեա մասամբ թեթևացնենք նոցա աշխատանքը և միջոց տանք նրանց աւելի հեշտութեամբ հասնելու այս առարկայի մասնաւոր գիտութեանը: Ցոյս ունինք, որ մեր հայ հասարակութիւնները սիրով կ'ընդունեն այս մեր դուշնաքեայ աշխատութիւնը իրանց որդոց և զաւակների յառաջադիմութեան համար. մինչև աւելի յաջողակ հանգամանքները միջոց կ'տան լոյս տեսնելու սրանից աւելի կատարեալ դասագրքերի: Այս գրքոյկի մէջ մենք բաց ենք թողել Հրէից ազգի պատմութիւնը. որովհետև այն սովորցնում են գրեթէ ամէն դպրոցներում սրբազան պատմութեան մէջ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆ

ՀԻՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Աշխարհի ստեղծագործութիւնից մինչեւ աղգերի տեղափոխութիւնը եւ Հռովմայեցւոց արեւմտեան կայսերութեան անկումն (4000 Ն. Ք. զՔրիստոս մինչեւ 476 Քրիստոսի թուականի).

Սուրբ գիրքը սկսում է աշխարհի ստեղծելից և նը-կարագրում է այն շատ պարզ և դեղեցիկ կերպով: Սկզբում ստեղծեց Աստուած երկինքը և երկիրը, յետոյ լոյսը, ապա բաժանեց ջուրը ցամաքից, ստեղծեց բոյսեր և կենդանիներ թէ ցամաքի վերայ և թէ ջրի մէջ. և երբ որ ամէն բան նախապատրաստած էր, ստեղծեց առաջին զոյգ մարդը և դրեց նրանց մի այնպիսի պարտիզանման երկրում, ուր ամէն կերպի կենաց պիտոյքը գտնվում էին: Պարգևեց նրանց բա-

նականութիւն, որ կարողանան տիրել երկրիս, բան նմանութեան Աստուծոյ, որոնք Տէր է տիեզերքի:

Ադամ և Եւա՝ այր և կին էին սկզբում բնական դրութեան մէջ դրախտում կամ պարտիզում, որովհետև առաջին մարդոց համար ամէնից յարմար կեանքը այդ է: Բայց այս բնական դրութիւնը անցաւ շուտ, երբ մարդը անցնելով Արարչի պատուիրանքից ընկաւ մեղքի մէջ: Այսպէս կորաւ դրախտը և անմեղ բնական դրութիւնը մարդոց, և երբ շուտ կայէն սպանեց իւր Աբէլ եղբօր, վազեց առաջին արիւնը մարդուս, որ անվերջ հեաց այս հեղեղը մինչև ցայսօր:

Երկարակեաց էին նախաստեղծները և իրանց որդիքուսուի և շուտով բազմացաւ խիստ մարդկային ազգը: Ցեղոց սկսան ցրուիլ, գուցէ գետերի ընթացքին հետևելով, զանազան կողմեր:

Թէև կամաց կամաց աւելացաւ մարդոց դիտութիւնը. բայց բարոյականութիւնը և բարեպաշտութիւնը ոչինչ չշահեցան. ուստի և Աստուած, ինչպէս պատմում է սուրբ Գիրքը, ջնջեց մարդկութիւնը ամենեին երկրիս երեսից ջրհեղեղով, բաց 'ի մի բարեպաշտ ընտանիքից: Նոյ ուսացաւ աստուածային հրաման իր ընտանիքով և շատ կենդանիներով մտնել մի մեծ նաւի մէջ, որոնք, ջրհեղեղը դադարելից յետոյ, ելքաւ Հայաստանի Արարատ (Մասիս) լերան գլուխը. (սորա բարձրութիւնն է 16,000 ոտնաչափ գարբոտի ասելով): Ուրիշ ազգերի մէջ էլ հեացել է ա-

ւանդութիւնը ջրհեղեղի վերայ. մինչև Ամերիկայի հին բնակիչների մէջ էլ կայ աւանդութիւնը ջրհեղեղի և փրկիչ նաւի վերայ, որնոր մի բարձր լերան գլխին նստել է:

Այս ջրհեղեղով Ադամէի որդին Նոյը եղաւ երկրորդ հայր մարդկութեան, որնոր նորա որդիներից բազմանալով ցրուեցաւ աշխարհիս երեսին: Ամենից առաջ ցրուեցան մարդիկ Ասիայի, Եւրոպայի և Աֆրիկայի մէջ և իրանց լեզուի զանազանութեամբ կազմեցին զանազան ազգեր: Որովհետև ինչպէս ամենայն կենդանիների նոյնպէս էլ մարդուս վերայ ունին մեծ ներգործութիւն թէ կլիմայն և թէ կերակուրը, ուստի և մարդիկ ցրուելով զանազան երկիրներ, սկսան միմեանցից զանազանվել թէ մարմնով և թէ հոգեւոր կարողութիւններով: Մարդոց արտաքին զանազանութեանց նայելով կարելի է մարդկային ազգը հինգ գլխաւոր ցեղեր բաժանել. Կովկասեան, Մողոլեան, Եթիոպիական, Մալայեան և Ամերիկական: Իւրաքանչիւր երկրի զանազան բնութիւններն էլ պատճառ եղան մարդոց կենցաղավարութեան զանազան եղանակներին: Անապատի մէջ կեցող ազգերը աւելի սկսան հովուութեամբ պարապել և վարում էին թափառական կեանք: Առաւել շուտ ծաղկեցան տէրութիւններ այն երկիրներում, ուր գլխաւոր արհեստը երկրագործութիւնն էր, որովհետև այս դրութեան մէջ մարդս պէտք է հաստատ բնակութիւն ունե-

նայ: Այս տեղ խրճիթը տուն դառաւ, որտեղ պատուած էր արտերով, սոքա էլ փոսով կամ ցանկով, ապահով լինելու համար կենդանիների և մարդոց յարձակումից: Շատ ընտանիք փոքր առ փոքր սկսան միմեանց մօտենալ և այսպէս հիմնեցին գեղեր, որոնք առաւել և առաւել մեծանալով, որովհետև ընդհանուր կարիքը ստիպեցին և ընկերութեան ոգին էլ ծագեց մէջերը, քաղաքներ դառան: Այսպիսի քաղաքները եղան սկիզբն զանազան իշխանութիւնների, որոնք հետզհետէ սկսան ընդարձակել իրանց սահմանները և կազմեցին թագաւորութիւններ: Այս թագաւորութիւնները սկսան բռնակալութիւնով, որովհետև մի քանի իշխաններ իրանց ցեղը ճնշելից յետո կամեցան ուրիշներին էլ տիրել և այսպիսի թագաւորութիւնները տեւում էին մինչև մի առաւել զօրեղի յայտնվելը:

ԱՐԵՒԵԼՔ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ ԵՒ ՃԵՆԱՍՏԱՆ.

Լուսաւորութեան հայրենիքը Ասիան էր սկզբումը. դրայց յետոյ տարածվեցաւ Արևմուտքումն էլ և առաջ միջերկրական ծովի չորս կողմը եղած երկիրներումը: Արևելեան Հնդկաստանում հին ժամանակներումն էլ գտանվում էին շատ լուսաւորեալ ազգեր, որոնց վկայ են մինչև յայժմ մնացած թէ դրաւոր և թէ ճար-

տարապետական աշխատութիւնները. ոմանք կարծում էին, թէ հնդիկ զաղթականներ կարմիր ծովի վրայով անցել են Եթիոպիա և այն տեղ տարածել են իրանց լուսաւորութիւնը: Ձենատանը, որոնք բնական դրութեանով բաժանած է ամենեին ուրիշ երկիրներից, հասել էր խիստ հին ժամանակներում մի ասոիճան լուսաւորութեան, բայց այս ասոիճանում դարերով մնաց:

ԱՍՈՐԵՍՏԱՆ

Արևմուտեան հարաւային Ասիայում, այն տեղ ուր Եփրատ և Տիգրիս շատ պտղաբեր դաշտեր են առաջանում (Միջագետք) բնակում էին նախնական ժամանակները շատ մարդկային ցեղեր, որոնց երևելիները եղան Բաբելացիք և Ասորեստանցիք: Ներոմիթ (Բել) յիշվում է իբրև առաջին իշխանը այն երկիրների և հիմնարկիչը Բաբելոն քաղաքի: Ցեղոյ մօտ 2000 տարի Քրիստոսից առաջ յիշվում է Ասուր, որի անունով Բաբելոնից դէպի հիւսիս ձգվող երկիրը Ասորեստան կոչվեցաւ: Սորա յաջորդներից մէկը, Նինոս անունով, հիմնեց Տիգրիսի մօտ Նինուէ քաղաքը: Սա էր մեծ աշխարհակալ, որից Բաբիլոնին և Փարաստանին, որոնք արևելեան հիւսիսումն էր և իր մահից յետո այս երկիրների ժառանգ թողեց իր Նինէաս որդուն: Բայց սորա տեղ,

որնոր ամենեին կառավարելու ընդունակութիւն չունէր. նորա մայր Շամիրամը, որ բարձրաթռիչ ոգի մէր կին էր, իր ձեռք առաւ իշխանութեան սանձերը, ընդարձակեց իւր տէրութիւնը յաջողակ պատերազմերով մինչև Ինդոս գետը, ուր Պարրոսատէս թագաւորը սահման դրեց նորա յաղթութիւններին և արշաւանքին: Սա, իր տէրութեան մէջ էլ գործունեայ դոլով, գեղեցկացրեց Բաբելոնը, որնոր պատեց պատերով, որոնց բարձրութիւնը և ամրութիւնը զարմացնում էին հիներուն, զարդարեց իւր պալատը կախաղանաւոր պարտէզներով: Սրանից յետո երկար ժամանակ անյայտ է մնում Ասորեստանի վիճակի պատմութիւնը: Միայն մնա 888 ին յիշվում է Սարդանապալ թագաւորի անունը, որնոր իւր անհոգս և շռայլ կենցաղավարութեամբ պատճառ եղաւ Մեդացիների և Բաբելացիների ապստամբութեանը: Առաջինների առաջնորդն էր Արբակէս, իսկ վերջիններիներ Բելէզիս: Սարդանապալի քաջանալը ուշ էր և 'ի զուր: Նինուէն արիապէս պաշտպանելից յետո, յաղթվեցաւ և կենդանի թշնամիների ձեռքը չընկնելու համար այրեցաւ իր ընտանիքով և գանձերով իր պալատի մէջ: Նորա թագաւորութիւնը բաժանեցաւ: Հինների երևակայութիւնը միշտ սիրում էր ստեղծել հրեշներ. ուստի և շատ երևելի անձների ընծայում էին նորա գերբնական գործքեր կամ շատ անձանց մեծագործութիւնները վերաբերում էին մէկին: Այս-

պէս էլ նուիրում են Շարմիրամին շատ մեծագործութիւններ, որոնց շատերը ուրիշները սեպհական նացում են այլ և այլ իշխանների, զորօրինակ, Բաբելոնի կախաղանաւոր պարտէզները և այլ շինուածոց կանգնումն վերաբերում են Բաբելոնի Նաբուզոդոնոսոր թագաւորին։

ՆՈՐ ԱՍՈՐԵՍՏԱՆ ԵՒ ԲԱԲԵԼԱՍՏԱՆ

Հին Ասորեստանի աւերակներից ծագած թագաւորութիւնների պատմութիւնն էլ պակասաւոր է։ Նոր Ասորեստանի թագաւորներից, որի մայրաքաղաքը Նինուէն էր, յիշում է մեզ Սուրբ Գիրքը յետագանները։ Փ ո ւ ա (Փուլ), որնոր 770 ին արշաւեց Ասորիք։ Թ ա գ ղ ա թ փ ա ղ ա ս ա ր (Տիկլաթ Պիլեզար), որ 740 ին Դամասկոսին տիրեց։ Ս ա ղ մ ա ն ա ս ա ր, որ 722 ին ջնջեց Իսրայէլի թագաւորութիւնը և բնակիչներուն գերի տարաւ։ Վերջապէս Սենեքերիմ (Սանհերիբ), որ 714 'ի զուր փորձեց Յուդայի թագաւորութիւնը նուաճել։ Արանից յետ թուլացաւ այս թագաւորութեան զօրութիւնը և իշխանութիւնը միջին Ասիայի վերայ, անցաւ Բաբելացիների ձեռքը։ Որովհետև հիւսիսային լեռնական ազգերից մինը Քաղդէացիք Հայաստանի լեռներից գուրս գալով Նաբոպալասարի առաջնորդութեամբ 627 ին տիրեցին Բաբելոնին և նորոգեցին նորա զօրութիւնը և իշխանութիւնը, ոչ միայն Նոր Ասորեստանին և

մերձակայ երկիրներին տիրելով, այլ և ամենահեռի ազգերին էլ, մինչև անգամ Եգիպտացիներին ահալի աբին Բաբելոնի անունը: Իր մեծութեան ամենաբարձր կէտին հասաւ Բաբելոն Նաբուգոդոնոսորի (606—561) իշխանութեան ժամանակ: Սա հարկաւոր արաւ իրան Յուդայի թագաւորութիւնը, որի կրկնակի ապստամբութիւնը պատժեց վերջապէս, ազգը գերի տանելով (գերութիւն Բաբելացւոց): Նուաճեց նմանապէս Հարուստ Փիւնիկիան 586 ին: Սորա մահից յետո թուլացաւ այս թագաւորութեան զօրութիւնն էլ և արդէն Բաղդասարի (Նաբոնեդոսի կամ Լաբինիտի) ժամանակ 538 ին Բաբելոնը ընկաւ Պարսիկների Կիւրոս թագաւորի իշխանութեան տակ:

ՄԱՐԱՍՏԱՆ ԿԱՄ ՄԻԴԻԱ.

Ասորեստանի արևելեան հիւսիսում ձգվում էր Մարաստանը, իր վայրենի լեռներով և բարելիր դաշտերով, որոնց միջով անցնում էին վաճառականական կարաւանների ճանապարհները, ու բաժանվում էր երկու գլխաւոր մասն փոքր Մարք հիւսիսում և մեծ Մարք հարաւում, ուր և էր նոցա Էկբատանա մայրաքաղաքը: Ինչպէս վերև յիշեցինք Վարբակէս ազատեց այս երկիրը Ասորեստանցւոց իշխանութեան տակից, միայն բուն հիմնիչը Մարաց տէրութեան եղաւ Դիոակ, ո-

բովհետև առաջինը սա իշխեց՝ անկախ Մոդերի (Մարաց հոդևորականների) ազդեցութիւնից։

Սա իր առաքինութիւններով թագաւոր ընտրվեցաւ 710 թվին և հիմնեց Մարաց Եկբատան մայրաքաղաքը։ Սորա որդին Փրաորտը 650 թվին նուաճեց լեռնային Պարսկաստանը։ Կիաքսար (625—585) կատարելագործեց Մարաց զինուորական կարգը, յաղթեց Լիդացիներին, նուաճեց, Քաղդէացիների նաբոպալասար իշխանի հետ միաւորվելով, Ասորեստան, որի մայրաքաղաքը Նինուէն 625 թվին քանդեց, և ազատեց խորամանկութեամբ իւր երկիրը այժմեան Ռուսաստանի հարաւային կողմերից (606) եկած Սկիթացիների ձեռքից, որոնց 28 տարի հպատակ մնաց։ Աժդահակի՝ Մարաց վերջին թագաւորի իշխանութեան ժամանակ ընկաւ Մարաստան Պարսիկների Կիւրոս թագաւորի ձեռքը 560 թվին։ Մարաց ազգը, որոնք վեց ցեղեր էր բաժանվում, էր ազգակից հին Զէնդ ազգին և սորա նման հեռևում էր Զրադաշտի աղանդին, որոնք ուսուցանում էր թէ „Է մի Աստուած լուսոյ Որմիզդ և մի խաւարի Աստուած Արհմն անունով, երկուսն էլ անդադար միմեանց հետ պատերազմում են, մինչև որ վերջինը կ'յաղթվի և աշխարհումն ամէն բան մաքուր և բարի կ'լինի։ Մարդս ասուածութեան հաճելի կարող է լինել անարատ և սուրբ կենցաղավարութեամբ, պատերազմով խաւարի դէմ, երկիրը գործելով և պոզատու ծառերը

բազմացնելով։ Արձաններ չէ պէտք պաշտել, լոյսը և կրակը, որոնք մաքրութեան զտարարներ են գլխաւոր պաշտելի առարկաները. նոյնպէս կարևոր են մաքրութիւնը և լուացումն։ Այս և այլ ուրիշ խրատներ գտանվում են Զ ե ն դ Ա վ ե ս տ ա գրքում։ Բուրմերը, որ այստեղ մոգ էին կոչվում, քարոզում էին և տարածում այս ուսումն ու ազդեցութիւն ունէին ժողովրդի վերայ։ Այժմ էլ դեռ կան այս ազանդի հետևողներ զանազան անուններով (Գեբերներ, Զարաձ, Կրակապաշտներ) ինչպէս Պարսի մասերը, Ամատրիան, Բոմբայ. և այլն։

Փ ի ն ի կ է.

Միջերկրական ծովի արևելեան ափումը տարածվում էր Փինիկեցիների երկիրը։ Այստեղ, ուր ձգվում են մայրերով ծածկած Լիբանանը և Անտիլիբանանը, բնակում էին սկզբումն Ասորոց ցեղերը, իսկ շատ հին ժամանակներումն տեղափոխեցան, գուցէ Պարսից ծոցի մասից, Փինիկեցիք, որոնք կարճ ժամանակում, իրանց բնական ձիրքերով և գործունէութեամբ գերազանց լինելով երկրի բնիկ ժողովրդից, տիրեցին երկուսին էլ։ Բնական որպիսութիւնը երկրի, որ անյարմար է երկրագործութեան և ասուպաբուծութեան, ստիպեց նրանց, շահվելով Լիբանանում մայրերից և բազմաթիւ ծովածոցերից դարձնել, իրանց ուշք ու միտքը վաճառականութեան վերայ։ Ուստի

և սոքա շուտով կատարելագործեցին նաւաշինու թեան արհեստը, սովորեցան առագաստի և թիերի գործածութիւնը և աստղերով ուղղում էին իրանց ընթացքը: Երբ Միջերկրական ծովի ափերը պտտելից յետոյ առաւել հեռու անցան Ատլանտեան Ովկիանոս, երբեմն եղան իրանց ժամանակում իրրև քաջահմուտ ծովագնացներ: Որովհետև իրենց երկիրը առեւտուրի առարկայ սակաւ էր տալիս, Փենիկեցիները պարապում էին առաւել պղտարեր երկիրների բերքերը իրանց գործատներում պատրաստելով և մի ազգից միւսին հասցնելով: Նոքա ստանում էին Սպանիայից արծաթ, Անգղիայից անագ և սաթ Գալիկ ծովի ափերից: Ցունատանից բերում էին գինի, Սիկիլիայից ցորեն, Հնդկաստանից և Արաբիայից, ըստ որում ունէին սոքա ցամաքային առեւտուր էլ կարաւաններով, հաստեղներ, ոսկի, փղոսկր, խունկ և այլն. բաց 'ի սրանցից ունէին նոյնպէս իրանց աշխատութիւններն և մեծաւորապէս իրանց սեպհական գիւտերը, ինչպէս ծիրանների հանդերձներ. ապակեղէններ, գարպեր և խաղալիկներ: Սկզբում նոքա փոխում էին ապրանքները մինը միւսի հետ. իսկ վերջը հնարեցին ոսկիից դրամ կտրելը, որով պարզեցին վաճառականութեան նոր դիւրութիւն և ապահովութիւն: Ամենից երևելի և օգտաբեր գիւտը, այն է, նշանագիրների (տառերի գիւտը), նոյնպէս նրանց են վերաբերում: Տ ա ռ ա (2000) կոչվում է հնարիչ

տառերի և կազմում (1550) հաղորդում է այն ցոյներին, որոնցից էլ փոխ առան միւս Եւրոպայի ազգերը։ Փինիկեցիները նոյնպէս առաջիներ եղան, որ գաղթականներ սկսան խրկել զանազան երկիրներ՝ այսինքն, իրանց ծովագնացութեան ժամանակ հեռաւոր երկիրներում էլ գիւրութիւն, օգնութիւն և պաշտպանութիւն գտնելու ու իրանց վաճառականական կապակցութիւնը այլ և այլ հեռաւոր երկիրների հետ դիւրացնելու համար հիմնեցին իրանց սեպհական ափերում քաղաքներ և այս այնպէս զգուշութեամբ և հոգացողութեամբ արին, որ այն գաղթականները շուտ ծաղկեցան և իրանց մայր քաղաքին միշտ մրաերիմ և հաւատարիմ մնացին։ Ասացածից ամէնքից երևելի եղան Կադէս (այժմեան Կադիքս) Սպանիաում, Ուտիկա և Կարթագինէ Աֆրիկայի արևմտեան հիւսիսումը։ Առաջին երկուսը մօտ 1100 ին հիմնեցան. իսկ վերջինը 888 ին, ինչպէս աւանդութիւնը ասում է, Տիրոսացի Դիդէ (Էլիսսա) իշխանուհիի ձեռքով հիմնվեցաւ։

Փինիկեցիների ներքին պատմութիւնը շատ փոքր է մեզ յայտնի։ Արդէն 1500 ից առաջ պէտք է, որ սկսած լինէին Միջերկրական ծովում նաւելու. բայց նրան մեծ զօրութեան ժամանակը սկսում է 1100 ից։ Շատ քաղաքներ ինչպէս Սիդոն, Տիրոս, Բերիտոս, Տրիպոլիս, որոնց թագաւորները իշխանների խորհրդակցութեամբ կառավարում էին տէրութիւնը,

բան մեծի մասին միմեանցից անկախ, ծագկեցան. բայց էլի սկզբում Սիդոն և յետոյ Տիրոս իրրև գլխաւոր քաղաք ընդունվում էին: Տիրոսի թագաւորներից մինը Քիրամ տուեց Սողոմոնին 1000 ին տաղանդ, աշխատաւորներ տաճարի շինութեան համար (Գ. թագ. գլ. 5.) և Եզեկիել մարգարէն ասում է Տիրոսի համար. (գլ. 27. համ. 33.) «Լցուցեր զազգս 'ի բազմութենէ քումմէ և յաղխամաղխէ վաճառաց քոց մեծացուցեր զամենայն թագաւորս երկրի»:

Փունիկեցիների հարստութիւնը շատ անգամ գրգռեց մերձակայ ազգերի ագահութիւնը: Սաղմանասարը կողոպտեց 720 ին դաշտային երկիրը, բայց ամուր Տիրոսի պաշարումն զուր եղաւ: Առաւել հզօր Նաբուգոդոնոսորին յաջողեցաւ Տիրոսի քանդումն և բոլոր Փունիկիայի նուաճումն: Բայց անխոնջ Տիրացիները կանգնեցին մի կղզի վերայ նոր Տիրոսը, որնոր ցամաքային զօրքերի համար անմերձենալի լինելով կարճ միջոցում նոյն զօրութեան հասաւ և զեռ Պարսից թագաւորների իշխանութեան տակն էլ, բան որում պրանց շատ հարկաւոր էին նոցա նաւատորմիղները, էլի նշանակութիւն ունէր: Երբ երկրորդ անգամ 332 առնվեցաւ Աղէքսանդր մեծից, մանաւանդ երբ համաշխարհական վաճառականութեան կենդրոնը Աղէքսանդրիան դառաւ, թուլացաւ Փունիկիայի քաղաքների զօրութիւնը, կորաւ նոցա փառքը և հանդաւ նոցա լոյսը ամենևին:

Փիւնիկեցիք կրօնական գաղափարների վերայ շատ ուշադրութիւն չէին դարձնում: Նոցա կրօնական ծէսերը բաղկանում էին աւելի զոհաբերութիւններից արեամբ և կապած էին այլ և այլ այնպիսի արարողութեանց հետ, որոնք առաւել յարուցանում էին մարդոց մէջ զեղխութիւն և խաստրութիւն, սոցա խափանարարը լինելու փոխանակ: Նոցա գլխաւոր Աստուածները էին Բահաղ, Աստարտէ, Մոլոք և Մեղքարթէ, որոնց մատաղահաս օրիորդներ և մանուկներ էլ զոհ էին բերում:

ՍԻՐԻԱ (ԱՍՈՐԻՔ)

Պարսիրայի անապատի արևելքում և Լիբանանի ու Անտի Լիբանանի գօտիների մէջ արևմտաքում ձգվում են բարերեր հովիտներ, (որոնք Ղրանակս գետն է ոռոգանում): Այս է Սիրիան, որի բնակիչները արդէն խիստ հին ժամանակներից հնութիւնում — դուցէ 2000 ից ոչ շատ ուշ — հիմնեցին Դամասկոս և Հելիոպոլիս (Բաալբէք) քաղաքները: Սոքա էլ կազմում էին զանազան մանր թագաւորութիւններ, ուստի և դիւրաւ յաջողեցաւ Դաւիթ թագաւորին նոցա նուաճումն 1040 ին: Հարիւր տարիից Սիրիան Դասանի առաջնորդութեամբը ազատվեցաւ Իսրայելացիների իշխանութիւնից, հիմնեց անկախ թագաւորութիւնը Դամասկոսի, որնոր տևեց մինչև 740. որովհետև

թաղդամի Զաշատարը այս տարիին նուազելոց Դամասկոս և ջնջեց նորա թագաւորութիւնը:

ԵԳԻՊՏՈՍ.

Արևելեան հիւսիսային Աֆրիկայում Արաբիայի ծովածոցին մօտ է Եգիպտոս, որ մի երկար ու նեղ հովիտ է, որի մէջ տեղով վազում է Նեղոս գետը: Այս գետը ամէն տարի, Հարէշի լեռների ձիւնները հալելիս և սահմանեալ ժամանակի անձրևներից եթիոպիայում մեծանալով, գուրս է գալիս իւր ափերից և ծածկում է երեք ամիս բոլոր երկիրը մինչև Արաբիայի լեռները, որ արևելքում և մինչև Լիբիայինը, որ արևմուտքից սահմաններն են հովտի: Երբ ջուրը յետ է քաշվում, երկիրը ոչ միայն ուռոգած է լինում, այլ և բերրի սիլով պարարտացած. ուստի և վերջին ատենների պտղաբեր: Այս պատճառով հին ժամանակներումն էլ երկրագործութիւնը Եգիպտացիների գլխաւոր զբաղմունքն էր: Բայց մեծաւոր բուսաւորութիւնն էլ անծանօթ չէր նրանց, որովհետև նորա երկրաչափական և աստղաբաշխական գիտութեան վերայ էլ տեղեկութիւններ ունէին. հնարեցին նշանագիրներ (Հերոգլիֆներ): Ճեռագործութեան մէջ էլ խիստ հմուտ էին Եգիպտացիները: Սոքա պատրաստում էին ճարտարարուեստ ձեռագործներ, պատ-

բաստառում էին պապիրի տերևներից թուղթ, ունէին երաժշտական և երկրագործական գործիք: Մանաւանդ կատարելագործելոյին նոքա նկարչութիւնը, արձանագործութեան ու ճարտարապետութեան արհեստը: Վիթխարի, մասամբ մինչև ցայժմ պահպանված, ճարտարապետական գործքերը նոցա զարմացման արժանի են: Նոքա են Թեբէի աւերակները, տաճարները, աքքունի շիրիմները, Մեմնոնի արձանը, Սֆինքսներ, կոթողներ և բուրգներ: Ազգը — ինչպէս այժմ Հնդիկները, — բաժանվում էր զանազան կարգեր, որոնք այնպէս զանազանած էին մէկ մէկից, որ ոչոք մինից միւս կարգ մտնել չէր կարող. ինչ որ Հայրն էր, մի և նոյնը որդին պարտական էր լինել: Այսպիսի կարգեր վեց էին՝ կարգ քուրմերի, զինուորների, վաճառականների, հողագործների, նաւաստիների, (միայն նեղոսի վերայ) և հովիւների: Քուրմերն էին խակապէս երկրի տէրերը, նոքա միայն գիտէին գիտութիւնների ու արհեստների գաղտնիքը, մինչև օրէնքներ անգամ էին գրում թագաւորներին, որոնք զինուորների կարգից էին ընտրվում: Գլխաւոր աստուածները էին Արևգակը և Լուսինը, որոնց նոքա Զսիրիս և Իսիս էին կոչում. բայց 'ի սոցանից պաշտում էին Եգիպտացիները կենդանիներ էլ. ինչպէս մի հաղուագիւտ բծաւոր եզը, որ Ապիս էր կոչվում, կռնկամման Իբիս թռչունին, ջուրք և այլն:

Սոքա հաւատում էին հոգեփոխութեան էլ, այսինքն, թէ մարդկային հոգին, մարդու մահից յետոյ, մտնում է կենդանիի մարմին և 3000 տարիից վերստին մարդու մարմին է վերադառնում: Այս պատճառաւ հընարեցին մարմին զմռսելու արհեստը:

Եգիպտոսից դէպի հարաւ ընթանում էր Մերոէ թագաւորութիւնը, ուր փոքր ձևով գտանում են այն երևոյթների հետքը, որոնք Եգիպտոս այդպէս երևելի արին. ուստի և ոմանք կարծում են մինչև այժմ, որ Եգիպտացւոց սկիզբն այնտեղ է եղել և այնտեղից եկել են Եգիպտոս. բայց նորագոյն փորձերը ցոյց տուին, որ Մէրոէի լուսաւորութիւնը երբէք այն աստիճանին չէր հասել, ինչ որ Եգիպտոսումն էր և թէ այն տեղ Եգիպտոսից ուշ է սկսել լուսաւորութիւնը: Եգիպտոսը բաղկացած էր սկզբում զանազան թագաւորութիւններից: Ողջից առաջ ծաղկեցաւ թէբէն վերին Եգիպտոսում, յետոյ Մեմֆիս եղաւ գլխաւոր տէրութիւնը. իսկ վերջապէս Դելտաւում, ստորին Եգիպտոսում: Առաջին թագաւորը, որ Մեմֆիս քաղաքը շինեց, Մենէս էր անուանվում և ասում է, որ 2000 ից առաջ թագաւորած լինի: Ցեռապայ դարերում պատահեցաւ Ցակոմբի ընտանիքի Եգիպտոս չուելը: Բայց երբ մօտ 1700 ին տիրեցին Եգիպտոսին Հոմիւ թագաւորները (Հիւքսոս), սկսան շարշարել խարայէլացիներին, որով և պատճառ տուին նոցա դուրս գաղթելու [illegible] երբ դուն Եգիպտացիներվ վերին

[illegible]

Եգիպտոսից օգնություն ստանալով արտաքսեցին հոմիներին և իրանց անկախությունը հաստատեցին, երևելի եղաւ Մերիս թագաւորը իւր շինել տուած լճով, որ շատ օգտաւէտ էր գետինը ոռոգանելու համար, մանաւանդ երաշտության տարիներում: Մերիսից յետո 1350 ին նոսաւ թագաւոր Սեսոստրիս, մեծ աշխարհակալը, որ, ինչպէս երևում է, Ասիրիայի և Ասիայի նշանաւոր մասին տիրել է: Մինչև ցայժմ մնացած յիշատակարանների նկարները և վերնագրերը, մանաւանդ կոթողների գրուածները վկայում են նորա գործքերին: Սեսոստրիսից բաւական ժամանակ յետոյ նոսաւ թագաւոր Ք է ո պ ս, որ շինեց ամենից մեծ բուրգը (այժմեան Կահիրէի շրջակայումը ճիզէհ գեղի մօտ): Սորա յաջորդները Քեփրէն և Մեկերին պէտք է որ նոյնպէս նման շինութիւններով պարապած լինին: Սեսոստրի յաջորդների փառքը տևեց մինչև ութերորդ դարի կէսը, երբ Սաբակոն Եթիոպացին տիրեց Եգիպտոսին: Թէև շուտով սա վերստին հեռացաւ, բայց սովորության ու իրաւունքի ընդդէմ Սէթոս քուրմը տիրեց աթոռին 714 ին: Այս եղաւ պատճառ ներքին երկպառակության, որոնք երկրի տասներկու իշխանների մէջ բաժանվելով վերջացան (Դոդեքարխիա): Սոցանից մէկը Պսամմետիքոս Սայիսեցին, որին մատն հասել էին Միջերկրական ծովի ափերը, պատահմամբ ծանօթացաւ յոյն և կարիացի նաւատիների հետ,

վարձեց նրանց ու նոցա օգնութեամբը յաղթեց միւս իւր իշխանակիցներին ու միաւորեց վերատին ողջ երկիրը 650 մի իշխանութեան տակ: Առաջին առանձնութիւնը Եգիպտոսի վերջացաւ, մեծ կապակցութիւն մերձակայ ազգերի հետ սկսաւ և եկող տարիները այնքան շատացան, որ Պսամմետիքոս մի առանձին նոր կարգ էլ հիմնեց՝ այն է թ ա ր գ մ ա ն ի չ ն ե ր ի կ ա ր գ ը: Սորա որդին Փարաւոն Նեքաւով (Նեքո) (610—594) իւր հօրից էլ անցաւ: Սա մեծ նաւատորմիղ շինել տուաւ և Փիւնիկեցի նաւագնացներին հրամայեց ողջ Աֆրիկէն պտտել նաւով, նոյնպէս կամենում էր կարմիր ծովը միջերկրականի հետ միաւորել: Նեքաւով ցամաքային պատերազմում անյաջող էր, որովհետև Նաբուգոդոնոսորի դէմ կրուվում յաղթվեցաւ Կիրկեսիոնի մօտ 606 ին և ստիպվեցաւ միայն Եգիպտոսի երկրով բաւականանալ: Մին քանի ժամանակից Ամասիսից (570 — 526), սկսաւ նոր ցեղ թագաւորելու. բայց շատ սակաւ տևեց սորա իշխանութիւնը, ըստ որում սորա որդու Պսամմենիտոսի (Պսամէս) թագաւորութեան առաջին տարիում 525 ին Պարսիկների Կամբիւսէս թագաւորը յարձակեցաւ նորա վերայ, յաղթեց նրան Պելուսիոնի մօտ, գերի առաւ նորան Մեմֆիս մայրաքաղաքում և նորա երկիրը Պարսից տէրութեան հետ միաւորեց:

ՓՈՓՐ ԱՍԻԱ.

Այս բերրի ու հնուց լաւ մշակած թերակղզի-ումը, որ կամուրջ է Ասիայի ու Եւրոպայի մէջ, բնակում էին զանազան արժանայիշատակ ազգեր: Երկրի մէջ տեղումը բնակում էին Փռիւգացիք, որոնց Կորգիոս ու Միդաս թագաւորների վերայ այլ և այլ առասպելներ պատմում են: Առաւել մօտ ցուռնաց ծովին բնակում էր Լիւդացիների լուսաւորեալ և գինուորական ու պատերազմական արհեստներումը խիստ հմուտ ազգը: Սոցա երեք թագաւորական ցեղերից միայն վերջին ցեղի պատմութիւնը յայտնի է այսինքն Մերմնաւեանց, որոնք 727 — 546 թագաւորեցին: Այս ցեղի թագաւորները բաւական բնդարձակեցին իրանց տէրութեան սահմանները, նուաճացին Յոյների գաղթականները արևմտեան ծովեզերքումը, յաջողութեամբ դէմ կեցան յարձակող Դամիրներին ու Մեդացիներին: Այս ցեղի հինգերորդ իշխանը էր Կրեսոս, որ ժառանգեց իւր նախնիքներից ընդարձակ տէրութիւն և անթիւ գանձեր: Կրան, որ իրան ամենաբաղդաւոր մարդն էր կարծում երկրիս երեսին, ասաց Յոյն Սոլոն իմաստասէրը, թէ «ոչ ոք մահից առաջ բաղդաւոր չէ»: Ճշմարտիւ Կրեսոսի և նորա ընտանիքի դժբաղդութիւնը հաստատեց՝ Սոլոնի խօսքը, ըստ որում ինքը

և իր ամբութիւնը ընկան Պարսից Կիւրոս թագաւորի իշխանութեան տակ:

Տրոյիա (Տրովադա), որ առաւել երևելի եղաւ իր պաշարումով ու առնուելով, քան մեծութեամբ, էր Միւսիոյ երկրամէջեան ծովի մօտ: Տևէր (1400) կոչվում է առաջին թագաւորը Տրոյիոյ: Պետք է, որ երկիրը իւր անուանը Տրովից առացած լինի, ինչպէս քաղաքը Ցղեոսից, որովհետև Տրոյիան Ցղեոն էլ էր կոչվում: Սորա աւերումն պատահեցաւ 1184 ին (1190) Յոյների ձեռքով:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ· ԿԻՒՐՈՍ

Պարսիս (Պարսկաստան) Մարաստանի հարաւումը մի լեռնոտ երկիր էր, որ բաժանվում էր Պարսից ծոցից սեպացեալ լեռներով: Այս երկիրը ոռոգանում է Արաքսէս գետը, որի մօտ էլ շինած էր Պերսեպոլիս մայրաքաղաքը: Պարսից ազգը, որ հնումն շատ երևելի եղաւ իր աշխարհակալութեամբ, էր ազգակից հին Զէնդ ազգին, թէ իր ծագումով և թէ կրօնով. ուստի և խիստ հեշտութեամբ խառնվեցաւ Մարաց հետ, ընդունելով բոլոր նորա թէ քաղաքական և թէ կրօնական կարգադրութիւնները և ծէսերը: Այս քաջ ազգը, որ սկզբումն միւս արիական ազգաց հետ միասին ընկաւ Ասորեստանցւոց և յետոյ Մարաց իշխանութեան տակ, բաժանվում էր

տան ցեղեր։ Սոցա չորսը լեռնաբնակ էին ու թա-
փառական կեանք էին վարում, երեքը դաշտաբնակ
ու բնակում էին Կուր և Արաքսէս գետերի բերրի
ու պտղաբեր հովիտներում և պարապում էին երկ-
րագործութեամբ ու պարտիզպանութեամբ։ Իսկ մը-
նացած երեք ցեղերը ազնիւներն էին։ Սոցանից էլ
ամէնից գերազանցը Պասարգադայ ցեղն էր, որի Աքե-
մենեան տոհմից Պարսից թագաւորներն էին, որոնց
ձեռնութեան ապացոյց են մինչև ցայժմ մնացած
աւերակները նոցա Պերսեպոլիս քաղաքի։ Այս աւե-
րակները ծածկած են արձանագրութիւններով, ո-
րոնք բևեռաձև նշաններով են գրած։ Այս երկերը
650 են՝ Քրիստոսի ծնունդից առաջ ընկաւ Մեդացի-
ների իշխանութեան տակ։ Այս վերջինների Աժդա-
հակ թագաւորը, ինչպէս Հերոդոտէս պատմում է,
տեսնում է երազ, որի մեկնութիւն են տալիս մո-
գերը, թէ նորա Մանդանէ աղջկան որդին պէտք է
իրան Մարաց թագաւորութիւնից զրկէ։ Ուստի տուեց
նրան կին Պարսիկների երևելի Պասարկադ ցեղի Կամ-
բիսէս իշխանին, որ շատ զգրեղ ու քաջ պատերազ-
մող էր, կարծելով, թէ այսպէս հեռու ու չքաւոր
երկիր գցելով իր աղջկան՝ կ'ազատվի իր կարծած
դժբաղդութիւնից։ Բայց երբ լսեց Աժդահակ, որ մի
տղայ է ծնել իր աղջիկը, առաւել ընկղմեցաւ մը-
տածմունքի մէջ, ու հրամայեց իւր պալատականա-
ներից մէկին՝ Արբակին սպանել երեխային։ Սա այս

գործի հետևանքից վախենալով, յանձնեց երեխայն մի հովիւի յայտնելով նրան թագաւորի կամքն էլ: Բայց հովիւը իւր կնոջ խնդրքին նայելով խնայեց երեխայի կեանքը և մեծացրեց նրան իւր որդու պէս: Ցասք տարից յետոյ իմացաւ Աժդահակ պատահմամբ երեխայի կենդանութիւնը, որի անունը Կիւրոս էին դրել, անմեղաս թողեց սորա անձն Մոգերի խորհուրդին հետևելով. միայն պատժեց Արբակէսի անհպատակութիւնը տմարդի և չար կատակութիւնով, նորա որդուն սպանել տալով: Կիւրոս, որ փոքր ժամանակ իւր մեծ հօր մօտ մնալից յետո գնաց իւր ծնողների տուն, երբ երիտասարդութեան հասակը հասաւ, թագուն իմացաւ Արբակէսից այն թշուառութիւնը, որից հպիւ ազատվեցաւ նորա մանկութիւնը: Կիւրոս, նոյնպէս Արբակէսից յորդորված, որ իւր որդու մահուան վրէժը ուզում էր հանել, և սորա խոստացած օգնութիւններից քաջալերած, ժողովեց լեռնականներից փոքրաթիւ, բայց քաջ զօրք, ոգևորեց սրանց իւր նպատակների համար ու գնաց պատերազմ: Արբակէս, որին թագաւորը անզգուշութեամբ յանձնել էր զօրքերի առաջնորդութիւնը, կռվում Պատարկաղայի մօտ անցաւ իւր Մեդացիների հետ Կիւրոսի կողմը և զօրքի ճնացորդը փախաւ: Երկրորդ կռվում Աժդահակ ինքը յաթվեցաւ 560 ին և գերի ընկաւ. բայց Կիւրոս էլի խնայեց նորա կեանքը:

Պարսատանին տիրելով չբաւականացաւ Կիւրոս, այլ միայն գրեց, Լիւդացիների հարուստ Կրեսոս թագաւորի դէմ պատերազմ երթալ։ Սա իւր վարժած զօրքերով, գանձերով և Դելֆիան պատգամախօսի դուշակութիւններով քաջալերած եկաւ նորա դէմ։ Բայց նորա ընտիր հեծելազօրքը Կիւրոսի խորամանկութիւնով ջարդուեցաւ և Կրեսոս իւր Սարդիկ մայրաքաղաքում ընկաւ յաղթողի ձեռքը 546 թն։ Կրեսոսի կեանքը ազատեց Սոլոնի անունը, որի յորդորիչ ու խնամուն խօսքը մեղմացրեց Պարսից թագաւորի սիրտը։ Արբակէսին խրկեց Կիւրոս Փոքր-Ասիայի Յոյները նուաճելու, որ նոյնպէս յաջողեցաւ։ Միայն Փոկէացիները նախապատերի համարձակութիւն առաւել թողնել իրանց բնակութիւնը, քան թէ Պարսիկներին հպատակել և դուան իրանց համար նոր հայրենիք ծովի միւս կողմում (հիմնեցին Մասսիլիա՝ այժմեան Մարսէյլ քաղաքը)։ Սրանից յետո դիմեց Կիւրոս Բաբելոնի վրայ, որի թագաւորը դաշնակից էր Կրեսոսին և յոյսը իւր քաղաքի պատերի ամրութեան վերայ էր դրել. բայց Կիւրոսը Եփրատին ուրիշ ընթացք տալով և այն ինչ Բաբելացիները անհոգութեամբ ուրախ էին ուտում, գինի տաշտով մտաւ քաղաք և վերջ դրեց այսպէս 538 թն Բաբելացի Քաղդէացիների թագաւորութեան։ Կիւրոս միշտ պատրաստ էր իւր իշխանութեան տակ եղող բազմաթիւ ազգերի սովորութիւնները ու ծէսերը և ինքն էլ հաղնվում էր և բնակվում Մեդա-

ցիներին դէմ։ Հրամայեց իր սերուբիան մէջ գրուած Հրէաներին դառնալ իրենց հայրենիք և պատուիրեց նրանցից յափշտակած սուրբերի կահեր ու զանձերը յետ դարձնել իրենց (Եզր. գլ. Ա.)։ Իր կեանքի վերջին օրերում ցանկացաւ Կիւրոս մին էլ փորձել իւր բաղդը պատերազմումը. ուստի գնաց զօրքով Մասսագետների (Մաղկիթաց) դէմ, որ մի քաջ թագաւորուհի ազգ էր Կասպից ծովի արևելեան կողմերում։ Սոցա իշխում էր Տոմիրիս անուանով թագուհին։ Կիւրոս խորամանկ ձևով գերի առաւ շատ թշնամիներ, որոնց մէջ էր թագուհու որդին էլ (Սպարգապիսես)։ Տոմիրիս ինքը չեկաւ խաղաղութիւն։ Բայց երբ Կիւրոս չհամաձայնեցաւ ու թագուհու որդուն, որ ինքը իրան սպանեց յետոյ, մօրը չդարձրեց, շատ զայրացած թագուհին ժողովեց իր բոլոր զօրքը և այնպիսի կռիւ տուեց, որպիսի երբէք, Հերոդոտի ասելով, բարբարոսները չէին տուած։ Պարսիկների զօրքի ընտիր մասը կորաւ. նոցա հետ Կիւրոս էլ 529։ Սորա կարած գլուխը գցել տուեց Տոմիրիս մի արիւնով լիք պարկի մէջ. ինչպէս տուաջուց սպառնացել էր։ Իսկ Քսենոփոնտ պատմում է, թէ Կիւրոս խաղաղութեամբ մեռաւ իւր մահճում։

ԿԱՄԲԻՍ· ԿԵՂԾ ՍՄԵՐԴԻՍ·

Կամբիւս, որ արիութեամբ նման էր իր հօրը· իսկ իմաստութեամբ ոչ, գարձուց աչքը Եգիպտոսի վերայ, որի Ամասիս թագաւորից զրկած էր համարում իւր անձը: Այս երկրի նուաճումն շատ հեշտութիւնով յաջողեցաւ, որովհետև, Պսամենիտի (Պսամենէս) զօրքերը (Ամասիս արդէն վախճանել էր) չնայելով վարձած Յոյների օգնութեան ջարդվեցան Պելուսիոնի մօտ 525 թն և Մեմփիսի առնելով կատարվեցաւ ողջ երկրի նուաճումն էլ: Ընդհակառակն շատ անցաւոր եղաւ Եթիոպիայի արշաւանքը և մեծ Ամմոնի տաճարի վերայ զրկած զօրքն էլ կորաւ Լիբիայի անապատում: Կամբիւս սատակ բարկացաւ այս դժբաղդութիւններից յետո Եգիպտացիների վերայ և նրանց տրամեցնելու համար սպանեց իւր ձեռքով նոցա սուրբ Ապիսին: Զինեցնց մինչև ամէնից երևելի Պարսիկներին էլ և հրամայեց ծածուկ իւր Շմերդ եղբօր, որի վերայ կասկածանք ունէր, թէ թագաւորութեան հետամուտ է լինում, զրկել կեանքից: Սա նա էր, որ միայն կարողացաւ լարել այն աղեղը, որ Եթիոպացիք խրկել էին Պարսիկների զօրութիւնը փորձելու համար: Դժբաղդութեամբ Կամբիւս լսեց մի քանի ժամանակից, որ մինչ Շմերդի անունով Պարսկաստանում թագաւոր է ընտրվել· ուստի և

շուտով ճանապարհ ընկաւ այնտեղ երթալու. բայց ճանապարհին մեռաւ Սիւրիայի Նիկատանա գիւղում 522 թիւ։ Այսպէս կեղծ Սմերդը հեշտութիւնով տիրեց աթոռին։ Սորա անունը իսկապէս Սպենդադաթ էր ու Պարթեթի մոգի եղբայրն էր։ Սա շատ նման է եղել սպանուած Սմերդին, և մոգերը շատ պաշտպանում էին նրան, որովհետև կամենում էին, որ վերատին հաստատուի Մեդացիների իշխանութիւնը։ Սկզբում խիստ հանդարտ էին Պարսիկները. բայց երբ տեսան, որ թագաւորը ոչ ոքին չէ երևում ու ամէն հրամանները մոգերի ձեռքով է տալիս, կասկածի ենթան և շուտ բացվեցաւ նորա խարեբայութիւնը։ Այն ժամանակ եօթն երևելի Պարսիկ իշխանները երդումով կապվեցան միմեանց հետ, մտան արքունի պալատը և սպանեցին աթոռի յափշտակչին 521 թիւ։

ԴԱՐԵՀ ՎՇՏԱՍՊԵԱՑ.

Որովհետև կամբիւս այր ժառանգ չէր թողել, վերոյիշեալ իշխանները համաձայնեցան իրանց միջից մէկին ընտրել թագաւոր և ձիապանի հնարքով ընտրվեցաւ Դարեհ Վշտասպեայ։ Սա իւր իմաստուն կառավարութեամբ (521—484), այդ ընտրութեան արժանի ցոյց տուեց իր անձը։ Սա բարեկարգութիւն հաստատեց Տէրութեան մէջ, բաժանեց այն քսան սատրապութիւններ, կարգի բերեց տուրքերը ու ամ-

բոցջ ուէրութեան մէջ կանգնաւոր սուրհանդակ հաս-
տատեց, որով ամէն բանէ հաւիրաւոր, մինչ որ իւր ընդ-
արձակ թագաւորութեան մէջ պատահում էր, շու-
տով տեսնում էր։ Շօշ (Բասրայի մօտ) էր իւր մեծ-
բաքաղաքը, բայց տարուան զանազան եղանակներին
բնակում էր Եկբատան ու Բաբելոնում էլ։ Սկզբում
պատերազմում էլ յաջողակ էր։ Հնդկաստանի մեծ
մասը հնազանդեցաւ նորա իշխանութեան և ճոխ
Բաբելոնը, որ ապստամբել էր, նուաճեց վերստին նորա
ձեռքը։ Ապագայում նորա արշաւանքը
Եւրոպայի Սկիւթացիների դէմ, որոնք Դանուբիոս
(Խարոս) գետի ու սեաւ ծովի (Եւքսինեան Պոնտոս)
հիւսիսային կողմում մինչև Ցանայիս գետը (Դոն)
բնակում էին։ Դանուբ գետը անցաւ Դարեհ ցոյներին
շինած կամրջով, որի պահպանութիւնը նոյնպէս
իրանց էր յանձնուած։ Սկիւթացիները քաշուեցան իրանց
ընդարձակ անապատները, և հպատակեցան նը-
շանները զրկելու տեղ, զրկեցին Դարեհին այնպիսի
ընծաներ, որոնք նրան մտածմունքի մէջ ղցեցին։ Վրա-
ստանն կռիւ չեղաւ, բայց Պարսիկների զօրքը, որ
700,000 էր, փոքր և յաճախակի արշաւանքներով,
պակասութիւններից ու հիւանդութիւններից թուլա-
նալ սկսաւ ու թիւն էլ պակասել. ուստի բաղ-
դաւոր դէպք է համարւում իրանց մնացորդները, որ
ապահովութեամբ անցան Դանուբի վերայ շի-
նած կամուրջը։ Միլտիադէս աթենացին խորհուրդ

տուեց Յոյներին, որ կամուրջը քանդեն ու թաղա-
ւորին յանձնեն իւր բաղդին։ Այս բանին ընդէմ կե-
ցաւ Հիսիկիոս Միլետացին։ Այսպան Ջանքի ու աշ-
խատանքի վարձ եղաւ Դարեհին միայն այն, որ Բը-
բակիոց հարաւային մասը և Մակեդոնիան, ուր իշ-
խում էր Ամինտաս Ա. այն ժամանակ, հարկատու
դառան նրան։

Մեծ հեռանքներ ունեցաւ փոքր Ասիոյ գաղ-
թականն Յոյների ապստամբութիւնը։ Սոքա զոհ չը-
լինելով Պարսիկների իշխանութիւնից ապաստան էին
մի յարմար պատահմանքի, որ ապստամբեն։ Այս
ժամանակներս Արիստագորաս, Միլետի տիրակալը
դատապարտեցաւ վճարելու այն ծախսը, որ արել էր
Նաքսոս կղզին դէմ արած անյաջող արշաւանքի հա-
մար, բայց որովհետև նա չէր կարող այս պարտքը
հատուցանել. ուստի իւր անձը ազատելու համար
ապստամբեցուց Յոյները։ Արիստագորաս յոյսը դրել
էր իր հօրեղբօր՝ Հիսիկիոսի վերայ, որ մեծ պա-
տիւ ունէր Դարեհի առջև և անբաւական էր շատ
նոյնպէս իրան շօշ կանչելուն համար, քան որում
Պարսիկ մեծամեծները կասկած ունէին նորա վե-
րայ։ Եւրոպայի Յոյներուն էլ օգնութիւն կանչեց
Արիստագորաս, բայց միայն Աթենացիներից և Երետ-
րիացիներից ստացաւ նաւատորմիղ։ Ջնայելով՝ ի-
բանց փոքրաթիւ լինելուն Յոյները գնացին առաջ
մինչև Սարդիկ քաղաքը, որ մոխիր դարձուցին 500

ին։ Շուտ վրայ հասան Պարսիկներ մեծ զօրութեամբ, ջարդեցին Յոյների յետ դառնող զօրքը Եփեսոսի մօտ և յետոյ, երբ Ամենացիները իրանց հայրենիք դարձան, ջնջեցին նոյնպէս Յոնիայի նաւատորմիղը Լադա կղզի մօտ։ Միլետը առնվեցաւ և կենդանի մնացած բնակիչները գերի գնացին 496 թն խորին Աֆրա. իսկ միւս քաղաքները և կղզիները իրանք հրապարակեցան։ Արիստագորաս և Հիստիէոս ապստամբեցան։ Դարեհ ստատիկ բարկացած Եւրոպայի Յոյների վերայ, մանաւանդ Ամենացիների, այս ապստամբութեանը օգնական լինելու համար, վճռեց պատերազմով գնալ նոցա երկիրը, այսպէս և սկսաւ այն պատերազմները, որոնք Պարսիկներին մեծ փառաներ տուին ու վերջապէս նոցա թագաւորութեան վախճանը հետևեցուցին։ Այս անցքերը, որովհետև վերաբերում են իսկապէս Յունաստանի ու Մակեդոնիայի պատմութեանց, մենք այնտեղ կպատմենք նրանց մանրամասնապար։

ԱՐԵՒՄՈՒՏՔ·

ՅՈՒՆԱՍՏԱՆ· ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ·

Յունաստանը ծածկած է բոլորովին լեռներով և բլուրներով, որոնք բոլոր երկիրը բաժանում են մասեր, միմեանցից ամենևին զատած, գաւառներ, որոնց

ամէն մէկը ընդունակ է կազմելու փոքրիկ տէրութիւն. թիւնչ որ և էր իսկապէս հին դարերուն. միայն հիւսիսային կողմից կապած էր ցամաքով Հէմոսի (Բալքանեան) թերակղզիի հետ, որի հարաւային մասն էր բաղկացնում իւրն. իսկ արևելքից, հարաւից և արևմուտքից պատած էր Միջերկրական ծովով, որտեղ տեղ ափերի մօտ կազմում էր շատ ծոցեր, խորշեր և նաւահանգիստներ (Ծոց Պարոնեան, Արգոլիդայ, Լակոնիոյ, Կորնթոսի, Ամբրակիոյ):

Յունաստան բաղկանում էր գլխաւորապէս երեք գլխաւոր մասներից՝ այսինքն Հիւսիսային Յունաստանից, որ Իլլերիոյ և Մակեդոնիոյ (Գամբունեան լերինք, Օլիմպոս) սահմաններից ձգվում էր մինչև Լատայի գօտին (Կապան Թերմոպիլէ) և ամբրակեան ծոցը. Միջին Յունաստանից (որ և Եղլադա), որ վերոյիշեալ սահմանից տարածվում էր մինչև Կորնթեան Իսթմոսը և վերջապէս հարաւային թերակղզիից կամ Պելոպոնեսից: Հիւսիսային Յունաստանը երկու գաւառ էր բաժանվում Թեսսալիա և Եպիրոս, որոնք մին մինից Պինոս լեռներով են բաժանած, երկուսն էլ ընդարձակ և բերրի. իսկ առաջինը անուանի տեղ է բռնում Յունաստանի նախնական պատմութեան մէջ: Էպիրոսի մէջ երևելի էր Դոդոնա քաղաքը իւր պատգամախօսով. իսկ Թեսալիոյ մէջ էին Յոլկոս, Փերէ և Փարսալոս քաղաքները: Եղադան արևմուտքից

գնաց արևելք ձգվում էին յեռաոգոյ գաւառները, Ա-խառնանիա, Լուսիա, Դորիս, արևելեան և արևմտեան Լոկրիս, Փոկիս, Բեոտիա, Մեգարիս և վերջապէս Ատտիկա: Այս վերջինը, ուր Հիմեռասոս և Պենտելիկոն լեռներն են և որը ուռգանում են Դիպասոս և Կեփիսասոս գետերը, իւր Ա թ է ն ք մայրաքաղաքով էր կենդրոն Յունաց բարօրութեան և գործունէութեան: Բ ե ո վ տ ի ա ում առաւել արժանայիշատակ են Թ ե բ է և Պլատէա քաղաքները, Փոկիսում երևելի է պատգամախօսի քաղաքը Դելփիս և Պարնասոս լեռը, արևմտեան Լոկրիսում Նաւպակտոս: Ակառնանիոյ և Եաոլիոյ մէջ վազում է Աքելոս, Յունաստանի ամենից մեծ գետը: Պելոպանեսում ութը գաւառներ կային. Ա ր գ ի ա մէջ անցում և շուրջանակի, Կ ո ր ն թ ո ս երևելի համանուն ծովեզերեայ քաղաքով. Ա ր գ ո լ ի ս (Արգոս և Միկէնք քաղաքներով), Լ ա կ ո ն ի ա (Սպարտա Եւրոտաս գետ մօտ) Մ ե ս ս ե ն ի ա, Է լ ի ս (Ոլեմպիա Ալֆէոս գետ մօտ) Ա ք ա յ ի ա և Մ ի կ ի ո ն: Կղզիներից երևելի են արևմտեան եզերքում Կ ո ր կ ի ր ա, Կ ե փ ա լ ե ն ի ա, Զ ա կ ի ն թ ո ս, Իթ ա կէ, արևելքում Եւ բ է ա (Էր ե տ ր ի ա քաղաքով), Է գ ի ն ա, Ս ա լ ա մ ի ն ա և Կիւկղադներից՝ Անդրոս, Դ ե լ ո ս, Պ ա ր ո ս, Նաքսոս և Կ ր ե տ է (Իգա լեռնով):

ՑՈՒՆԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ։

Սկզբում բնակում էր այս տեղ Պելասգեանց ազգը, որ յետոյ, երբ արդէն բաւական լուսաւորութեան հասել էր, փոխեց իւր անունը Հելլենաց անուան հետ։ Հելլենաց ծագումն շատ մութ է. շատերը կարծում են, թէ սրա էին Պելասգների մի քաջ ցեղը, որոնք ջնջելով առաջման քուրմերի իշխանութիւնը նուաճեց բոլոր Պելասգեան ցեղերուն և խառնուելով նոցա հետ տուեց նրանց Հելլեն անունը։ Իրանց լուսաւորութիւնը սրա ստացան Ասիայից և Աիրիկէից եկած գաղթականներից։ Փիւնիկեցիները Կադմոսի առաջնորդութեամբ 1550 թերէի կազմէա ամրոցը հիմնեցին և իրանց հետ բերին տառերն էլ. Եգիպտացիները գրեթէ մի և նոյն ժամանակները Կեկրոպսի առաջնորդութեամբ Աթէնքի Կեկրոպիա ամրոցը շինեցին և Ատտիկայի բնակիչներին ձիթենի տնկել և երկրագործութիւն սովորեցուցին։ Արգոսի հիմնարկութիւնը մօտ 1500 ին Եգիպտացի Ցանաուսին են վերաբերում, ինչպէս Փռիւգացի Պելոպսին լուսաւորութիւնը այն թերահզգուշ, որ նորա անունով Պելոպոնեսս կոչվեցաւ։ Հիւսիսից էլ պատահեցան գաղթականութիւններ։ Հին աւանդութիւնը պատմում է, թէ Դևկալիոն, իւր նախկին բնակութիւնից՝ Թեսալիայից ջրհեղեղով աքսորած լինելով,

արդէն 1500 ից առաջ մանում է հարաւային Յունաստան: Սորա Հելլէն որդիից դուրս է գալիս ազգի անունը, և նորա որդիներից և թոռներից ծագում են Հելլենաց չորս ցեղերը՝ այն է Դորոսից՝ Դորիացիք, Եւողոսից Եւոլացիք, որոնք առաւելապէս Բէոտիա էին բնակում և Քսութի երկու որդիներից Յոնից և Աքէոսից, Յոնիացիք, որոնք Ատտիկայում և կղզիների վերայ էին բնակում և Աքայեցիք, որոնք Պելոպոննէսը ունէին բռնած: Այս զանազան ազգերից ծագած Հելլէնները (Յոյնք), գործունեայ ոգով իւրացուցին իրանց հասած գիտութիւնները ու արհեստները. կատարելագործեցին նրանց ու փառաւորեցին իրանց անունը իբրև ամէնից բարակամիտ և արուեստագէտ ազգ հին դարերի:

ԱՐԳՈՆԱՒՈՐԴՆԵՐԸ.

Երկրի ծովային վաճառականութեան համար յարմար դրութիւնը և նաւաշինութեան համար գերազանց անտառները, որով ծածկած էին Յունաստանի լեռները, լաւ իմացան Յոյները 'ի գործ դնելու: Ուրիշ առաջին ծովագնաց ազգերի պէս Յոյներն էլ սկսան ուրիշների վաճառականութիւնը խանգարելով, 'այսինքն, ծովային աւազակութիւն անել. բայց շուտով սկսան իրանք էլ վաճառականութեան համար ճանապարհորդութիւններ անել, որոնց հետ կապ-

ված էր և երկիրների տիրելու նպատակը: Այսպիսի էր Արգոնաւորդների ճանապարհորդութիւնը 1250 թն: Անցկիւղ արկածախնդիրները, Յասոնի առաջնորդութեամբ, նաւան Արգոնաւը և նաւեցին Թեսալիոյ Եօլքոս նաւահանգստից Եգէեան ծովի, Հելլեսպոնտոսի, Պրոպոնտոսի և Վոսպորի վրայով մինչև 'ի արևելեան եզերքը սև ծովի Կողքիսի երկիրը, այժմեան Պոտիի երկիրը, ուր անցնում է Փասիս (Ռիոն) գետը: Այսանցից շատ վտանգներից և թշուառութիւններից յետո, փառքով ու գանձերով լիք, դարձան յաջողութեամբ իրանց հայրենիքը (ոսկի գեղմն, Այետաս, Մեդէա):

ՅՈՅՆԵՐԻ ԴԻՑԱԶՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ.

Յոյների դիւցազնական ժամանակը երեքտասանեւորդ դարն էր: Երբ մինչև ցայժմ անճանապարհ անտառներով ու ճահիճներով ծածկած երկրում փոքր առ փոքր կանգնեցան քաղաքներ, որոնք պէտք է մին մինի հետ կապակցութիւն, դաշնակցութիւն ու վաճառականութիւն անէին, կարևոր էր աւազակների և վայրի գազանների հետ մարտնչել, ճանապարհներ բանալ, ճահիճները չորացնել և գետերին սահման դնել: Յետագայները, երախտագիտութիւններից շարժած, այս ամբողջ դարի գործքերը մի քանիսին միայն ընծայելով անհաւասալի ու զար-

մանալի արին նրանց աստվածությամբ և բանաստեղծները առաջ մեծացուցին նրանց Աստուածների որդիք կոչելով և պատճառ տուին նրանց պաշտելու։ Իրրև այսպիսի գիւցազներ յայտնի են մեզ պատմութենից՝ Հերակլէս, Թեսէոս, Կաստոր, Պոլլուքս, Պերսէոս և այլն։ Մանաւանդ առաջինը, որին առասպելը խիստ մեծացնում է և որի վերայ տասն երկու երևելի գործքեր է պատմում։ Մտաց լուսաւորութեան մասին էլ խիստ երևելի ուրարեր էր այս դարը։ Փիլիսիկեցիների ու Եգիպտացիների կուռքերը նրբազգաց Յոյների համար չէին կարող պաշտելու առարկաներ լինել։ Սոքա իրանց Աստուածներուն մարդկային կերպարանք տվին. միայն առաջ ճոխ ու փառաւոր։ Սոքա երևակայում էին, թէ երկինքը, երկիրը, նոյնպէս սորա մէջը ու ծովի խորքը լիք են զանազան կարգի աստուածներով։ Սոքա են Զևս (Հռովմայեց. Յուպիտեր՝ մեր Արամազդը) Պոսիդոն (Նեպտուն), Արէս (Մարս), Պլուտոն, Դեմետր (Ցերես), Ապողոն, Դիանա (Անահիտ Հայոց), Բաքոս։ Յաւերժահարսները, փաւոնները, այծամարդերը և այլն, որոնք անմիջապէս երբեմն բարեկամ, երբեմն թշնամի մարդերի հետ էին երևակայում և աշխատում էին ազօթքով, պահով և ուշադրութիւններով նրանցը հաճոյանալ։ Բանաստեղծները, որոնք մի և նոյն ժամանակ երգիչներ ու երաժիշտներ էին, Որփէոս, Միւսէոս, Լինոս և այլն հնարեցին գիցաբանու-

թիւնը, որի վերայ հիմնվեցաւ յետոյ ողջ ապագայ կրօնը ազգի։ Ապագայն իմանալու ցանկութիւնը պատճառ եղաւ մի առանձին հոգևոր կարգադրութեան, այսինքն, պատգամախօսների, որոնցից առաջ Դոդոնայինը Եպիրոսում, յետոյ Դելփիին ամէնից երևելի եղան։

ՏՐՈՎԱԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ։

Այն դարի վերջին պատահում է (1194—1184 Տրովադական պատերազմը։ Սա էր առաջին ընդհանուր պատերազմը Յոյների։ Արանով, թէև զանազան թագաւորութիւններ էին բաժանած, յայտնեցին նոքա իրանց իրրև մի ազգի անդամներ և ամէնքն էլ ուրախանում էին տացած փառքի վերայ։ Այս պատերազմի պատճառը եղաւ Տրոյիոյ թագաւորի Պրիամոսի որդին Պարիսը, որ Սպարտացւոց Մենելաւոս թագաւորի կնոջ Հելենէին յափշտակեց։ Այս գրկանքի վրէժը խնդրելու համար մեկաւորեցան Աքիսի նաւատանդամում Միկէնքի Ագամեմնոն թագաւորի առաջնորդութեամբ Յոյների իշխանները և հազար երկու հարիւր նաւերով և դուցէ հարիւր հազար պատերազմողներով հասան Տրոյիոյ ծովեզերքը։ Տրոյիա քաղաքը պատած գոլով ամուր պատերով և Պրիամոսի մեծ որդու Հեկտորի քաջութեամբ պաշտպանած, որին և օգնութիւն եկան շատ

ասիացի իշխանների զօրքեր, անմատչելի եղաւ անհրմուտ Ցոյների պաշարման արհեստին: Բացի սրանից ծագեցաւ վէճ էլ Ցոյն զօրավարների և Թեսսալացի իշխանի՝ Աքիլլէսի, այն ժամանակի ամենաքաջ պատերազմողի, մէջ, որի հետևանքը եղաւ, որ Աքիլլէս չկամեցաւ էլ մասնակից լինել պատերազմին: Ուստի և պատերազմը տևեց իններ տարի և պատահում էին միայն թոյլ ուրշաւանքներ, փոքր կռիւներ և մենամարտութիւններ, ուր ըստ մեծի մասին քաջ Ցոյները յաղթող էին մնում: Ցոյները միանգամայն սկսան լքանել և կորուսին իրանց յոյսը: Պատահեցաւ մի անգամ, որ Տրովադացիները արշաւեցին Ցոյների վերայ և քշեցին նրանց մինչև նաւերը, ուստի սոքա նեղ դրութեան մէջ գոլով խնդրեցին Աքիլլէսին, որ օգնէ իրանց: Սա թէև ինքը չգնաց, բայց խրկեց իւր բարեկամին Պատրոկլին, որնոր թեպէտ քշեց թշնամիներուն, բայց ինքն էլ զոհ եղաւ Հեկտորի զէնքին: Աքիլլէս իւր բարեկամի մահուան վրէժը հանելու համար վերստին մտաւ պատերազմ, սպանեց Հեկտորին, բայց ինքն էլ յետոյ սպանվեցաւ Պարիսի նետով. ուստի պատերազմի վախճանը վերստին տարակուսելի դառաւ: Վերջապէս ինչ որ զօրութեամբ չյաջողեցաւ, խորամանկութեամբ վերջացաւ, որովհետև Ոդիսևս, Իթակէի թագաւորը, շինել տուեց մի մեծ փայտէ ձի, որի փորում գինած մարդիկ նստացրեց ու ընծայեց Տրովադացիներին և իրանք Ցոյ-

ներբը նստելով նաւերը, հեռացան փոքր ինչ ծովեզերքից, իբրև թէ էլ չեն կամենում պատերազմել։ Երբ Տրոյացիները փայտէ ձին ներս առին քաղաքի մէջ, գիշերը դուրս եկան նորա փորում պահված զինուորները ու բացին քաղաքի դռները. ցոյները մտան ներս ու կրակ տուին ողջ քաղաքը. այսպէս առնվեցաւ Տրոյան, տասնամեայ պաշարումից յետո։ Ցոյներն էլ ոչինչ շահ չտեսան իրանց յաղթութիւնից, ըստ որում շատերը հայրենիք դառնալու ժամանակ կամ զոհ եղան ծովի ալիքներին կամ մեռան անբերրիւ, անապատ ծովեզերքներում, միւսներն էլ թէև շատ թշուառութիւններից յետո, դարձան անվնաս իրանց հայրենիք. բայց շատ բաներ իրանց բազմամեայ բացակայութեամբ փոխված տեսան և ոչինչ ուրախութիւն չգտան։ Բանաստեղծութիւնը շահվեցաւ այս հարուստ նիւթից էլ։ Հոմերոս, որ կենում էր մօտ 900 ին, առաջինն եղաւ, որ այս Տրոյիոյ պատերազմը իւր Եղիական կոչված բանաստեղծութեան նիւթ շինեց և իւր երկրորդ բանաստեղծութեան Ոդիսական մէջ նկարագրում է Ոդիսևսի արկածքներով լի դարձը իւր հայրենիք, տասնամեայ բացակայութիւնից յետո։ Տրոյացիների Էնէաս իշխանի վերայ, որ Անքիսէսի որդին էր, պատմում են Հոմմայեցիները, թէ փախել է Իտալիա և իրանց ազգի ցեղապետն է։

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐ.

Տրոյից առերուձեից ուխտուն տարի յետ նուաճեցին Դորիացիները Տէմէնոս, Կրեսփոնտէս և Արիստոդեմոս Հերակլեանների առաջնորդութեամբ Պելոպոնէսի մեծ մասն, ուր մինչև ցայժմ Աքայացիները ու Յոնիացիներն էին բնակում, և հիմնեցին չորս թագաւորութիւններ. Մեսսենիա, Սպարտա, Արգոս և Կորնթոս և հինգերորդը Էլիս մասն ընկաւ նոցա հետ եկող Եառլացիներին, որոնց առաջնորդն Աքսիլն էր: Աքայացիները բուռ մեծի մասին հպատակեցին նրանց, բայց նոցա մի մասը Ագամեմնոնի Տիզամենոս թոռան առաջնորդութեամբ գնաց հիւսիսային ծովեզերքը թերակղզու, աքսորեց այնտեղից Յոնիացիներուն, ու հիմնեց տասներկու հասարակութիւններ: Այս պատճառով էլ Պելոպոնէսոսի հիւսիսային մասն կոչվեցաւ Աքայիա: Յոնիացիները ապաստան գտան իրանց Ատտիկայում: Այս տեղ էլ մնան Դորիացիները. բայց Կոդրոս թագաւորը զոհելով իւր անձը, ազատեց իւր հայրենիքը 1068: Այս շարժողութիւններից ծագեցան այն տեղափոխութիւնները, որոնք փոքր առ փոքր մերձակայ և հեռակայ ծովեզերքները ծածկեցին Յոյն գաղթականներով: Ամենից մօտ փոքր Ասիան էր: Այստեղ հիմնեցին Եառլացիները Կիւմէ, Զմիւռնա և Միլ-

տեղինէ (Լեսբոսի վերայ)։ Փոքր ժամանակից Յունացիները շինեցին Միլետոն և Եփեսոս ու բնակեցան Սամոս և Քիոս կղզիներումն էլ։ Սոցանից ծագեցան Հոմերոս և Անակրէոն բանաստեղծներ, առաջին իմաստասէրները Թալէս և Պիթագորաս, և նախկին պատմագիրները։ Վերջապէս տիրեցին Դորիացիները Կարիայի և հիմնեցին Ալիկառնասոս և Կնիդոս և տիրեցին Հռոդոս ու Քոս կղզիներին։ Մասամբ այստեղից, մասամբ մայր երկրից գնացին ուրիշ գաղթականներ էլ և հիմնեցին Բիւզանդիոն և Կիւզիկոն Պրոպոնդէսի մօտ (Մարմառ ծով), Հերակլէա, Սինոպէ և Տրապիզոն Եւքսինեան պոնտոսի մօտ (սև ծով) Յանայիս Դոնուսիս գետի բերանի մօտ, Օլբիա Հիւպանիս և Բորիսթենէս գետերի մէջ (Բուգ և Դնեպր), Պանտիկապէոն դաւրիկեան Քերսոնէսում (Խոխմ)։ Այս ժամանակներում բուն Յունաստանումն էլ պատահեցաւ մեծ փոփոխութիւն. Դորիացի թագաւորութիւնները — բացի Սպարտայից, ուր երկու թագաւորներ էին տիրում, փոխվեցան հարստապետական հասարակապետութիւններ։ Այս եղաւ պատճառ նոր տեղափոխութիւնների և հիմնվեցան Սիրակուսա, Ակրագանտ և Զանգլէաս (որ յետոյ Մեսսանա անուանվեցաւ) Սիկիլիաում, Տարենտոն, Սիբարիս, Կումա, Կրոտոն, Նէապօլիս, Հռեկիոն Ստորին Իտալիաում։ Սակուռնա Սպանիաում, Կիրենէ Հիւսիսային Աֆրիկէի ծովեզերքում, Կրետէ կղզու դէմուդէմ։ Որքա

ամէնքը ծաղկեցան վաճառականութեամբ և ձեռագործութեամբ և տարածեցին ցունաց լուսաւորութիւնը և լեզուն ըստ մեծի մասին դեռ վայրենի բնիկ ազգերի մէջ։

ՍՊԱՐՏԱ.

Այսպէս, երբ հին սովորութիւնները փոխվեցան, սկսաւ օրինաց պակասութիւնն էլ յայտնի երևիլ, մարդիկ, որոնք թագաւորութիւնների հասարակապետութիւն փոխվելով էլ իրանց վերայ իշխող չունէին, պէտք է օրէնքով պարփակվէին։ Ամէնից վաղ մօտ 1300 ին կրետէ կղզին ստացաւ օրէնքներ իր Մինոս թագաւորից։ Ապա օրէնատու եղան Լիկուրգոս Սպարտաում, Սոլոն Աթէնքում, Քարոնդաս և Զալևկոս ստորին Իտալիոյ յոյն գաղթական քաղաքներում։ Ամէնից առաջ արժանայիշատակներն են Լիկուրգոսի և Սոլոնի օրէնքները։ Լիկուրգոսի կեանքը և գործքերը (գուցէ մօտ 888) առասպելախառն են։ Ա՛ն հասարակ Սպարտացիների ողջ կառավարութեան ձևը նրան են վերաբերում։ Սա Սպարտայի երկու թագաւորների հետ, որոնք ծագում էին Ախտոդէմի երկու որդիներից, նշանակեց ծերերի ժողով էլ քսան ութը հոգիից, որոնք մինչև մահ ընտրվում էին և առանց որոնց խորհուրդի թագաւորները ոչինչ չէին կարող անել։ Կարգեց ազգային ժողով էլ ընդհա-

նուբ վճիռ տալու համար և իրաւունք տուեց նրան թագաւորների և ծերակոյտի առաջարկութիւնները ընդունելու և մերժելու: Սոցա հետ մի քանի ժամանակից յայտնվեցան Եփորներ, որոնք ամէն տարի ընտրվում էին ազգից: Սոքա, որոնց պաշտօնը օրինաց պահպանութեան վերայ հսկել էր, փոքր առ փոքր մեծ իշխանութիւն ստացան Սպարտայի մէջ, մինչև թագաւորների վերայ անգամ: Ժողով մտնել կարող էին միայն բուն Սպարտացիները, այսինքն, յեռապատները այն Դորիացիների, որոնք նուաճել էին Լակոնիան, իսկ Աքայացի բնակիչները երկրի (Պերիօկ), որոնք քաղաքների մեծ մասին տիրում էին, առանձնապես փոքր իրաւունքներ ունէին: Մանաւանդ խիստ դժբաղդ և գրեթէ ամենևին առանց իրաւունքի էին Հելոտներ՝ սարտաւիները, որոնց հետ մեծ խստութեամբ էին վարվում:

Երկրորդ երևելի օրէնքը վերաբերում էր երկրին: Ողջ երկիրը հաւասար մասներ բաժանեց, որոնցից 9000 ը Սպարտացիներին հասաւ և 30,000 Պերիօկներին (բուն բնակիչներին): Այս ժառանգական էր. և ոչ ոք չէր համարձակում ծախել կամ բաժանել նրան: Արանով ամէն քաղաքացի իւր՝ պիտոյքը կարող էր լցնել և ծագեցաւ ստացուածների հաւասարութիւն նոցա մէջ: Լիկուրգոս արգելեց Սպարտացիներին ոսկու մետաղներից կարած փողերի գործածութիւնը և հանապազօրեայ գործածութեան համար կոպեց

երկաթէ դրամներ։ Բոլոր քաղաքացիներին բարեխառն կեանք վարել տալու համար, նշանակեց հասարակաց սեղան, ուր նոքա գտնում էին միայն ամէնից հասարակ կերակուրը, այսինքն, սեւ թան։ Լիկուրգոս, նոյնպէս օտարների հետ կապակցութիւնն ֆնասակար կարծելով, արգելեց այն բոլորովին։ Առանձնապէս հոգս էին տանում Սպարտացիք տղայոց կրթութեան վերայ։ Արանց, երբ եօթը տարեկան դառնում էին, առնում էին ծնողքերից և յանձնում էին հասարակաց վարժապետներին, որ կրթեն նրանց։ Սոքա պէտք է զինուորներ կրթվէին. ուստի դցում էին նրանց մեծ չարեաց մէջ և սորվեցնում էին նրանց տանել ամէն չարքաշութեան։ Նոքա պէտք է սորվէին համբերել քաղցի, ծարաւի, տօթի և ցրտի նեղութեան ու ցաւի, մարձնավարժութեան մէջ մեծ յաջողակութիւն և փութութիւն ստանալ, ծերութիւնը պատուել, քիչ և ճշմարիտը ամէնի առաջև խօսել։ Լիկուգոսք մեռաւ օտար երկրում։ Սա գնալու ժամանակը խոստումն առաւ իր երկրակիցներից, որ առանց նորա ոչինչ չփոխեն օրէնքներից։

ՄԵՍՍԵՆԻՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Սպարտացիների պատերազմական արհեստի ու քաջութեան առաջին փորձը Մեսսենացիները առին։ Թէև մի ցեղից էին սոքա. բայց մանաւոր կռիւ-

ները կամ գուցէ Մեսենացիներին ընկած երկրի բերրի լինելը գրգռեցին Սպարտացիների թշնամութիւնը: Յանկարծակի Սպարտացիները 742 թն յարձակեցան Մեսենացիների վերայ, որոնք խիստ քաջ պաշտպանեցին իրանց. բայց որովհետև բազմը անցաւ թշնամեաց կողմ, միաւորվեցան Մեսենացիք և գնացին անմատչելի Իթոմոս լերան գլուխ իրանց Արիստոդեմոս թագաւորի առաջնորդութեամբ և երկար ժամանակ պաշտպանեցին իրանց այնտեղ: Երբ Սպարտացիք նոցանից առաջ կառարեցին Դելփու պատգամախօսի պատուէրը, Արիստոդեմոս յուսահատած ապանեց ինքը իրան: Մեսենացիք 724 թն խոնարհվեցան այն պայմանով, որ ամէն տարի իրանց երկրի բերքի կէսը Սպարտա խրկեն: Երեսուն թիւնը տարիից յետոյ նորից փորձեցին Մեսենացիք պատերազմով ազատվել այս ամօթալից պայմանից: Քաջ Արիստոմենէսի առաջնորդութեամբ, որի գործքերը հաւատարիլ կարող են հին դիւցազանց գործքերին, և ուրիշ Պելոպոնեսացիների օգնութեամբ յաղթեցին սկզբում Սպարտացիներին: Բայց յետոյ առքա Տիրտէոս Աթենացու պատերազմական երգերովը ոգևորուած և Արկադացիների գաւառմանութեամբ զօրացած ստիպեցին իրանց թշնամիներուն Իրա ամրոցը քաշվել, որ մի լերան գլխին էր: Այս էլ սաստիկ յարձակումով առնվեցաւ և Մեսենացիների մէկ մասը անցաւ թշնամիների բանակի միջով ու գաղթեց Սիկիլիոյ

Զանկէաս քաղաքը, որոնք այնուհետև նոցա անունով Մեսենա կոչվեցաւ։ Իրանց հայրենիքում ճեռացողները Հելոնեք գառան և նոցա բոլոր երկիրը բաժանեցին իրանց մէջ յաղթողները 668 ին։ Սպարտացիք սովորեցին իրանց զօրութեամբ Արկադացիներուն էլ հնազանդել իրանց և ճանաչել Սպարտան գլխաւոր տէրութիւն և վերջապէս հաստատեցին թագաւորական ցեղերը Կորնթոսում, Սիկիոնում և ուրիշ քաղաքներում Պելոպոնեսի, ուր առաջ ազգն էր կառավարում։ Այս ժամանակից Սպարտա գառաւ առաջին թագաւորութիւնը Պելոպոնեսում և մեծ ազդեցութիւն ունէր բոլոր Յունաստանի վերայ (Հեկեմոնիա)։

ԱԹԷՆՔ.

Ամենեքին հակառակ Սպարտացիներին էին թէ քնութեամբ և թէ կեանքի եղանակով Աթենացիները։ Յանիացիների ցեղից լինելով, որոնց բարքը առաւել քաղցր էր, այնպիսի սիրայքներ ունէին սոքա և այնպիսի գործքերով պարապում էին. որոնցից ամենեքին հեռի էին կենում դորիացիներ։ Այն ինչ Սպարտա պատած էր ցամաքով, Աթէնքի ծովեզերեայ գրութիւնը, որ Սարոնական ծոցի մօտ էր, ուր երեք նաւահանգիստներ կային, կարծես, հրաւիրում էր Աթենացիներուն պարապել նաւագնացութեամբ ու ծովային վաճառականութեամբ։ Ուստի

խիստ կանուխ սկսան նոքա մեծ կապակցութիւն ունենալ թէ մերձակայ և թէ հեռաւոր ազգերի հետ և ստացան ոգւոյ կենդանութիւն ու լեզուի և մտաց արուեստութեան փութութիւն և յաջողութիւն, որի մէջ իրանցից գերազանց էին նոցա փոքր ասիացի ցեղակիցները։ Ամենացւոց ուսումնասիրութիւնը ու գիրաւ ըմբռնող մտքերը, շուտով ոգևորվելը ամէն գեղեցիկ և ընտիր բանի համար, հաստատին սրանց հին դարերում արհեստների ու գիտութեանց մէջ ամենից բարձր աստիճանին։ Ամէնքի պատմութիւնը սկսում է Էգէոս թագաւորի որդուց՝ Թէսէոսից, (1300 ու 1200 ի մէջերում), որ մի քանի դիւցազնական ճանապարհորդութիւններ անելից յետո յաջորդեց իւր հօր։ Կեկրոպիա ամրոցի շուրջ կողմի 12 փոքրիկ աւանները միաւորեց, մի քաղաք շինեց ու նշանակեց այն կառավարութեան տեղ։ Ատտիկայի բնակիչներուն, որոնք չորս ցեղ էին բաժանվում, Թէսէոս, նոցա կեանքի եղանակին նայելով, բաժանեց ազնուականների դաս, երկրագործների և արհեստաւորների դասեր. նշանակեց Արէոպագոսի բարձրագոյն դատարանը. բայց վերջապէս անբաւական մնալով մի քանի ընդդիմախօսութեանց համար, որոնց հանդիպում էր նա կարգադրութիւններ անելիս, գնաց օտար երկիր և մեռաւ այնտեղ։ Սորա յաջորդներից ամէնից արժանայիշատակը է Կոդրոս, որ Դորիացիների յարձակումից 1068 ին

ազատեց իր տէրութիւնը և ազգը, զոհելով իր անձը։ Աթենացիք յայտնեցին, թէ „ոչ ոք չէ արժանի այս-պիսի ազնիւ և ընտիր մարդուն յաջորդել“, ուստի թագաւորութիւնը վերջացրին և կառավարութիւնը յանձնեցին Կոդրոսի ցեղից ընտրած մի Արխոնի, որի իշխանութիւնը մինչև իր մահն էր։ 752 թից սկսած տասն տարուան համար միայն սկսան ընտրել արխոններ և վերջապէս 682 թից ամէն տարի ինն արխոններ էին ընտրում ազնիւ ցեղերից։ Շուտով այս կերպի կառավարութեան մէջ էլ օրինաց պակասութիւնը զգալի լինել սկսաւ։ Այն օրէնքները, որոնք Դրակոն 622 ին գրեց, անգործածելի էին իրանց խստութեան պատճառով՝ և երկպառակութիւնը օրից օր աւելի տիրում էր երկրին. ուստի վերջապէս համաձայնեցան Աթենացիք մի իմաստուն և շատ երկիրներ ճանապարհորդութիւն արած մարդու, որի անունը Սոլոն էր, յանձնել (594 ին), որ օրէնքներ գրէ նոցա համար։

ՍՈԼՈՆԻ ՕՐԷՆՔՆԵՐԸ.

Սոլոն բոլոր Դրակոնի օրէնքները վերցրեց. միայն մարդասպանաց դէմ գրած օրէնքները թողեց և փոքի գինը բարձրացնելով թեթևութիւն տուեց ժողովրդեան այն խեղճ մասին, որ պարտքերի մէջ էր ու ապահովացրեց նոցա անձնական ազատութիւնը զո-

բաւորների դէմ։ Ցեռոյ, որ Հասարակաց գործոց ծանրութիւնը տանելու ամէնքը հաւասարապէս մասնակից լինին, բաժանեց ողջ քաղաքացիներուն, նոցա կարողութեան համեմատ, չորս դասը, այնպէս որ հարուստները ծախսի մեծ մասը պէտք է տային և զինուորական բազմաձախ պաշտօնները ընդունէին, այն ինչ աղքատները ամենևին պաշտօն պէտք է չընդունէին։ Վերջապէս կարգ դրեց կառավարութեան մէջ էլ։ Ամէն արիոնին նշանակեց իւր ներգործութեան պարը ու քաղաքացիների երեք դասերից ընտրեց չորս հարիւր մարդ և կազմեց ծերակոյտ։ Ազգային ժողովին տուեց իրաւունք ամէն պաշտօնատարները ընտրելու, առաջարկած օրէնքները հաստատելու, խաղաղութիւն կամ պատերազմ որոշելու և վճիռ տալու տէրութեան դէմ արած յանցանքների պատժին։ Արէոպագոսի առեանը, ուր ներկայ լինում էին միայն իրանց պաշտօնը լաւ կատարած արիոնները, բաց 'ի իւր առաջվան իրաւունքներից ստացաւ ազգի բարոյականութեան վերայ վերատեսչութիւնը և իրաւունք ազգային վճիռը քննելու ու հարկաւոր ժամանակը նորա կատարումն արգելելու էլ։ Որ մի քանի քաղաքացիներ Հասարակաց ազատութեան վնասակար չլինեն, 504 ին նշանակեցին խեցեկոյտ վճիռը (Օստրակիսմոս), որով իւրաքանչիւր անձն տասը տարիով կարող էր աքսորվել, առանց նորա յանցանքը Հասարակաց յայտնի լինելու, եթէ միայն

վից հաղար քաղաքացիք, խնցու վերայ աքսորելի անձի անունը գրելով, համաձայն կլինէին այս մասին։

ՊԻՍԻՍՏՐԱՏ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆԵՐԸ։

Յեռապայ անցքերով առաւել հասատամիցաւ Սոլոնի դրած կառավարութեան եղանակը։ Նորա բազմաձև բացակայութեան ժամանակ Ծագեցան վերան երկպառակութիւններ։ Պիսիստրատ, ընտիր ցեղից, ժողովրդեան սորին մասնի օգնութեամբ դառաւ իշխան ապրութեան (բռնաւոր) 561։ Երկու անգամ աքսորեցին նրան, երկու անգամ էլ հասատակց իւր իշխանութիւնը նորից խորամանկութեամբ և զօրութեամբ և հասատատուն մնաց նորա մէջ մինչև մահը 528 ին, իր բարեխառն բնաւորութեամբ։ Սորան յաջորդեցին իւր Հիպպարքը և Հիպպիաս որդիները, որոնք միասին կառավարեցին մինչև 515, երբ Հիպպարքոսին սպանեցին Հարմոդիոս և Արիստոգիտոն։ Հիպպիաս, այս չարագործութեամբ զայրացած, սկսաւ ոչ ոքին հաւատ չընծայել և բռնութիւն գործածել, որով կորցրեց ազգի սէրը և ստիպվեցաւ փախչել 510, որովհետև Սպարտացիներն էլ նորա դէմ գինեցան։ Նա փախաւ Պարսից Դարեհ Վշտասպեայ թագաւորի մօտ։ Ամենքում կլիսթենէս բազմացրեց ծերակոյտի անդամների թիւը մինչև հինգ հարիւր, որոնք միմիոխաբար ապրու-

թեան մէջ գլխաւոր իշխանութիւնքը վարում էին, քաքացիները տան կարգ բաժանեց և վերատին կարգեց այն վերոյիշեալ խեցեկոյտ վճիռը։

ՑՈՑՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ։

Բոլորովին առաջին կերպարանք ստացան Ցոյների քաղաքական կազմուածքը և քաղաքային յարակցութիւնները։

Հին ժամանակներում զրեթէ ամէն ցեղ ունէր իր առաջնորդը իբրև թագաւոր և այս ժամանակները կազմում են նոյա դիւցազնական դարը։ Այն ժամանակվան թագաւորական իշխանութիւնը հիմնված էր լինում կամ ծննդեան վերայ և կամ զօրութեան։ Շատ անգամ թագաւորը առաջինն էր իրան հաւասար ազնուական ընտանիքների մէջ (ինչպէս Ոդիսևս Իթակայում, Թեսէոսը Ատտիկայում)։ Քուրմերի վերայ ոչ մէկ տեղ խօսք չէ լինում։ Քուրմերի պաշտօնը էր միայն զոհաբերութիւնը և նոքա միշտ թագաւորի իշխանութեանը ենթարկվում էին. միայն պատգամախօսի միջնորդութեամբ կարողանում էին երբեմն քաղաքական ազդեցութիւն ունենալ։ Ազատարակ իւրաքանչիւր ցեղի անհատները սիրով բնակում էին միմեանց հետ և զգում էին ընկերական կեանքի կարիքը։

Դորիացիների յարձակումից յետ դիւցազնական

ժամանակների ցեղական կապը բոլորովին քակվեցաւ և սկսաւ մի բազմազան, առանձնական և մէկ մէկից անկախ քաղաքային կեանք, այնպէս որ բազմաթիւ մեծ և փոքր քաղաքներ բոլորովին անկախ տէրութիւններ կազմեցին, ամենեին հակառակ արևելեան հայեցուածքին աշխարհիս վերայ, որով ամէն բան հնազանդում էր քրմական դասին և կամ մի լիակատար իշխանի կամքին:—Պատահում էր, որ ցեղակից քաղաքները կազմում էին դաշնակցութիւն էլ, միայն այս արդեալ չէր լինում իւրաքանչիւրի ազատութեան:

Յունական կարգը առաջացրեց շատ միջոցներ Յոյների բազմաթիւ տէրութիւնները միմեանց հետ կապելու համար: Այս միջոցներից մէկն էր տէրութեանց մէջ կարգած հիւրասիրութեան իրաւունքը, որոնք ցեղերը և տէրութիւնները միմեանց հետ կապում էր բարեկամական կապով. դաշնակցութիւնները շատ տէրութիւնների մէկի առաջնորդութեան տակ (այսպեղից հեգեմոնիա (նախագահութիւն) որևիցէ քաղաքի): Ամ՚ֆիկտիոնները նոյնպէս գլխաւոր կապերից մէկն էին Յոյների տէրութիւնների մէջ: Սրբա էին մի քանի տէրութիւնների դաշնակցութիւն, հասարակաց սրբութիւնների պաշտպանութեան համար և դաշնակցութեան անդամների մէջ ծագած վերկայաւորութեանց առաջը առնելու համար: Այս ամ՚ֆիկտիոններից ամենից նշանաւորը էր Բիւթեան Ապոլոնիոնը Դելֆի քաղաքումը, որոնք կազմում

էին տաճարներու տէրութիւններ, իրանց դաղթականներով։ Սոցանից իւրաքանչիւրը խրկում էր իր ներեսփոխանը, որոնք կազմում էին ամ՚ֆիկտիոնի խորհրդարանը. միայն սա էլ բնաւ չի դառաւ խորհրդարան կամ ազգային ներեսփոխանական ժողով բոլոր Հելլէնների համար։

Բայց ամենից մեծ կապը, որնոր կապում էր Յոյների բոլոր ցեղերուն և քաղաքականապէս բաժանված ու միմեանցից օտարացած տէրութիւնները, էին նոցա սրբազան խաղերը։ Սրանցից ամենից հինը և նշանաւորը էին նոքա, որոնք նուիրած էին Զևսին (Արամազդին) ու տեղի ունենում էին չորս տարին մի անգամ Էլիդայի Օլիմպիա քաղաքում, ուստի և օլիմպիական կոչվում էին։ Այս խաղերի թուով հաշվում էին Յոյները և իրանց թուականը։ Նշանաւոր էին նոյնպէս Ապոլոնին նուիրած սրբազան Պիւթեան խաղերը Դելֆի քաղաքումը ու Նեմէական խաղերը, Արգոլիդայի Նեմէա քաղաքումը։

Դեռ դիւցազնական ժամանակներում ազնուականները ձգտում էին թագաւորական իշխանութիւնը չափաւորելու. իսկ երբ Դորիացիների յարձակումից յետո հիմնվեցան նոր տէրութիւններ, նոքա իրանց ձիգը աւելցնելով այս մասին կարողացան բոլորովին ջնջել թագաւորական իշխանութիւնը և այսպէս հին թագաւորութեանց տեղ ծագեցան հասարակապետութիւններ։

Այս ցեղական ազնուականներին ախոյեան դուրս եկաւ վաճառաշահ տէրութիւններում հարուստների դասը, որնոր շատ քաղաքներում բոլորովին իրՀեռքը գցեց իշխանութիւնը:

Ստորին կարգի ժողովուրդքը այն տէրութիւններում, ուր գաղթականները չկաղմեցին տիրապետող տարրը, երկար ժամանակ մնացին իրանց ազատ վիճակի մէջ. իսկ այն տէրութիւններում, ուր գաղթական Դորիացիները կազմեցին տիրապետող մասը ժողովրդեան, նոքա կամ մնացին իբրև երկրորդ կարգը ժողովրդեան (անձնական ազատներ) և կամ դարձան յաղթիչների սարուկներ: Այն քաղաքներում, ուր վաճառաշահութեամբ և ձեռնարուեստներով հարստացած և զօրեղ ժողովուրդը վարում էր իշխանութիւնը, կազմվեցաւ ժողովրդապետական ձևը կառավարութեան. իսկ ուր ցեղական ազնուականները էին իշխողները, կազմվեցաւ ազնուապետական եղանակը կառավարութեան:

Այս կառավարութեան երկու եղանակներից էլ երբեմն ծագում էր բռնութիւնը, այսինքն, մի անձնի լիազօր իշխանութիւնը, որնոր յաճախ փրկիչն էր լինում ազգի երկպառակութեանց դէմ: Այսպիսի բռնաւորները տանելի էին լինում և վարում էին իրանց իշխանութիւնը անարգել, քանի որ ներգործում էին օրէնքների որոշած շրջանում: Իսկ երբ որանից դուրս էին գալիս, ատելի էին դառնում ժողովրդեան և 'ի վերջոյ աքսորվում հայրենիքից:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ·

Այն ինչ Աթենացիները աշխատում էին ներքին կառավարութեան համար, արտաքուստ սպառնում էր նրանց Պարսից թագաւորութեան զօրութիւնը: Դարեհ խրկեց նոցա վերայ 492 ին նաւատորմիղ և ցամաքային զօրք· բայց մրրիկը փչացրեց նաւատորմիղը Աթոս լերան մօտ, իսկ ցամաքային զօրքի ձեռնասարհը փակեցին Բրիւգիացիք, որոնք Թրակիսում բնակում էին, և գիշերային յարձակումներով գրեթէ բոլորովին ջնջեցին նրանց: Այն ժամանակ կազմեց Դարեհ երկրորդ առաւել մեծ զօրք, որ Եգէեան ծովով նաւերով մտաւ Եւրէա կղզին, քանդեց Երետրիա քաղաքը ու անցաւ Առտիկէ 490 ին:

Աթենացիները քաջասրտութեամբ դէմ էլան 110,000 պարսիկ զօրքին, թէև իրանք, Պլատէայի օգնական զօրքի հետ միասին, միայն 10000 էին և Միլտիադէսի առաջնորդութեամբ Մարաթոնի դաշտում յաղթեցին Պարսից Դատ և Արտափերնէս զօրավարներին, որոնք միայն իրանց նաւերի վերայ փախչելով փրկվեցան: Հիսպիաս էլ ապանվեցաւ այս պատերազմում: Բայց Դարեհ սրտով էլ չդուսահատեցաւ Աթենացիները պատժելու համար· այլ պատրաստվում էր երկրորդ անգամ արշաւելու, միայն ապաստամբեցան Եգիպտացիները, որոնց շնուաձաձ վախճա-

նեցաւ ինքն էլ 486 ին։ — Սորա որդին և յաջորդը Քսերքսէս (486—465) Եգիպտացիներուն նուաճելից յետ, պատրաստվեցաւ վերստին ցունաստան արշաւելու։ Բոլոր թագաւորութեան մէջ ահագին պատրաստութիւններ էին տեսնվում։ Անթիւ զօրքով, որի հաւաստարը երբէք չէ եղել, ճանապարհ ընկաւ Քսերքսէս 481 ին (ասում են, թէ 3½ միլիոն զինուորներ էին միայն) մեծ և փոքր Ասիայով հասաւ Աբիդոս, ուր եօթն օր ու եօթն գիշեր երկու նաւակամրջի վերայով բոլոր զօրքը անցաւ Հելլեսպոնտոսի Եւրոպական ափը, ուր Դորիսկոսի մօտ թագաւորը զննեց իւր զօրքը, որնոր Ասիայի բազմազան ազգերից էր բաղկացած։

Այստեղից, արդէն Դարեհի նուաճած երկիրներով, գնաց Թեսալիա ու Եվրոպա։ Թերմոպիլի կիրճում Լեոնիդաս, Սպարտացւոց թագաւորը, ընդդէմ կեցաւ Քսերքսեսին 480 ին երեք հարիւր Սպարտացիներով և փոքր էլ ուրիշ օգնական զօրքով։ Թէև մի Եփիալտ անունով ցոյնի դաւաճանութեամբ զոհ եղաւ Լեոնիդաս իւր փոքրիկ զօրքով Քսերքսէսի զօրքի անթիւ բազմութեան. բայց և այնպէս ազնիւ օրինակ եղաւ, որնոր ողջ ցոյները ոգևորեց քաջութեամբ իրանց հայրենիքը պաշտպանելու։ Ամէնք, որ լաւ չէր ամրացած, չկարաց ընդդէմ կենալ թշնամեաց, աւար եղաւ յաղթիչներին, որոնք այրեցին քաղաքը ամենեին։ Ամենացին Թեմիստոկլէս արդէն

քանի տարի առաջ իւր քաղաքակիցներին հաս-
կացրել էր, որ նաւերը են առաջին միջոցը ազատու-
թեան, ու բազմացնել էր տուել նոցա նաւատոր-
միղը: Իրանց ընտանիքը ու շարժական ստացուածքը
մերձակայ կղզին տանելից յետ, ամէն պատերազմել
կարողացող Աթենացիք մտան նաւերը և ուրիշ՝ յոյն
նաւերի հետ միանալով կազմեցին մի նաւատորմիղ,
որ թէև նաւերի թուով նուազ էր Պարսից նաւա-
տորմիղից, բայց փութութեամբ ու շուտութեամբ
խիստ գերազանց էր նրանից: Արդէն թերմոպիլի պա-
տերազմի օրը Արտեմիզիոնի մօտ պատերազմեցաւ
Յունաց նաւատորմիղը քաջութեամբ, բայց ոչինչ
չվճռեց: Սրանից յետ Քսերքսէս թեմիստոկլէսի խո-
րամանկ խորհրդից խաբված, միտքը դրաւ էլի մի
ծովային պատերազմ տալ Սալամիսի մօտ: Մէկ կողմից
նեղուցի նեղ տարածութիւնից, ուր պէտք է Պար-
սիկների մեծ ու ծանրաշարժ նաւերը պատերազ-
մէին Յոյների դիւրաշարժ նաւակների հետ և միւս
կողմից վերջինների գովելի անձնանուէր քաջութիւնը
գրեթէ ջնջեցին Պարսիկների նաւատորմիղը: Ամէն
կերպի պակասութիւններ ու հիւանդութիւններ
նուազեցրին ցամաքային զօրքն էլ, որ էլ յոյս չու-
նէր Ասիայից պաշար ստանալու. այս և երկիւղը, թէ
մի՛ դուցէ դարձն էլ արգելեն Յոյները, ստիպեցին
Քսերքսէսն հայրենիք դառնալու: Բայց և այնպէս
թողեց նա Մարդոնիոսի առաջնորդութեամբ երեք

հարիւր հազար ընտիր զօրք Յունաստանում: Բայց ոգևորած Յոյները Պաւսանիաս Սպարտացու ու Արիստիդէս Աթենացու առաջնորդութեամբ ջարդեցին 479 ին այս զօրքն էլ Պլատէայի մօտ, ուր սպանեցաւ Մարդոնիոս ինքն էլ: Իսկ նորա զօրքից հազիւ 40,000 կարողացան Ասիա յետ դառնալ:

Յունաստան ազատվեցաւ այն երկիւղից, որ սպառնում էր նրան և ոչ մի Պարսիկ էլ չէր մնացել նորա մէջ: Բայց մեծ ու երևելի զօրավարները նորա ոչ մի օգտաւէտ պտուղ չքաղեցին իրանց փառքից: Միլտիադէս արդէն 489 ին Պարոս կղզու դէմ արած անյաջող արշաւանքի համար դատապարտեցաւ մեծ տուգանքի և որովհետև չկարաց վճարել այն, մեռաւ բանդում իւր վէրքերի ցաւից: Թեմիստոկլէս, որ բաց 'ի յիշեալ վատառակներից, որմով պատեց վերականգնած Աթէնքը, Սպարտացիների կամաց դէմ, աքսորվեցաւ հայրենիքից, ազատութեան ահալի ու ճնաստակար կարծվելով, ու ապաստան գտաւ Իրան Պարսկաստանում, ուր յետոյ, ինչպէս կարծում են, ինքը Իրան սպանեց չկամելով իւր ապերախտ հայրենիքի դէմ դէնք բարձրացնել: Պաւսանիաս իւր յաջողութեամբ մեծամտեցաւ և երկար ժամանակ օտար երկրում բնակելով ու փափկասէր Ասիացիների հետ շատ կապակցութիւն ունենալով օտարացաւ Սպարտացիների անձնոխութիւնից, կամեցաւ դաւաճանել իր հայրենեաց, բայց խորհուրդը բացվեցաւ ու ինքն էլ մա-

հու դատապարտեցաւ 469 թն։ Արիստիդէս Արդարը անգամ չկարաց աքսորանքից ազատվել. բայց պատուով յետ կանչվեցաւ ու կառավարիչ նշանակվեցաւ Հասարակաց գանձին։ Այս պաշտօնում ապացուցեց այնպիսի անշահախնդրութիւն, որ մեռնելից յետոյ, ինքը կարողութիւն չունենալով, տէրութեան ծախսով թաղվեցաւ։ Բայց պարսկական կռիւը դեռ չէր վերջացած. այժմ Յոյները իրանք սկսան արշաւանք անել Պարսիկների դէմ։ Պլատէայի պատերազմի ժամանակում Սպարտացին Լեոտիքիդէս և Աթենացին Քսանթիպպոս փոքր Ասիոյ եզերքում Միկալէի մօտ մեծ յաղթութիւն արին Պարսից թէ նաւատորմիղին և թէ ցամաքային զօրքի վերայ, և սրոնով ազատեցին յոնիացի զաղթականներուն Պարսից լծի տակից։ Յոյները սկսան յանախ յարձակել փոքր Ասիոյ զանազան երկիրների վերայ, մանաւանդ Կիմոն Միլտիադէսի որդին, մեծամեծ սխրագործութիւններ (երկու յաղթութիւնները Եւրիմեդոնի մօտ 469 թն Պամֆիլիզիաում մի օրվան մէջ) արաւ և առած աւարներովը հարստացրեց իւր հայրենիքը։ Այս փոքրաթիւ զօրքերով արած յաղթութիւնները Յոյների ապացոյց են Պարսից տէրութեան թուլութեանը ու նորա իր վախճանին մօտենալուն։ Ներքին երիտասարդութիւնները ու անընդհատ ապստամբութիւնները թուլացնում էին առաւել և առաւել Պարսից թագաւորութիւնը։ Եգիպտոսը նոյնպէս Ամիրտէոսի ժա-

մանակ նորից ապստամբեցաւ 462 թն և Ճնաց գրեթէ անկախ էլի մնա հարիւր տարի։ Ոգջից առաւել վախենում էին Պարսից թագաւորները Յոյների արշաւանքից, ուստի նոցանից ազատ լինելու համար աշխատում էին բուն յոյն տէրութիւնների մէջ երկպառակութիւն գցելու և այս յաջողում էր հեշտութեամբ, կաշառք տալով զանազան երկպառակիչներին։

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆ (ՀԵԳԵՄՈՆԻԱ) ԱԹԷՆՔԻ.

Մինչև յայժմ Սպարտա, իբրև զօրեղագոյն տէրութիւնը ցամաքի վերայ, ունէր առաջին տեղը Յունաց տէրութեանց մէջ։ Պլատէայի յաղթութիւնից յետո Սպարտացիք իրանց մեծամտութեամբ հովցրին ամենեին իրանց դաշնակիցների սիրտը և որովհետև յետագայ պատերազմերում Պարսից դէմ հարկաւոր էր միայն գրեթէ նաւային զօրութիւն. ուստի և առաջնորդութիւնը կռվում բնականապէս անցաւ Աթենացիների ձեռքը, որոնք ամենից զօրեղն էին ծովի վերայ (Հեգեմոնիա)։ Այս կռիւների նպատակն էր փոքր Ասիայի Յոյների ազատութիւնը, ուստի և սրբա համաձայնեցան օգնութիւն տալ դրամով, որոյ դումարը մնա 160 տաղանտ էր և որը ծախում էին միայն Աթենացիները։ Սպարտա նախանձով նայում էր Աթէնքի զօրութեան ու մեծութեան վե-

բայ, բայց իւր անբաւականութիւնը ու նախանձը չյայտնեց բաց կռուով, ըստ որում պարապած էր Հելոտների ապստամբութեամբը (երրորդ պատերազմ Մեսենիոյ) 465—455: Այս ժամանակում Աթէնքը հասաւ իւր փառքի ու զօրութեան վերին աստիճանին: Երևելի ճարտասաններից ու մեծ քաղաքական մարդիկներից մինը, Պերիկլէս, ստացաւ Աթէնքի մէջ գլխաւոր ազդեցութիւնը ու զօրութիւնը ու փառքով կառավարեց ազգը 40 տարի 469—429: Յաջողակ հանգամանքների միասին հանդիպելովը, որովհետև այն դարումն էին երևելի յաղթութիւնները Պարսից դէմ, և մեծաւոր յառաջադիմութեամբ, որ այն ժամանակ սկսել էր, ծաղկեցան այնքան երևելի մարդիկ, որ այս դարը ամէնից ծաղկեալը եղաւ ողջ հին դարերից, թէ գիտութիւններով և թէ արհեստներով և կոչվեցաւ Պերիկլէսի դար: Պատմագիրները՝ Հերոդոտ և Թուկիդիդէս, բանաստեղծները՝ Սոփոկլէս, Եւրիպիդէս (Էսքիլէսը մին քանի տասնամեայ միջոց առաջ էր) Արիստոփանէս, Հիպոկրատէս բժիշկը, Փեդիոս և Պրաքսիդելէս արձանագործները, Զևքսիս և Պարռասիոս և ուրիշ երևելի մարդիկ կենում էին կամ Պերիկլէսի ժամանակ և կամ փոքր ժամանակ նրանից յետոյ: Ամէն ազնիւ արհեստները աշխատում էին յառաջ բերել գեղեցիկ ու երևելի աշխատանքներ և այս բարգաւաճումը և սկզբնապատճառը ինքն Պերիկլէսն էր. որովհետև յորդորեց ազգը, որ Պարսից պատե-

բազմներում ժողոված բոլոր հարստութիւնները ու դաշնակիցների տուած դրամները տաճարները զարդարելու և նոր հասարակաց շինուածներ հիմնելու գործածվեն (Պարթենոն, Պրոպիլէ, Ոդէոն և այլն)։ Պերճախօսութիւնը հասաւ անկարծելի կատարելագործութեան իրան Պերիկլէսի մէջ ու յետոյ առաւել ուշ մօտ 360 Իսոկրատէսի ու Դեմոսթենէսի մէջ։ Սոկրատէս ամենևին նոր ընթացք տուեց փիլիսոփայութեան, և ամբողջ կեանքը աշխատում էր, որչափ կարելի է, մաքուր գաղափարներ տարածելու մարդկային կեանքի նպատակի վերայ մարդոց մէջ և ուսումնասէր երիտասարդներին առաքինութեան և իմաստութեան ճանապարհը առաջնորդելու։ Թէև զոհ եղաւ սա իւր թշնամիների ատելութեան ու նախանձին 399 ին, բայց նորա անունը դեռ կենդանի է և Թէպէտ ինքը ոչինչ չգրեց. բայց նորա Պլատոն ու Քսենոփոնտ աշակերտները իրանց գրութեանց մէջ մեզ նորա հետ ծանօթացրին։

ՊԵԼՈՊՈՆՆԵՍԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 431—404.

Աթենացիք իրանց յաջողութիւններով մեծամտեցան ու սկսան իրանց դաշնակից տէրութեանց հետ վարվել իբրև իրանց հպատակների հետ, ստիպելով շատերուն նոցանից փոխելու իրանց ազնուապետական կառավարութիւնը՝ ժողովրդապետութիւն, որով

շատերուն թշնամացրին իրանց ու պատճառ տուին շատ ապստամբութեանց, որ տեսնվում էին յետոյ զօրութեամբ ճնշելու: Սպարտացիք, որոնք եռում էին նախանձով Աթենացւոց դէմ, միշտ որոնում էին պատճառ պատերազմ բանալու Աթէնքի դէմ և ճնշելու նրան. ուստի և յաճախ օգնական էին լինում նոցա ապստամբ դաշնակիցներին: 445 ին Մեգարայ ապստամբեցաւ Աթէնքի դէմ և Սպարտան խրկեց իր զօրքերը Մեգարացիներուն պաշտպանելու, միայն Պերիկլէս իր խոհականութեամբ ոչնչացրեց պատերազմի այն մրրիկը, որ սպառնում էր Աթէնքի իշխանութեան և կաշառելով Սպարտացւոց զօրավարին, կապեց 30 ամեայ խաղաղութեան դաշն Սպարտայի հետ: Բայց շուտ էլի վէճը կորնթոսի իր գաղթական Կորկիւրայի հետ արծարծեց Պելոպոնեսեան պատերազմը Աթէնքի և Սպարտայի մէջ, որովհետև Աթենացիները Կորկիւրայի հետ միացան յուսալով այս դաշնակցութեամբ իրանց ազդեցութիւնը արևմուտքում Սիկիլիոյ Ցոյների վերայ էլ տարածել. իսկ Պելոպոնեսացիք Կորնթացիներին պաշտպանելու համար Սպարտայի առաջնորդութեամբ զէնք առին նոցա դէմ 431: Գրեթէ բոլոր Ցունաստանը մասնակից եղաւ այս պատերազմին. կողմները Աթենացիների կողմն էին և ցամաք երկիրը Սպարտացիներին էր դաշնակից: Մինչև որ Աթենացիները Պերիկլէսի խորհրդին հետևելով, փակվում էին իրանց պինդ ամրաց-

բաց քաղաքում, փոքր էին գնաս կրում, այն ինչ իրանք զօրեղ նաւատորմիղով ասպատակում էին թշնամեաց ծովեզերեայ երկիրը։ Բայց երբ Պերեկլէս ժանտամահից, որ 429 ին բոլոր Ա.թէնքը ամայի շինեց, մեռաւ, փոխվեցաւ ամենեին պատերազմի ընթացքն էլ։ Ազգի կառավարութիւնը անցաւ մի անմիտ ու փառասէր Կլէոն անունով մարդու ձեռքը։ Սորա արշաւանքը Սփակտերիա կղզու դէմ յաջողեցաւ 425, Դեմոսթենէս զօրավարի օգնութեամբ ու շատ երևելի Սպարտացիներ գերի ընկան և եթէ յաղթիչները մեղմ լինէին ու բարեխառն ամէն բանում, պատերազմին վախճան կլինէր, որովհետև Սպարտացիք պատրաստ էին խաղաղութիւն անելու, բայց Կլէոն կամեցաւ Ամֆիպօլիս քաղաքը, որին Սպարտացիները տիրել էին, վերատին խլել նրանցից։ Բրասիդաս Սպարտացի զօրավարը ջարդեց բոլորովին Ա.թենացիներուն, որոնց Կլէոն առաջնորդում էր և երկու զօրավարներն էլ ընկան պատերազմում 522 ին։ Երկու կողմերն էլ ձանձրացած լինելով պատերազմից համաձայնեցան յիսունամեայ զինադադարութիւն անելու, որ և դլուխ եկաւ Ա.թենացի Նիկիաս զօրավարի ջանքով։ Մի քանի ժամանակից երիտասարդ ու հարուստ Ալկիբիադէսը՝ որին Պերիկլէս էր՝ մեծացրել, և որնոր որչափ պարսաւելի էր իր պակասութեանց մէջ, այնչափ էլ գերազանց և գովելի իւր լաւ որպիսութիւններով, ստացաւ մեծ

ապրեցութիւն Աթէնքում և համոզեց Աթենացի-
ները 415 թն պատերազմ բանալ Սիկիլիայի հզօր Սի-
րակուսա քաղաքի դէմ, յոյս տալով նրանց, թէ նորա
նուաճմամբ շատ կ'զօրանան իրանք: Գուցէ սա ինքը
յաջողութեամբ գլուխ կ'տանէր այս գործը. բայց
հազիւ Աթէնքից հեռացաւ թէ ոչ, իւր թշնամի-
ների խօսքով կրկին յետ կանչվեցաւ, որ իւր անձը
արդարացնէ իրանց կրօնին դէմ արած անպատուու-
թեան համար: Զօրքերի առաջնորդութիւնը անցաւ
Նիկիասի ձեռքը, որ անզգուշութեամբ յարձակման
համար դիպող ժամանակը կորցրեց իր ծանրաշար-
ժութեամբ և ողջ զօրքովը ու նաւատորմիղովը կո-
րաւ Սիկիլիսում 413 թն, յաղթվելով Սիրակուսացի-
ներից և Սպարտացի ու Կորնթացի զօրքերից, որոնք
օգնութիւն եկել էին իրանց ցեղակից քաղաքին:
Իսկ Ալկիբիադէս փախչելով ազատվեցաւ գատաս-
տանի վճռից, գնաց Սպարտացիների մօտ և ամէնից
երկիւղալի թշնամին դառաւ իւր քաղաքացիներին:
Սա էր, որ Սպարտացիներին խորհուրդ տուեց նորից
սկսել պատերազմը Աթէնքի դէմ, ամէն բանից ա-
ռաջ տիրել նորա մերձակայ Դեկելէա ամրոցին, որ
սրանով իշխել կարողանան բոլոր Ատտիկային: Ճըշ-
մարտիւ որ Աթէնքը, որի գանձը ծախվել էր ու
գլխաւոր զօրութիւնը Սիկիլիական նաւատորմիղի հետ
կորել, այսպէս մեծամեծ կարիքների ու դժուար դը-
րութեան մէջ ընկաւ: Թէև Ալկիբիադէս, որին Սպար-

տացիները կասկածում էին, վերստին 407 ին Աթէնք կանչվեցաւ ու կարճ ժամանակ յաղթող գտնվեցաւ, բայց կասկածոտ ազգը կրկին զրկեց նրան իշխանութիւնից, երբ նորա իշխանութեան տակ եղող զօրավարները մի կռվում յաղթվեցան: Ալկիբիադէսի յաջորդների յիմարութիւնը և անզգուշութիւնը հեշտացրեց Սպարտացի նաւատորմղի Լիւսանդր զօրավարի յաղթութիւնը 405 ին Էգոս գետի մօտ, որի հետևանքը եղաւ Աթէնքի պաշարումն և առումն 404 ին: Սպարտացիներին օգնում էր շատ այս պատերազմում Պարսից Կիւրոս իշխանը: Սպարտացիք Աթէնքի պատերը քանդեցին, բաց ի տասներկու նաւերից, մնացածները բոլորը խլեցին ու տէրութեան կառավարութիւնը յանձնեցին 30 իրանց կուսակից քաղաքացիներին: Ալկիբիադէս իւր հայրենիքը դժբաղդութեան մէջ տեսնելով խղճաց շատ, և կամենում էր օգնութիւն գտնել նորա համար Պարսկաստանից, բայց ճանապարհում Սպարտացիներից կաշառած մարդիկ սպանեցին նրան:

ԲԻՒՐԻ ՆԱՀԱՆՋԸ, ԱՆՏԱԼԿԻՏԱՍԻ ԴԱՇՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Դարեհ երկրորդը մեռաւ թէ ոչ, նորա կրտսեր որդին Կիւրոս՝ փոքր Ասիոյ տեղակալը, բարեկամանալով Սպարտացիների հետ ու իւր մօրից յորդորվելով վարձեց Յոյներ պելոպոննեսական պատերազմի

վերջանից յետո և կամենում էր իւր աւագ եղբօրը Արտաշէս երկրորդին գրկել ու ինքը նորա տեղ թագաւորել: Առանց ընդդիմութեան հասաւ նա Բաբելոնի մօտ, ուր այն ժամանակ թագաւորը բնակում էր: Թէպէտ 401 ին Յոյները յաղթեցին Կունաքսայի մօտ, բայց Կիւրոսը ընկաւ պատերազմում և Արտաշէսը մնաց թագաւոր: Երիտասարդ Աթենացին Քսենոփոն տասն հազար յոյն զօրքին առաջնորդելով Պարսկաստանի միջտեղից նրան հասցրեց սև Ծովի մօտ ու այսպէս ազատեց նրանց: Բայց սորա հետեւանքը եղաւ նոր պատերազմ Պարսից հետ: Որովհետև երբ Արտաշէս Յոյներից վրէժ հանելու համար փոքր Ասիայի Սպարտացիներին հպատակ կամ դաշնակից յոյն քաղաքների վերայ յարձակեցաւ, Լիւսանդր յորդորեց Սպարտացիներին, որ իրանց ասիական ազգակիցներին պաշտպան կենան: Ագէսիլայոս երեւելի յաղթութիւններ արաւ 396—394, տիրեց գրեթէ բոլոր փոքր Ասիային և միտքը դրել էր արդէն Պարսից թագաւորութեան վախճան դնել:

Արտաշէս դէնքով ոչինչ անել չկարենալով, սկսաւ ոսկի գործածել: Արդէն 403 ին Տրասիբուլ աղատել էր Աթէնքը ու խիստ և հպարտ Սպարտացիների իշխանութիւնը ամէնին ատելի ու անտանելի էր դառել: Պարսից ոսկով կաշառած, ապստամբեցան Յունաստանի փոքրիկ տէրութիւնները Սպարտայի դէմ (Կորնթոսի պատերազմ). Լիւսանդր պատերազ-

մում նոցա դէմ Հալիարոի մօտ յաղթվեցաւ ու իւր կեանքը կորցրեց 394 ին: Ագեսիլայոս յետ կանչվեցաւ իւր յաղթութեանց ասպարէզից իր հայրենիքը պաշտպանելու և ջարդեց դաշնակիցներուն Կորնէայի մօտ. բայց Պարսից նաւատորմիղը Կոնոն Աթենացու զօրավարութեամբ ջնջեց Սպարտացիների ծովային զօրութիւնը Կնիդոսի մօտ և Կոնոն Պարսիկների փողով ու Սպարտացիների աւարով կանգնեց Աթէնքի պարիսպները: Քաբրիաս, Իփիկրատէս և Տիմոթէոս եղան երևելի զօրավարները Աթէնքի:

Սպարտան չկարողանալով շարունակել պատերազմը երկու զօրեղ թշնամիների դէմ խաղաղութիւն խնդրեց Արտաշէսից: Անտալկիդաս կապեց այս դաշնադրութիւնը 387 ին: Յունաստանի պարսկական պատերազմից առաջ ունեցած դրութիւնը պէտք է նորոգվէր այս դաշնադրութեամբ. ուստի և ամէն դաշնակցութիւններ քակվեցան և փոքր Ասիայի Յոյները ընկան վերատին Պարսիկների իշխանութեան տակ: Պարսիկները յանձն առին սպարտացիների հետ միասին ամէն տեղ խաղաղութիւն հաստատելու և դաշնադրութիւնը կատարել տալու: Սպարտացիների զօրքերը պատեցին բոլոր Յունաստան և մի անգամ էլ վերջապէս Սպարտան դառաւ իշխող իւր դաշնակից թանգաւորների:

ԹԵԲԷԻ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ ՈՒ ԱՆԿՈՒՄՆ· ՊԵԼՈՊԻԴԱՍ ԵՒ ԵՊԱՄԻՆՈՆԴԱՍ·

Սպարտացիների զօրքը, որ խրկվեցաւ Օլինթոս քաղաքը ստիպելու, որ ընդունէ Անտալկիտասի դաշնադրութիւնը, ճանապարհին Բէոտիայի միջով անցկենալիս տիրեց Թեբէին 382 թն և սկսաւ նորա կառավարութեան մէջ փոփոխութիւններ անել, հաստատելով այն տեղ հարստապետական կառավարութիւն: Շատերը աքսորվեցան, Աթէնք ընդունում էր փախստականներուն, որոնց մէջ էր և Պելոպիդաս: Սա միանալով այլ աքսորեալների հետ, այս տեղից գնաց 379 ու ազատեց իւր հայրենի քաղաքը: Եպամինոնդաս օգնական եղաւ նրան: Մինչև ցայժմ Թեբէն ամենևին նշանակութիւն չունէր և ոչինչ էր համարվում յոյն տէրութեանց դասումն և Բէոտացիներուն վատ ու տգէտ էին կարծում ամէնքը, չնայելով, որ ամբողջ Յունաստան Թեբացի Պինդարոսին (սա կենում էր մօտ 490 թն) իւր երևելի բանաստեղծների կարգումն էր դասում: Այս տեղ պարզ երևեցաւ, թէ ինչ ներգործութիւն կարող է ունենալ մի քանիսի մեծ ոգին ու հանճարը մի ազգի կամ բազմութեան վերայ: Այս երկու անձները փափկասէր և մեղկ Թեբացիներուն այնպէս կրթեցին և վարժեցին, որ նոցա իմաստութեամբ և ջանքով սոքա զօ-

բացան, քաջացան և կազմեցին նոցա կենդանութեան ժամանակ ցունաստանի մէջ ամէնից զօրեղ տէրութիւնը։

Այն ինչ Պելոպիդաս պատերազմում էր Թեսսալիաում և Մակեդոնիաում, յաղթեց Եպամինոնդ Լևկտրայի մօտ 371 ին մինչև ցայժմ ամէնին երկիւղալի եղած Սպարտացիներուն, որոնք էլ այնուհետև Պելոպոննեսից դուրս չեկան։ Եպամինոնդաս քանիցս անգամ անցաւ Պելոպոննէս Սպարտացիների դէմ պատերազմելու. Մեսսենիան ազատեց և Արկադացիներուն էլ յորդորեց ինքնագլուխ լինել (Մեգալուպոլիս մայրաքաղաքը)։ Բայց այս երկու մեծ և երևելի մարդոց մահից յետ վերջացաւ Թէբէի մեծութիւնն էլ։ Պելոպիդաս մեռաւ պատերազմում Ալեքսանդր փերէացու դէմ Կինոսկեֆալէի (շանագլուխ) մօտ 364 ին և Եպամինոնդաս Մանտինէայի մօտ 362 ին, ուր երկրորդ անգամ մեծ ջարդ տուեց Սպարտացիներին։ Թէբացիք շուտով այնպէս թուլացան, որ Փոկիացիների հետ, որոնք մի քաջ զօրավարի առաջնորդութեամբ Դելփեան տաճարի գանձերը 355 ին յափշտակեցին, պատերազմելու համար արտաքին օգնութեան կարօտ եղան ու դարձան Մակեդոնիոյ Փիլիպպոս թագաւորին։

ՄԱԿԵԴՈՆԻԱ

ՓԻԼԻՊՊՈՍ ԱՐՔԱՑ·

Թեսաղիայից դէպ ի հիւսիս Էմաթիա գաւառում, որի գլխաւոր քաղաքը Եդեսսա էր, ուխտերդ գաւառում գտնվող բարբարոս ցեղերի, որոնք Հելլենների Դորիացի ցեղին աւելի ազգակից էին իրանց ծագմամբ, միանալով ծագեցաւ Մակեդոնիոյ թագաւորութիւնը։ Պերդիկկաս Արգոսացին, Հերակլէսի ցեղից, հիմնիչ է կոչվում այս թագաւորութեան։ Պարսից իշխանութեան տակ ընկնելով սկսաւ յառաջանալ Մակեդոնիա և երբ Աղէքսանդր ս. Գլուխէայի պատերազմից յետ ազատեց երկիրը Պարսից իշխանութիւնից, շուտով սկսաւ ծաղկել։ Պերդիկկաս բ. (454—413) պելոպոնեսական պատերազմի ժամանակ կապակցութիւններ ունեցաւ շատ անգամ Սպարտացիների և Աթենացիների հետ, որոնք պատերազմում էին նորա ծոցեզերքում եղած գաղթականների համար, բայց նոցա ազդեցութիւնից ազատ չկարողացաւ իրան պահել։ Արքելայոս ընդհակառակն (413—400) բարեկամացաւ նոցա հետ, սիրում էր ցունաց գրականութիւնը և ճանապարհներ ու ամրոցներ շինելով հոգում էր երթևեկութեան և ապահովութեան համար։ Դրանից յետոյ պայտատպութեան համար ծագած ներ-

քին պատերազմում Պելոպիդաս Ամինոտաս երկրորդի կրտսեր որդուն՝ Փիլիպպոսին տարաւ Թեբէ պատանդ։ Այս տեղ լաւ ուսում առաւ Փիլիպպոս և 360 ին իւր խելքով ու հանճարով հասաւ թագաւորութեան։ Երբ սա նուաճեց սահմանակից բարբարոս ազգերուն՝ Իլլիրիացիներուն (Իլիրիկեցիներ) ու Պեոնացիներուն, ծագեցան նորա մէջ ուրիշ խարհուրդներ էլ, որոնք գլխաւորապէս Յունաստանին էին վերաբերում։ Որովհետև ուղղակի զօրութեամբ չէր կարող սորա դէմ բան անել. ուստի սկսաւ գեռ Յունաց ներքին կռիւների մէջ խառնվել և կողմնակիցներ որսալ իրան։ Փիլիպպոս, Թեբացիների կանչելով, համաձայնեցաւ մասնակից լինել Փոկիացիների դէմ եղած մեհենական սուրբ պատերազմին, յաղթեց այս տաճարի յափշտակողներին. յետոյ սկսաւ ազդեցութիւն ունենալ Յունաց գործքերի վերայ և Փոկիացիների տեղը ու ձայնը ստացաւ Ամփիկտիոնի առեանում 346 ին։ Արդէն վաղ նա տարածել էր իւր իշխանութիւնը քաղկեդեան թերակղզում և Ամփիպօլիս ու Պոտիդէա քաղաքներին տիրել. 348 նուաճեց Օլինթոս, Աթէնքի դաշնակից քաղաքն էր։ Դեմոսթենէս ճարտասանը գգուշացնում էր Յոյները անգաղար և Փոկիոն զօրավարը թէև քանիցս անգամ յաղթական դանվեցաւ Փիլիպպոսի դէմ. բայց ժողովրդի փոփոխական միտքը և կաշառքը, որ Փիլիպպոս 'ի գործ էր դնում, արդելք էին լինում ընդ հանուր պատերազմին

նորա դէմ։ Միայն երբ նա, Ամֆիսսայի դէմ անելու սուրբ պատերազմը պատճառ բերելով, մտաւ Եղլադա ու տիրեց Թերմոպիւլի կրճին և Եղատէա ամրոցին 339 ին, հասկացան ցոյները առաջիկայ երկիւղը։ Աթէնք և Թեբէ, Դեմոսթենեսից յորդորվելով, պատրաստվեցան բոլոր զօրութեամբ պատերազմի. բայց Փիլիպպոս ջարդեց նրանց Քերոնէայի մօտ 338 ին այնպէս, որ նրան մնաց այս երկուսից մէկն ընտրելու կամ հպատակութիւն և կամ մահ։ Նոքա, Փիլիպպոսին իրանց սպարապետ նշանակելով, ընտրեցին առաջինը։ Բայց սրանով էլ չբաւականացաւ նորա փառասիրութիւնը, նա մտածում էր յորդորել ցոյներուն ազգային ընդհանուր պատերազմ բանալ Պարսից դէմ. միայն մարդասպաններից պատճառած յանկարծահաս մահը նորա 336 ին արդելք եղաւ կատարմանը նորա խորհուրդներին Պարսից դէմ, որոնք յետոյ նորա որդին Աղէքսանդրը կատարեց։

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԵԾԸ.

Արիստոտէլ ցոյնը (ծն. 384 ին), ամենաերևելի փիլիսոփան իւր ժամանակում, որ աշխատեց ողջ մարդկային գիտութիւնը կատարելագործելու ու կարգի բերելու, էր Աղէքսանդրի վարժապետը։ Աղէքսանդր, որին արդէն սկզբում ծանօթացրեց նա ցունաց գրականութեան գանձի հետ և ոգևորեց Հոմերոսի

բանասանդութեան համար, երեխայ ժամանակը ապա-
ցուցեց իւր աներկիւղութիւնը Բուկեփալոսը գսպելով
և երիտասարդութեան մէջ էլ Փերոնէայի կռիւում։
Հօր մահից յետո նստաւ նա քսան տարեկան 336 թն
Մակեդոնիոյ գահը։ Այժմ գոտաւ նորա փառասիրու-
թիւնը ընդարձակ ասպարէզ և գլխաւոր նպատակ
դրաւ իրան Պարսկաստան նուաճելը։ Բայց առաջ
պէտք է ապահովացնէր իւր անձը Ցոյների կողմից,
որոնք, երբ տեսան նրան իրանց երկրում զօրքով, կո-
րընթաց գումարած ժողովում խոստացան օգնական
լինել իրան Պարսից դէմ անելու պատերազմում։ Իսկ
երբ Աղէքսանդր իւր հիւսիսային սահմանների ա-
պահովութեան համար պատերազմ գնաց Տրիբալների,
Գետացիների և Իլլերիացիների դէմ, ու անցաւ 335 թն
Դանուբ գետի միւս կողմ, համբաւ տարածվեցաւ,
թէ Աղէքսանդր վախճանել է. ուստի և Աթենացիք
ու Թեբացիք, անխոնջ Դեմոսթենեսից գրգռած, նո-
րից ապստամբեցան։ Բայց Աղէքսանդր անկարծելի
արագութեամբ վերայ հասաւ ու քանդեց Թեբէն.
միայն տաճարներին և Պինդարի տունը խնայեց և
Աթէնքը տարսափած խոնարհեցաւ յաղթիչի առաջև։
Ողջ ձմեռ պատրաստութիւններում անցկացնելից
յետո, յանձնեց Մակեդոնիան Անտիպատրին, 12,000
էլ զօրք պահպանութեան համար և ինքը գարնան
333 թն սկսաւ իւր մեծ պատերազմը Պարսիկների
դէմ։ Պարսկաստանում 336 ից թագաւորում էր շատ

լաւ յատկութիւններով զարդարած իշխանը, Դարեհ գ. Կոդոման. բայց վատ Հանդամանաց պատահելով ոչինչ չկարաց անել յօգուտ Պարսկաստանի, որնոր խղճալի դրութեան մէջ էր այս ժամանակին, բարոյական վիճակի կողմանէ:

ՊԱՐՍԻՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ.

Աղեքսանդր 38000 Մակեդոնացիներից և Յոյներից բաղկացած քաջ և պատերազմահմուտ զօրքով գնաց նոյն ճանապարհով, որով Քսերքսէս եկել էր, անցաւ Թրակիա, Հելլեսպոնտոս ու մտաւ Փոքր Ասիա, ուր Գրանիկոս գետի մօտ Հանդիպեցաւ նրան առաջին անգամ Պարսիկներից ու վարձկան Յոյներից բաղկացած զօրքը թշնամաց, որի զօրավար էր Մեմնոն Հռոդոսացին: Սաստիկ ու կամակոր պատերազմից յաղթող դուրս եկաւ Մակեդոնական քաջութիւնը, որի գերազանց օրինակը ինքն Աղեքսանդր ցոյց տուաց, որի կեանքը Կլիտոս ազատեց այս կռվում: Այս տեղից յաղթողը, իւր իշխանութիւնը Փոքր Ասիայում լաւ հաստատելու համար, գնաց դէպի հարաւ, առաւ Սարդիկէ, Եփեսոս, Միլետոս և Ալիկառնասոս ու տիրեց Կարիային, Լիւկիային և Պամփիւլիային, այն ինչ Պարմենոն զօրավարը մտաւ Փռիւգիա, տիրեց սրան և 333 ին գարնան Գորդիոնում վերստին միացաւ Աղեքսանդրի հետ: Առաջ գնաց Աղեքսանդր և Դաղատիան ու Կա-

պատվիրան նուաճելով, հասաւ Ցարսոն, ուր կիդ-
նոս գետում լողանալիս հիւանդացաւ ասստիկ ու ա-
ռանց Փիլիպպոս բժշկի օգնութեան, որին զօրավար-
ներ դաւաճան էին կարծում, և որին նա հաւատաց
անկասկած իւր անձը, զուցէ մեռնէր էր: Հազիւ ա-
ռողջացել էր Աղեքսանդր, որ համբաւ եկաւ, թէ
Դարեհ ինքը իւր ընտիր հարիւր հազար Ասիացի
և 30,000 ցոյն վարձկան զօրքով բանակած է Իսա-
սոսի մօտ: Աղեքսանդր փութով գնաց նորա դէմ:
Պարսից թագաւորը անզգուշութեամբ ժողովել էր
իւր բազմաթիւ զօրքերը նեղ տեղում ծովի և լե-
ռան մէջ, որով և չկարաց իւր թշնամիին պատել
ամէն կողմից. բայց և այնպէս խիստ արիութեամբ
պատերազմեցան Պարսիկները, Ջարդեցին Պարմենոնի
իշխանութեան յանձնած աջ թևը և յետ քաշվե-
ցան միայն, երբ նոցա թագաւորը, անձամբ նեղ դրու-
թեան մէջ ընկնելով Աղէքսանդրի ձեռքից, թողեց
իւր պատերազմական կառքը ու փախաւ: Անբաւ էր
աւարը, ըստ որում Դարեհ արևելեան սովորու-
թեամբ հետը բանակ էր բերել միասին իւր ընտա-
նիքը ու ողջ իւր գանձերը, որոնք երկուսն էլ ընկան
յաղթիչի ձեռքը: Աղեքսանդր ինքը իւր անձը յար-
գելի արաւ այն մեծահոգութեամբ, որով նա խնա-
յեց գերեալներին և մանաւանդ Դարեհի մօր Սի-
սիգամբիսի հետ այնպիսի յարգանօք ու պատուով
վարվեցաւ, որ սա կարծեց, թէ նրանում իւր երկ-
րորդ որդուն է գտել:

Աղեքսանդր չգնաց առաջ Պարսից փախստական թագաւորի ետևից. այլ 332 ի սկզբին մտաւ Փինիկէ, ուր միայն կղզու վերայ շինած նոր Տիւրոսը ընդդիմացաւ նրան ու եօթնամեայ պաշարումից յետ առնվեցաւ: Երուսաղէմի տաճարում Աղեքսանդր զոհ բերեց Եհովային և առանց պատերազմի Եգիպտոսին տիրեց, որի բնակիչները ընդունեցին նրան իբրև իրանց ազատչին պարսկական լծից: Հիմնեց այս տեղ Աղեքսանդրիա քաղաքը, որ իւր յարմար ու յաջողակ դրութեամբ համաշխարհական վաճառականութեան կենդրոն դառաւ և միաւորեց արևելք արևմուտքի հետ. գնաց յետոյ Արամազդայ Ամմոնի տաճարը, Լիբիոյ անապատում, ուր քուրմերը նրան ըստ արևելեան սովորութեան, իւր կամքին համեմատ, յայտնեցին, թէ նա Արամազդայ որդին է: Մինչ այս մինչ այն Դարեհ ժողովեց իւր վերջին զօրութիւնները էլ, իւր թագաւորութիւնը պաշտպանելու համար: Դեռ ոչ արևելեան երկիրները մինչև Ոքսոս և Ինդոս գետը նրան հպատակ էին: Այս կողմերից 331 ին գարնան ժողովեցան ազգերը Նինուէի դաշտը Արբելա և Գաուգամելայի մօտ վերջին վճռական պատերազմը տալու իրանց թշնամուն: Հարիւր հազար հեռեակից, քառասուն հազար այրուձիից և երկու հարիւր պատերազմական կառքերից էր բաղկացած Պարսից զօրքը, այն ինչ Աղեքսանդրի բոլոր զօրքը 47,000 էր: Պարմենիոն խորհուրդ տուեց,

որ գիշերով յարձակեն թշնամիների վերայ. բայց Աղեքսանդր չհամաձայնեցաւ, ասելով թէ ինքը յաղթութիւնը գողանալ չէ ուզում։ Խիստ արիաբար պատերազմեցան Դարեհ և իւրայինները. բայց մակեդոնական անպարտելի փաղանգը ցրուեց Պարսիկներուն ու յաղթական հանդիսացաւ կատարելապէս։ Բաբիլոն, Շուշ, Պերսեպոլիս բացին իրանց դռները Մակեդոնացիների առաջ, որոնք այն տեղ գտան գաբերով հաւաքած հարստութիւններ ու գանձեր, որոնց մեծութեան վերայ հիանալով զարմանում էին։ Իսկ Դարեհ փոքր զօրքով փախաւ Կասպից ծովի կրծները, ուր Բակտրիոյ դաւառն Բեսոս կուսակալը, որ ինքն թագաւորութեան եաւ էր ընկնում, բռնեց նրան ու տարաւ Բակտրիոյ կողմ։ Աղեքսանդր ընկաւ եաւիից. բայց երկար ճանապարհ գնալից յետ գտաւ միայն թագաւորի կիսամեռ մարմինը, որին դաւաճանները, Աղեքսանդրի մօտենալը տեսնելով, սպանել էին։ Աղեքսանդր լաց եղաւ դառնապէս այսպիսի դրութեան մէջ տեսնելով նրան, որ երբեմն ամէնից զօրեղն էր երկրիս երեսին։ Մէկ տարուց գտաւ և բռնեց Աղեքսանդր Բեսոսին, որ իրան Արտաշէս դ էր անուանում, և դատապարտեց նրան իրրև տիրասպանի ու սպանել տուեց։ 329 ին և 328 ին տիրեց Աղեքսանդր Հիւսիսային և արևելեան Բակտրիա և Սոգդիանա դաւառներին, որով կատարեցաւ Պարսից բոլոր տէրութեան նուաճումն։ Մին-

չև ցայժմ էլ կան այն քաղաքների երևելի շինուածների աւերակները, մանաւանդ Պերսեպոլիսները, որոնք ծածկած են նկարներով և բևեռանման տառերով գրած վիրապրերով։

ԱՂԵՔՍԱՆԴԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾԵՐԸ.

Այս յաջողութիւններով աւելացաւ առաւել Աղեքսանդրի գործունէութիւնը։ Նորա նպատակն էր սահմանակից Հնդկաստանը նուաճել ու յաղթութեամբ հասնել Ասիոյ արևելեան ծովեզերքը։ Առանց հանգստանալու անցաւ 326 թն Ինդոս գետը, յաղթեց Պորոս թագաւորին, նուաճեց ուրիշ իշխաններ ու ազգեր էլ և հասաւ մեծ նեղութիւնների տանելով մինչև Հիւփասիս գետը։ Կամենում էր այս գետն էլ անցանել. բայց զօրքերը ընդդիմացան. բան որում կամենում էին հայրենիք դառնալ։ Ակամայ յետ դարձաւ Աղեքսանդր և նոր երկիրներ տեսնելու համար նաւեց Ինդոսի վերայ մինչև նորա բերանը, և այստեղից ցամաքով Գեդրոսիոյ անապատը անցաւ, անպատմելի նեղութիւններ կրելով ու 324 թ սկզբին հասաւ Շուշ։ Իսկ նորա ծովակալ Նէարքոս ծովի եզերքով նաւեց, մտաւ Պարսից ծոցը և հասաւ վերջապէս Տիգրիս ու Եփրատ գետերի բերանը։ Այս տեղ սկսաւ Աղէքսանդր իւր ընդարձակ թագաւորութեան ներքին կառավարութեան վերայ հոգալ։

պատժում էր անարդար ու անհաւասարիմ տեղա-
կալներուն, աշխատում էր ամուսնութեամբ Աֆրայի
ազգերը մօտեցնել Յունաց ու Մակեդոնացւոց հետ,
ծաղկեցնում էր թէ ծովային և թէ ցամաքային վա-
ճառականութիւնը ու հիմնեց շատ քաղաքներ, ո-
րոնց շատը իւր անունով Աղեքսանդրիա կոչեց ու
նոցա մէջ իւր զօրքերը բնակեցրեց: Իւր բարեկամ-
ներից միայն Հեփեստիոնն էր, որ հասկանում էր
նորա նպատակները. միւս զօրավարները ընդհակա-
ռակն սկսան տրտնջալ, երբ Պարսիկները նոցա հետ
հաւասար իրաւունքներ ստացան ու Աղեքսանդր ընդ-
դունեց արևելեան կնոջ եղանակը: Ճշմարտիւ որ
այս վերջին գործը վատ ներգործութիւն ունեցաւ
նորա վերայ. ըստ որում սկսաւ մարդերոյզների խօս-
քերը լսել, չափազանց պատուասէր դառաւ ու կար-
ծում էր, թէ չկայ ինչ, որին չկարողանայ ինքն իւր
զօրութեամբ ու բաղդով հասնել և իւր անձը ծո-
խութեան ու փափկութեան տուեց: Այն ատենն
արքեցաւ մի խնջոյքում, որ հրամայեց Պերսե-
պոլիս քաղաքը այրել, Քսերքսէսի Աթէնքը այրելուն
փոխանակ, ու միւս անգամ իւր ձեռքով սպանեց
իւր մարտակից և իւր կեանքը ազատող Կլիտոսին
նորա համար, որ նա Աղեքսանդրի հօր գործքերը որդու
գործքերից վեր դասեց: Բայց և այնպէս չկորցրեց
իւր ամէն բան ըմբռնող և կարգադրող ոգին և խիստ
ՄԾ էին նորա նպատակները, որ իւր մտքում դրել

էր կատարելու։ Կամենում էր Արաբիային տիրել. կաս-
պից ծովը նաւել, զօրաց ճանապարհներ շինել Լիբ-
իայի անապատում ու նաւահանգիստներ զանազան
տեղերում։ Շատ մօտ էր իւր նպատակին հասնելու։
Միայն երբ 324 ին Եկբատանում ամառվան վերջին
կորցրեց իւր սիրելի Հեփեստիոնին, ընկաւ ինքն էլ,
պատրաստուելան ժամանակները, վատ հիւանդու-
թեան մէջ ու տասն մի օրից վախճանեցաւ Բաբի-
լոնում, որ իրան մայրաքաղաք էր ընտրել, 323 ի
յունիսին։ Երեսուն երեք տարեկան մեռաւ Աղեք-
սանդր և տասներկու տարի և ութը ամիս միայն
թագաւորեց։ Մարմինը տարան Եգիպտոս և Աղեք-
սանդրիա քաղաքում թաղեցին։ Աղեքսանդր իր հետ
ունէր և շատ գիտնական մարդիկ, որոնք նրան հե-
տևում էին բոլոր պատերազմի ժամանակը և քըն-
նում էին նուաճած երկիրների բնութիւնը և ազ-
գերուն թէ գիտնական և թէ բարոյական կողմանէ,
այնպէս որ շատ երկիրներ և ազգեր, որոնց վերայ
Յոյները մինչև այն ժամանակ շատ թիւր կամ վեր
է վերոյ տեղեկութիւններ ունէին, առաւել մօտիկ ծա-
նօթ եղան նրանց։ Ուրեմն Աղեքսանդր այն աշխարհ-
հակալներից չէր, որոնց նպատակն էր միայն երկիր-
ների տիրելու ագահութիւնը. այլ նա իր աշխարհ-
հակալութեամբ մեծ արդիւնք ցոյց տուեց գիտու-
թեանց և արհեստներին էլ, որոնք այն ժամանակից
առաւել կատարելագործվեցան։

ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՑ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՎԻԼԸ·

Որովհետև Աղէքսանդրի ժառանգը Աղէքսանդր Էգոս գետ օրօրոցումն էր և միւս ազգականները չէին կարող կատարել տէրութիւնը, ծաղեցաւ զօրավարների մէջ կռիւ կատարութեան մասին։ ա. Դաւառները բաժանած էին մին քանիսին, իբրև տեղակալների։ Անտիպատրոս արդէն 331 ին զօրութեամբ նուաճեց Սպարտացիներուն։ Այժմ ապստամբեցան Աթենացիները և պաշարեցին Նրան Լամիայում (լամիական պատերազմ) 323 ին. բայց երբ Կրատերոս նոր զօրքով օգնութիւն հասաւ, ջարդվեցան Աթենացիները սաստիկ Կրանոնի մօտ 322 ին և տխրվեցան վերատին հպատակել մակեդոնական իշխանութեան։ Դեմոսթենէս ինքը իրան սպանեց Կալաւրիաւում։ Փոքր ժամանակից պատերազմը առաւել մեծացաւ։ Անտիպատր և Պտղոմէոս Ղագի, Մակեդոնից և Եգիպտոսի տեղեկալները, յարձակեցան Ասիոյ կատակարիչ Պերտիկկասի վերայ, որին Աղէքսանդր մեռնելու ժամանակ յանձնել էր իւր մատանին ինքով և որ փոքր Ասիայի մէկ մասին տիրող իսմատուն Եումենէսի հետ դաշնակցութիւն էր արել։ Այն ինչ Եումենէս Մակեդոնացիներուն յետ քշեց, Պերտիկկասին սպանեցին իւր դաւաճան զօրքերը Եգիպտոսում

321 ին։ բ. Այսպէս Ասիայի երկիրները նոր իշխան-
ների ձեռք ընկան։ Սելևկոսին ընկաւ Բաբելոն, և
Անտիգոնոսին փոքր Ասիայի մեծ մասը։ Սա յաղթեց
315 ին երկար և սաստիկ պատերազմներից յետ Եւ-
մենեսին, չնայելով սորա քաջութեամբ պատերազ-
մելուն։ Իսկ Մակեդոնիաումը 319 վախճանեցաւ Ան-
տիպատր բաժանելով իւր իշխանութիւնը իւր բա-
րեկամի Պոլիսպերքոնի և իւր Կասսանդր որդու մէջ,
որով և պատճառ եղաւ թշնամութեանց ծագման
Յունաստանում և Մակեդոնիաում։ Այս կռվում
Փոկիոն կորցրեց իւր կեանքը և Կասսանդր եղաւ ինք-
նակալ իշխան իւր հայրենի ժառանգութեան։ Բայց
սորա փառասիրութիւնը չյագեցաւ այն իշխանու-
թեամբ, որ նրան տուած էր մինչև կատարեալ հա-
սակ հասնելը Աղէքսանդր Էգոսի։ Ուստի և 311 ին
սպանել տուաւ Աղեքսանդրին և նորա Հռոքսանէ մօրը։
Եւ որովհետև թագաւորական ցեղի ողջ միւս ան-
դամներն (Ոլիմպիադա, Հերակլէս, Փիլիպպոս Արրիդէոս,
Կլէոպատրա, Եւրիդիկէ), և մինչև թեսսալոնիկէն
անգամ, որ Փիլիպպոսի աղջիկն էր ու Կասսանդրի
կինը, իրանց կեանքից զրկվել էին, դահը մնաց ա-
մենազօրեղին։ գ. Այն ժամանակ շատ զօրացել էր
Ասիաում Անտիգոնոս, իւր Դեմետրիոս Պոլիորկետէս
որդւոյ օգնականութեամբ։ Սա ընդունեց թագաւո-
րական տիտղոս ու նրան էլ հետևեցին ուրիշները։
Նորա դէմ միաւորվեցան 302 ին Կասսանդր, Պտղո-

մէոս, Սելևկոս և Լիւսիմաքոս, Թրակիայի կուսակալը։ Իպսոսի մօտ 301 ին վերջին երկուսի հետ պատերազմելով կորցրեց Անտիգոնոս իւր կեանքն և թագաւորութիւնը։ Բայց Դեմետրոս դեռ երկար ժամանակ պատերազմում էր Յունաստանի համար և Կասանդրի մահից յետոյ 298 ին Մակեդոնիայի համար. վերջապէս Ասիայի համար, և այս պատերազմում գերի ընկաւ իւր փեսայի՝ Սելևկոսի ձեռք ու մնաց այս գերութեան մէջ մինչև մահը, որ 284 ին վերայ հասաւ նրան։

ՍԻՒՐԻԱ (ԱՍՈՐԻՔ) ՍԵԼԵՒԿՈՍԵԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ.

Անտիգոնոսի երկիրները բաժանեցին յաղթիչները երկու մասը, Լիւսիմաքոս ստացաւ փոքր Ասիան. իսկ Սիւրիան, Միջագետքը և Հայաստան մասն ընկան Սելևկոսին։ Կուրուպեդիոնի մօտ (282) տուած պատերազմով Սելևկոս խլեց Լիւսիմաքոսից փոքր Ասիան էլ և այն երեք թագաւորութիւններից, որ ծագեցան Աղէքսանդրի տէրութիւնից (Սիւրիա, Եգիպտոս և Մակեդոնիա), սորանը ամէնից ընդարձակը և երևելին եղաւ։ Սելևկոս խաղաղասէր էլ էր և սիրում էր բարեկարգութիւններ անել։ Սա հիմնեց շատ քաղաքներ, որոնց երևելիները են Անտիոք, Ռոմանտէսի մօտ, իւր մայրաքաղաքը, ու Սելևկիա Տիգ-

բիսի մօտ. նորոգեց վանական կապակցութիւնը Հնդկաստանի հետ և աշխատում էր լաւ կառավարութիւն հիմնելու։ Նրա մահուան հետ 281 թուականին թագաւորութեան։ Բիթինիան և Պերգամոս ազատվեցան Սելևկացոց իշխանութիւնից, Դաղիացիք, Մակեդոնիան աւելի յետ, տիրեցին 277 թուականին այն երկրին, որ յետոյ նոցա անունով Գաղատիա կոչվեցաւ. և Արշակ սկիզբն դրեց Պարթևների իշխանութեան 256 թուականին։ Անտիոքոս գ. 222—187, որ իւր արած գործերի համար մեծ անուանվեցաւ, թէև խլեց Եգիպտացիներից Կոլեսիրիան, Փիւնիկէն և Պալեստինէն, արշաւեց Պարթևների, Բակտրիացիների և Հնդիկների վերայ, նուաճեց Ասիայի Յոյն քաղաքները և տիրեց Թրակիայի թերակղզուն. բայց թշնամանալով Հռովմայեցիների հետ յաղթվեցաւ և փոքր Ասիան մինչև Տորոս լեռը ընկաւ այսպէս Հռովմայեցիների ձեռքը։ Այս ժամանակներս ազատվեցան նոյնպէս մեծ և փոքր Հայոց կուսակալները և անկախ իշխաններ դառան։ Միւրիայի երևելի թագաւորներից մէկն էլ էր Անտիոքոս դ. Եպիփան 176—164, որ իւր խստութեամբ, որով ուզում էր կուսակալութիւնը Երուսաղէմ մտցնել, պատճառեցաւ Հրէաների ապստամբութեան 167 թուականին Մակաբայեցոց առաջնորդութեամբ և նոցա ազատութեան Սելևկացիների իշխանութիւնից։ Երբ ողջ երկիրը մինչև Եփրատ գետը ընկաւ Պարթևների ձեռք, Միւրիայի

թագաւորութեան մնացած մասն էլ 85 ին ընկաւ մեր Տիգրան բ. մեծի իշխանութեան տակ, որ յետոյ տուեց նա Հռովմայեցիների Պամպէոս մեծ սպարապետին, և այսպէս դառաւ Սիւրիա Հռովմայեցւոց տէրութեան գաւառ:

ԵԳԻՊՏՈՍ·

Մի անգամ էլ վիճակած էր եղել Եգիպտոսին անկախ թագաւորութիւն կազմելու: Ինչպէս շատ հին դարերում առաւել հոգևոր յառաջադիմութեամբ ու նորանոր գիւտերով այլ և այլ գիտութեանց ու արհեստից մէջ, քան պատերազմական սխրագործութեամբ երևելի եղաւ Եգիպտոս, մի և նոյն ընթացքը առան նորա նոր իշխաններն էլ և արին իրանց երկիրը ուսման և գիտութեանց տուն: Պտղոմէոս Լագի, որ առաջ Աղէքսանդրի թիկնապահ զօրաց զօրավարն էր և յետոյ Եգիպտոսի տեղակալ նշանակվեցաւ 323 ին, տիրեց այս երկրին ամենեւին և Իպսոսի պատերազմից յետ ստացաւ էլի Խոր Ասորիք, Փիւնիկէն ու Պալեստինէ: Թէև ինքը քաջ պատերազմող էր· բայց խաղաղութիւն էլ շատ սիրում էր: Աղեքսանդրիան իրան մայրաքաղաք ընտրեց, բնակեցրեց այնտեղ նոր բերած գաղթականներուն, յառաջ տարաւ այն նաւահանգիստներ ու երևելի փարոսը շինելով, հիմնեց երևելի վարժատուններ, թան-

գարան և հին դարերում ամենից մեծ և երևելի գրա-
գարանները Բրուքիոն և Սերապիոն: Մինչև Հրէ-
ականները անգամ Ծանօթացան Յունաց լուսաւորու-
թեան հետ և թարգմանեցին իրանց սուրբ գրքերը
Յունարէն լեզուով (Եօթանասնից թարգմանութիւն):
Այն ինչ ուրիշ թագաւորութիւնները լքանում էին
անդադար պատերազմներից, Եգիպտոսում ժողովվում
էին անթիւ հարստութիւններ: Ջանազան կողմեր
ձգվում էր նորա վաճառականական կապակցութիւնը.
ցամաքով կարաւանները շրջում էին Ասիան և Ափ-
րիկէն և ջրով պտտում էին նաւերը ողջ Միջերկրա-
կան կողմերը և Հնդկաց ծովերը: Ինչ որ Եգիպտո-
սում չկար, այն է, նաւաստիներ և նաւաշինութեան
համար առաջնորդ, ստանում էին Խոր Ասորիքից, Փու-
նիկէից, Կիւբենայքա գաւառից և Կիւպրոսից:

Պտղոմէոս Փիլատելփոս (284—246) խաղաղասէր
էր իւր հօր պէս: Սա գիտուն մարդիկ բերել էր
տալիս Եգիպտոս, ձեռագիրներ կամ օրինակներ ներ-
բանցից հաւաքել հրամայում էր: Սորա ժամանակ
վերջացաւ Նեքաւոյի սկսած ու Դարեհի գրեթէ ա-
ւարտած ջրանցքը, կարմիր ծովի և Նեղոսի արևել-
եան թևի մէջ, ու սկսան արդէն նաւել նորա վերայ:
Պտղոմէոս գ. Եւերգետէս (246—222). պատերազմա-
սէր էր շատ: Սորա զօրքերը հասան մինչև Բաբիլոնի
սահմանը ու լեռնային երկիրները Հայաստան: Այս ար-
շաւանքները բերին միայն փառք և աւար շատ. իսկ

նուաճած երկիրները շուտ վերստին ազատեցան: Այս երեք երևելի իշխանների հարիւրամեայ փառաւոր կառավարութիւնից յետ սկսաւ թուլանալ տէրութիւնը:

Պտղոմէոս դ. ամենեին հեռու էր իւր նախորդներից, իւր բնաւորութեամբ և կեանքի եղանակով:

Պտղոմէոս Ե. կորցրեց իւր ասիական գաւառները, որ Ասորւոց իշխանութեան տակ ընկան:

Պտղոմէոս զ. Եգիպտոսի արդէն Անտիոքոս չորրորդից (168 ին) նուաճած մասը յետ ստացաւ, միայն Հռովմայեցիների միջնորդութեամբ: Վերջապէս Կիւրենայքա և Կիպրոս էլ բաժանվեցան Եգիպտոսից, ըստ որում իրրև ընծայ մասն ընկան թագաւորի կրտսեր եղբայրներին: Առաջինը ընկաւ Հռովմայեցիների ձեռքը 96 ին կտակով, իսկ երկրորդը 58 ին բռնութեամբ: Միայն խոնարհութիւնը ուհպատակութիւնը, որ ցոյց էին տալիս Եգիպտոսի թագաւորները Հռովմայեցիներին, պահպանում էին դեռ տէրութեան անկախութիւնը: Այս երկրի վերջին թագուհին էր Կղէոպատրա (47—31), որ Կ. Յուլիոս Կեսարի օգնութեամբ գահը նստաւ և Մարկոս Անտոնիոսի պաշտպանութեամբ մնաց իւր իշխանութեան մէջ: Բայց երբ Օգտաւիանոսի դէմ Ակտիոնի մօտ պատերազմը կորցրեց 31 ին, էլ չկարաց իւր թագաւորութիւնը պահպանելու ինքը իրան զրկեց կեանքից: Այսպէս Եգիպտոս ընկաւ Հռովմայեցիների

իշխանութեան տակ։ Հռոտոսի և Պերգամոսի վիճակը մի և նոյնը էր, միայն փոքր ձևով այսինքն վաճառականութիւն և գիտութիւններ ծաղկեցան, յառաջադիմութիւններ եղան, յետոյ փոքր առ փոքր սկսան կախում ունենալ Հռովմայեցիներից, որոնց վերջապէս բոլորովին հպատակեցին (Ատտալոս)։

ԲՈՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱ.

Կասսանդրի երեք որդիներին 298—295, որոնց հետ վերջացու Անտիպատրի ցեղը, յաջորդեցին կարճ ժամանակվան ու անդադար պատերազմերի մէջ Դեմետրիոս Պոլիորկետէս, Պիւռռոս Եպիրացին, Լիւսիմաքոս Թրակիայի կուսակալը և Սելևկոս, մինչև վերջապէս 277 ին Դիմետրի որդին Անտիգոնոս Գոնատաս տիրեց գահին, և ժառանգութեամբ թողեց իր յաջորդներին։ Նորա յաջորդների գլխաւոր գործը էր, որ իրանց իշխանութեան տակ պահեն Յունաստանը, ուր նոցա ընդդէմ ծագեցան Աքայեցւոց և Էտոլացւոց դաշնակցութիւնները, մինչև որ աճող զօրութիւնը Հռովմայեցւոց իւր վերայ դարձրեց նոցա ուշադրութիւնը։ Ուստի և Փիլիպպոս բ. 221—179, դաշնակցութիւն արաւ Կարթագինացիների հետ 214 ին։ Միայն խորամանգ քաղաքականութիւնը Հռովմայ պարապացրեց նրան պատերազմերով Էտոլացիների, Պերգամոսի և Հռոդոսի հետ, մինչև որ

վերջացաւ երկրորդ Պունիկեան պատերազմը։ Բայց յետոյ Հռովմայեցիների Կուինկտոս Փլամինիոս զօրավարը այնպիսի զօրութեամբ գնաց Նորա դէմ, որ Փիլիպպոս, Կինոսկեփալէի մօտ յաղթած, ստիպվեցաւ խաղաղութիւն անելու 197։ Սա այս դաշնադրութեան համեմատ յանձն առաւ յետ կենալ Յունաստանի վերայ ունեցած իրաւունքներից, իւր բոլոր նաւատորմիղը յաղթիչներին տալ՝ և առանց նոցա հրամանի, իւր սահմանից դուրս, ոչ մի պատերազմ չբանալ։

Փիլիպպոսի որդին և յաջորդը Պերսէոս (179—168) եօթը տարի անդադար պատրաստութիւններ էր տեսնում Հռովմայ դէմ պատերազմելու համար և 172 ին ահագին զօրութեամբ սկսաւ իւր պատերազմը ու չորս տարի պատերազմեց փոփոխական բաղդով։ Վերջապէս ապացուցեց Հռովմայեցի զօրավար Պաւղոս Էմիլիոսը Պիդնայի կռվում 168 ին, որ Հռովմայեցւոց պատերազմական արհեստը գերազանց է Մակեդոնացւոց հնացած արհեստից, և զրկեց Պերսէոսին թագաւորութիւնից ու ազատութիւնից։ Մակեդոնիան սկզբում անկախ կոչվեցաւ և չորս հարկատու գաւառներ բաժանվեցաւ։ Իսկ երբ վերստին ապստամբեցաւ Հռովմայեցիների իշխանութեան դէմ, բոլորովին դառաւ Հռովմայ տէրութեան մի գաւառ 148 ին։

ՅՈՒՆԱՍՏԱՆ·

Լամիական պատերազմից յետո բոլոր Յունաստանը բացի Սպարտայից հպատակեցաւ Մակեդոնացիներին: Զարս քաղաքները Աքայիայի 281 ին նորոգեցին իրանց հին դաշնակցութիւնը միմեանց անկախութեան և օգնութեան համար և որովհետև շուտով Պելոպոնեսի տէրութիւններից մեծ մասը մտաւ այդ դաշնակցութեան մէջ, զօրացաւ Աքայիայի դաշնակցութիւնը բաւական իրան երևելի և ամէն տարի ընտրվող զօրավարների (Ստրատեգ) առաջնորդութեամբ: Արատոս և Փիլոպոմէն էին երևելիները նորա զօրավարներից: Միայն բացի իւր բնական թշնամիից Մակեդոնիայի թագաւորից, ստիպված էր շատ անգամ Աքայիա իւր երկրակիցներին Լեոպական դաշնակցութեան և Սպարտայի դէմ էլ պատերազմելու, ուր 244 ին Ագիս գ և տրա մահից յետո 241 ին Կղէոմենէս վերականգնեցին 226 ին Լիկուրգոսի օրէնքները, որ պելոպոնեսական պատերազմի ժամանակից սկսել էին ընկնել: Արանով այնքան զօրացաւ Սպարտա և ահալի դառաւ ամենին, որ Աքայացիք օգնութիւն կանչեցին նորա դէմ Մակեդոնիայի Անտիգոնոս բ. թագաւորին: Սա ուրախութեամբ յանձն առաւ ու 222 ին Սելլասիայի մօտ Փիլոպոմենի հետ միասին յաղթեց Կղէոմէնին, առաւ Սպարտան և տարաւ արանով

մեծ իշխանութիւն Յունաց վերայ։ Ուստի և Փիլիպպոս երկրորդի Հռոմայեցւոց դէմ արած պատերազմում, Յոյները սոցա կողմը բռնեցին և 197 թն արած խաղաղութեամբ, ըստ երևութին ստացան ազատութիւն։ Բայց աշխարհակալ ոգին Հռոմայեցւոց այս ուրախութիւնը նոցա շուտով տրտմութիւն փոխեց և որովհետև Աքայիան չէր կամենում անպայման հպատակութիւն ցոյց տալ, Մումմիոս զօրավարը յաղթեց պատերազմում նոցա Դիէոս Սպարտեդին, Կորնթոսի պարանոցի մօտ, այրեց Կորնթոս և ողջ Յունաստան, Աքայիա անունով, դառաւ Հռոմայեցւոց դաւառ։ Այսպէս տեսնում ենք, ինչպէս Աղեքսանդրի թագաւորութեան մասները փոքր առ փոքր ընկնում են Հռոմայեցիների ձեռք։ Այս ազգը այնպէս զօրացաւ, որ վերջապէս գրեթէ միայնակ ինաց հին պատմութեան տապարիզում։

ՀՌՈՎՄԱՑԵՑԻՔ·

ԻՏԱԼԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ·

Վերին Իտալիա, Ալպեան լեառներից մինչև Հռուբիկոն և Մակրա գետերը, ուր ըստ մեծի մասին գաղղիական ցեղեր էին բնակում, կոչվում էր Գաղղիա յայսկոյս Ալպեանց և բաժանվում էր երեք դաւառ՝ Գաղղիա յայսկոյս և յայնկոյս Պադոսի և Լիգուրիա: Միջին Իտալիան, որով իսկապէս սկըսում է Թերակղզին, պարունակում էր մինչև Սիլարոս և Փրինտոն, վեց դաւառներ, որոնց երեքը արևելեան կողմումը՝ Ումբրիա, Պիկենոն, Սամնիոն և երեքը արևմտեանումը՝ Ետրուրիա, Լատիոն և Կամպանիա, բաժանվում էին Ապպենիներով: Ստորին Իտալիան չորս դաւառներ էր բաժանվում՝ Լուկանիա և Պրուտտիոն արևմուտքումը, Ապուլիա և Կալաբրիա արևելքումը: Գլխաւոր գետերը կոչվում էին՝ Պադոս, Աթեսիս (Էջ) և Տիբերիս: Քաղաքները, բացի Ետրուրացիների քաղաքներից և Յունաց գաղթականներից,

բան մեծի մասին Հռոմից յետ ծագելոյն: Սոքա պատմութեան մէջ կ'յիշուին: Երեք մեծ կղզիները, մանաւանդ Սիկիլիա, սկզբում անկախ էին. իսկ յետոյ Հռոմայեցիներից նուաճուելով դառան նոցա տէրութեան գաւառներ:

ԻՏԱԼԻԱՅԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

Իտալիայի նախկին պատմութիւնը մութ է խիստ և առասպելախառն: Նախկին ժամանակներում բնակում էին այստեղ զանազան ազգեր, բան մեծի մասին Պելասգեան ցեղից, որոնց երեւելիները էին Աւսոնք, Ումբրացիք, Տուսկիացիք, Սիկուլք: Առասպելը պատմում է թէ 1400 ին Տիւռենացիք Լիդիայից եկան Իտալիայի արեւմտեան եղերքը, և Տուսկան կամ Եթրուրիան, այժմեան Տոսկանան, լուսաւորեցին և մշակեցին: Յետոյ երեքտասաներորդ դարի միջին, Եւանդրի առաջնորդութեամբ Արկադացւոց գաղթականներ Լատին են տեղափոխում. մի և նոյն երկրում երկոտասաներորդ դարի սկզբում Լատինոս թագաւորի մօտ հիւրընկալութիւն է գտնում Տրոյացիների Էնէաս իշխանը, որի որդին Ասկանիոսը Ալբալոնգա քաղաքն է հիմնում: Սորին Իտալիայի ծովեզրը, Յունաց քաղաքներով ծածկած գոլով, Մեծ Յունաստան էր կոչվում: Հին ժամանակում այս ընդարձակ բնակիչներից ամէնից գերազանցը Տուսկիացիք

էին իրանց լուսաւորութեամբ, ըստ որում հմուտ էին ճարտարապետութեան և նկարչութեան: Սոքա կազմեցին դաշնակցութիւն տասներկու միմեանցից անկախ քաղաքների: Նոյնպէս ցոյն գաղթականները սարին Իտալիայի պողաբերութեամբը և երկրին ծովային վաճառականութեան համար յարմար դրութեամբը հասան մեծ հարստութեան և լուսաւորութեան: Բայց ոչ սոցանից և ոչ նոցանից, այլ Միջին Իտալիայի արևմտեան ափումը ծագեց այն քաղաքը, որ երկու անգամ պէտք է բոլոր աշխարհի տիրէր, մի անգամ զէնքով և միւս անգամ հոգևոր զօրութեամբ, որ և մինչև ցայժմ 2500 տարիից աւելի երևելի է իւր արհեստներով և հնութիւններով:

ա. Հռովմի պատմութիւնը մինչև ժողովրդականների Պատրիկների հետ հաւասարվելը Լիկինեան օրէնքներով 753—366.

ՀՌՈՄՈՒԼՈՍ·

Հռովմի սկիզբն էլ պատած է առասպելի մէգով: Սա պատմում է, թէ Հռոմուլոս և Հռեմոս՝ երկուորեակները Ալբալոնգայի թագաւորական ցեղից, զարմանալի կերպով ազատվում են մահից, որ պէտք է տիրեր գետումը գտնէին, մեծանում են անծանօթ գոլով իրանց ծննդեանը, և յետոյ, երբ յայտնվում

է իրանց ծագման զարգանքը, բարձրացնում են վերա-
տին իրանց մեծ հոր Նումիտորին Ալբալոնգայի գահը
ու հիմնում են երեք ազգերի սահմանի վերայ Տիբեր
գետի մոտ Հռոմ քաղաքը 753ին Ն. Ք.: Վէճում մը, թէ
որի անունամբ պէտք է կոչվի նորաշէն քաղաքը, սպան-
վում է Հռեմոս Հռոմուլոսի ձեռքով: Հռոմուլոս,
քաղաքի բնակիչների թիւը բազմացնելու համար,
յայտնում է իւր քաղաքը տեղի ապաստանի ամէն
աքսորածների և դատապարտածների, որոնց համար
յետոյ յափշտակում է կանայք, որ պակասում էին:
Այս յափշտակութեան պատճառով ծագեցաւ պա-
տերազմ մերձակայ ազգերի հետ, որոնց ամենահը-
զօրը՝ Սաբինացիք, գուցէ, վախճան դնէին նորածին
հռոմէական թագաւորութեան, եթէ երկու կողմերն
էլ քաջութեամբ պատերազմելից յետ յափշտակված
կանանց և աղջիկների միջնորդութեամբ դաշնապ-
րութիւն չանէին: Այս դաշինքով Սաբինացիները
պէտք է իրանց Կուրէս մայրաքաղաքը թողնէին ու
տեղափոխվէին Հռոմ: իսկ Հռոմայեցիները Սաբե-
նացուց Տիտոս Տատիոս թագաւորին Հռոմուլոսին իշ-
խանակից ճանաչէին և իրանք Կուիրիտէս անուան-
վէին (Կուրէսի անունով): Բայց շուտով, ինչպէս երե-
ւում է, Տատիոս խաչնդրուն զորով Հռոմուլոսի իշ-
խանութեանը, սորա հրամանով սպանվում է: Հր-
ոմուլոսի ժամանակին են վերաբերում՝ 753—716
Ծերակոյտի հիմնումն, (պատրէս) և քաղաքացիների

երկու մասն բաժանվելը՝ Պատրիկներ (իշխող քաղաքացիք) և ժողովուրդը (Պլեբէյ—հպատակներ), որոնք միմեանց հետ պաշտպանողական դաշինքով կապված էին։ Թէև Հռոմուլոս պատել էր իւր անձը ապահովութեան համար երեք հարիւր ձիաւոր թիկնապահներով. բայց և այնպէս մեռաւ անբնական մահով։ Հռովմայեցիք պատուեցին նորա յիշատակը, ասելով, թէ աստուածային ծագումն ունէր Հռոմուլոս և դարձաւ իւր հօրը Մարսի մօտ, որ պատերազմի աստուածն էր։

ՀՌՈՄՈՒԼՈՍԻ ՑԱՋՈՐԴՆԵՐԸ.

Հռոմուլոսից յետ վեց թագաւորներ նստան Հռովմի գահը։ Մի տարի Հռոմուլոսի մահից յետ էր Հռովմումը անիշխանութիւն ու յետոյ թագաւոր ընտրվեցաւ Նումա Պոմպիլիոս 716—673։ Սա էր խաղաղասէր և բարեխառն իշխան, որ և՛ խիստ կարիւոր էր այնպիսի զանազան պատերազմերից վայրենացած ազգին։ Ուստի և աշխատում էր Նումա, նորանոր կրօնական սովորութիւններ և ծէսեր կարգելով, Հռովմայեցիների բարքը ու վարքը մեղմացնել։ Սրան են վերաբերում կարգումն քուրմերի և հաւատմունքի, Վեստայի և Յանոսի երկրպագութիւնը։ Նոյնպէս սա բաժանում է արքունի երկիրները աղքատ քաղաքացիներին։ Սորա յաջորդը

Տուլլոս Հոստիլիոս 673—640 վերատին նուիրեց իւր ժամանակը պատերազմերի, և չմնայեց մինչև Ալբալոնգա մայրաքաղաքին անգամ: Միայն պատերազմ չպատահեցաւ այստեղ, այլ երկու կողմից ընտրած երեք եղբայրների մենամարտութիւնը վճիռ տուեց յաղթութեան: Հռովմայեցիների կողմից էին երեք եղբարք Ովրատիոսները և Ալբայեցիների կողմից Կուրատիոսները: Մի Ովրատիոսի խորամանկութիւնը, յաղթող հանդիսացրեց Հռովմայեցիներուն և Ալբայեցիները բաղմացրին Հռովմի ժողովրդեան թիւը, թողնելով իրանց քաղաքը և Հռովմ գաղթելով: Երբ Տուլլոս, ինչպէս պատմում են, սպանվեցաւ կայծակի հարուածով, Անկոս Մարկիոս, Նումայի աղգականը, թագաւոր ընտրվեցաւ 640—616: Սա շատ յաղթած լատինաց քաղաքների բնակիչներուն տեղափոխեց Հռովմ, որով ժողովրդեան թիւը աւելի մեծացաւ. ընդարձակեց տէրութեան սահմանը մինչև Տիբեր գետի բերանը, ուր հիմնեց Օստիա քաղաքը: Տարկուինիոս Պրիսկոս, մի հարուստ Ետրուրիա գաղթած Կորնթացի քաղացու որդի, իւր նոր բնակութեան տեղումը՝ Հռովմում իւր իմաստութիւնով և առատաձեռնութիւնով սիրելի դառաւ ժողովրդեան ու թագաւորութեան արժանացաւ: Սա իշխեց 616—578: Սա շինեց մեծ հրապարակը, ստորերկրեայ ջրմուղներ և Հռովմի պատերը և առաջինը հիմն դրեց Արամազդի կապիտոլեան տաճարին:

Սերվիոս Տուլլիոս, ստորին ցեղից, որ առաջ փեսայացաւ և յետոյ յաջորդ դառաւ Տարկուինիոս Պրիսկոսին, 578—534, ամենևին փոխեց տէրութեան ներքին ձևը: Սա բաժանեց քաղաքացիները իրանց կարողութեան համեմատ վեց մասն: Հարուստները, որոնք 100,000 կամ առաւել Աս ունէին կազմում էին առաջին դասը և միւսեր պէտք է ունենային 75,000, 50,000, 25,000, 12,500 կամ առաւել փոքր: Բայց այս կարողութեան համեմատ նշանակվեցան և իրաւունքները և պարտաւորութիւնները, մանաւանդ զինուորական պաշտօնը, այնպէս որ հարուստները առաւել մասնակից պէտք է լինէին կառավարութեան գործքերին, բայց ընդ նմին պարտական էին ծանր և բազմաձախս պաշտօններ էլ կատարելու: Այս վերոյիշեալ վեց դասերը բաժանվում էին վերստին, գրեթէ, 190 կենտուրիա (այսինքն խումբ հարիւրների): Ամէն տարի նորից քննվում էր ամէն մէկի կարողութիւնը: Այս կարգադրութիւններով թագաւորը խիստ ատելի եղաւ պատրիկներին: Սրան սպանեց Ծերակոյտի մէջ իւր փեսան Տարկուինիոս Գոռոզը, որ և յաջորդեց նրան 534—510: Թէև մեծամեծ գործեր էլ կատարեց սա, վերջացրեց Կապիտոլիոնի շինումն, Հռոմը շինեց Լատինաց քաղաքների գլուխ, գաղթականներ խրկեց զանազան տեղեր և իւր երէց որդու Սիքստոսի ձեռքով տիրեց Գաբիէս քաղաքին, բայց իւր հպար-

ութեամբ ու խստութեամբ ամէնին ասելի եղաւ թէ պատրիկներին և թէ ժողովրդականներին։ Առաւել վատ հեռանալ ունեցան նորա որդու ամարդի բռնութիւնները. ուստի և երբ նա գնացել էր Հռոմից և պարապած էր հռոմուլեանների Արդէա քաղաքի պաշարումով, Հռոմայեցիները ապստամբեցան, չթողին նրան էլ յետ Հռոմ մտնելու և չկամեցան առաւել նրան իրանց թագաւոր ընդունելու 510 ին։

ԱՌԱՋԻՆ ՀԻՊԱՏՈՍՆԵՐԸ, ՊՈՐՍԵՆՆԱ.

Հռոմի թագաւորութիւնը Տարկուինիոս գոռոզի աքսորումից յետո փոխուեցաւ Հասարակապետութիւն, որոնք աւելի ցանկալի էր Պատրիկներին, որոնց իրաւունքները սեղմում էին թագաւորները իրանց զօրութեամբ, յինելով Հարկաւոր ժամանակը Հասարակ ժողովրդի զօրութեան վերայ։ Թագաւորութեան ջնջվելից յետո, թագաւորի իշխանութիւնը անցաւ ուրիշ պաշտօնատարների, որոնց գլխաւորները Հիւպատոսներն էին և որոնք սկզբում գրեթէ ամէնքն էլ ընտրվում էին Պատրիկներից։

Յունիոս Բրուտոս և Տարկուինիոս Կոլլատինոս եղան առաջին Հիւպատոսները 510 Ն. Ք. Ք։ Այս կառավարիչները, որոնք ամէն տարի սկզբում միայն Պատրիկներից ընտրվում էին, բռնում էին թագաւորի տեղը, միայն սարսափած իշխանութիւ-

նով։ Ծերակոյտումը նախագահ էին, զատաստանը իրանք էին վճռում և զօրքերին էլ առաջնորդող էին պատերազմում։ Սոցա իշխանութեան արտաքին նշանը էին տաճարիկու լիկտորները, որոնք մի խուրձ ճիւղերի տապարով ձեռքերը բռնած առջևից գընում էին։ Երբ իրանց պաշտօնից դուրս էին գալիս, գառնում էին նոքա սովորական մարդիկ, որոնց կարելի էր զատաստանի կանչել ու իրանց գործքերի հաշիւը պահանջել։

Հէնց սկզբումը ընկաւ Հռովմայեցիների մատաղ հասարակապետութիւնը մեծ վտանգների մէջ։ Տարկուինիոս անխոնջ աշխատում էր կրկին թագաւորութեան հասնելու։ Առաջ Տարկուինիոս թագաւորը կազմեց մի նշանաւոր դաւակցութիւն Հռովմումը, որ բացվեցաւ և Բրուտոսի երկու որդիքը իրանց հօր հրամանով, ուրիշ երիտասարդների հետ միասին, զբաղվեցան կեանքից։ Արանից յետո Տարկուինիոսի և Ետրուրացիների դէմ ծագած պատերազմումը Արսիա անուանի մօտ ընկան կռվումը երկու կողմի զօրքերի զօրավարներն էլ, Բրուտոսը և Արունս Տարկուինիոսը, թագաւորի որդին, մենամարտութեամբ, առանց մի վճիռ տալու կռուին։ Առաւել վտանգի մէջ ընկան Հռովմայեցիները, երբ Կլուսիոնի թագաւորը Պորսենան զէնք բարձրացրեց Տարկուինիոսի համար 508 ին։ Հռովմը առաջին յարձակմամբ կ'նուաճվէր, և կ'կորչէր, եթէ Ոսիրատիոս Կոկլէս չարդելէր թշնա-

մինչեւ Տիրերի կամուրջի ծայրումը, մինչեւ նրան կողերը։ Հռոմայեցիների իրանց քաջութեամբ պաշտպանելը ու Մուկիոս Սկեվոլայի անձնանուէր լինելը ստիպեցին Պորսենային յետ դառնալու։ Վերջապէս միաւորեց Տարկուինիոս ողջ Լատինացիներուն 498 ին Հռոմի դէմ։ Հռոմայեցիները քաջութեամբ դէմ կեցան թշնամիներին, ընտրելով մի իշխանապետ (դիկտատոր), որ մեց ամիս անսահման իշխանութիւն ունէր, և Պոստումիոս Ալբոսի առաջնորդութեամբ Հռեգիլեն լճին մօտ յաղթութիւն գրաւան, որ նրանց խաղաղութիւն բերեց։ Տարկուինիոս, որ բոլոր իր ժառանգներուն կորցրեց պատերազմերում, ոգով ընկճվեցաւ, գնաց Կումա ու մեռաւ այնտեղ 495 ին։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒՄՆ· ԿՈՐԻՈԼԱՆՈՍ·

Այս պատերազմերի ժամանակը արդէն ծագեցան ներքին երկպառակութիւնները։ Պատրիկները, որոնց ձեռքումն էր միայն կառավարչական իշխանութիւնը, մեծացնում էին իրանց հարստութիւնները հասարակաց երկիրները վարձու տալով, որոնց վերայ իրանք միայն կամենում էին իրաւունք ունենալ։ Իսկ ժողովրդականները ընդհակառակն անընդհատ պատերազմերի պատճառով, յետ մնալով երկրագործութիւնից, աղքատանում էին այսպիսի հանգամանք-

ների մէջ, ընկնում էին պարոքների տակ և իրանց պարտատէրերի բռնութիւններից յուսահատում էին։ Որովհետև Պատրիկները բացատրեցին նրանց բոլորովին պարտատէրերի անտանելի իրաւունքները մեղմացնելու, որոնք շատ խիստ էին, որովհետև նոքա պարտապանի թէ անձը և թէ բոլոր ընտանիքը ու կայքը մատնում էին պարտատիրոջ կամքին, որոյ դէմ աղքատ պարտապանը ոչինչ պաշտպանութիւն չունէր ու այսպէս պարտատէր Պատրիկների բիրտ բարքը աւելի դառնացրեց ժողովրդականների վիճակը, որոնք 'ի վերջոյ յուսահատութեան մէջ ընկան։ Ժողովրդականները իրանց այս դառն վիճակից ազատվելու համար համաձայնեցան 494 թն Հռոմի մերձակայ նուիրական կոչված լերան վերայ դադրելու ու այնտեղ նոր քաղաք հիմնելու։ Պատրիկները զղջացին իրանց խստութիւնը, պարոքներին թողութիւն արին, ազատեցին արդէն պարոքների պատճառով սարկութեան մէջ ընկածներուն, և իրաւունք տուին ժողովրդականներին իրանց մէջից ազգային տրիբուններ ընտրելու — առաջ երկու, յետոյ հինգ և վերջապէս տասն — որոնք Ծերակոյտի մէջ կարող էին պաշտպանել նոցա իրաւունքները և իրանց „արգելում եմ" (veto) ասելով Ծերակոյտի ամէն վնասակար վճիռներին առաջը առնել։ Նոցա անձը սուրբ էր համարվում և անմերձենալի։ Այս պայմաններով դարձան ժողովրդականները կրկին Հռոմ։ Ցնչին առիթ մի

բաւական էր այս պայմանները խանգարելու։ Մարկոս Կորիոլանոս պատրիկը 491 թն, մեծ սովի ժամանակ, ընդդէմ կեցաւ ժողովրդին ցորեն բաժանելուն, ասելով թէ քաղցածութիւնով կարելի է նրան տխրել արիւնութեան իրաւունքից յետ կենալու։ Մեծ անբաւականութիւններ ծագեցան սրբանից։ Տրիբունները գառաստանի կանչեցին ազգային ժողովքի առաջ Կորիոլանին, որ վախենալով խիստ վճռից փախաւ Վոլսկեանց մօտ։ Արանց յորդորեց պատերազմելու Հռոմի դէմ և ինքը այնպէս յաջողութեամբ առաջնորդեց նրանց, որ Հռոմ 489 թն մեծ վտանգի մէջ էր։ Ցնայելով որ ժողովուրդը, ծերակոյտը և քուրմերը, կիները և որդիքը, որոնք Հռոմումը մնացել էին, խնդրեցին նրան խնայել իւր հայրենիքին ու խաղաղութիւն անել, նա մնաց անողոքելի. բայց երբ իւր զառամեալ մայրը յայտնվեցաւ բանակումը, էլ չկարաց սորա խնդիրքին ընդդէմ կենալու, վերաառաւ պաշարումն և զոհ եղաւ խաբված Վոլսկեանց վրէժխնդրութեան։ Այսպէս թէև երևեցաւ նոր կարգադրութիւնների օգտաւէտութիւնը ժողովրդականաց համար, բայց երկպառակութիւնը երկու կարգերի մէջ դեռ կար։ Ուստի և ամենշան էին սահմանակից ազգերի դէմ արած պատերազմերի հետևանքները, ցնայելով, որ Կուինկտիոս Կինկինատոս դիկտատորը երևելի յաղթութիւններ արաւ նրանցից շատերի դէմ։

ՕՐԻՆԱՑ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱԽՏԱԿՆԵՐԸ·

Հռոմ գեռ գրած օրէնքներ չունէր։ Թագաւորները և նոքանցից յետո հիւպատոսները կորում էին դատաստանը իրանց կամքի ու հասկացողութեան համեմատ։ Բայց երբ ժողովրդի թիւը մեծացաւ և ընդ նմին դատաստանի դիպուածներն էլ շատացան, երևեցաւ գրաւոր օրէնքների կարօտութիւնը։ Մանաւանդ կարօտութիւն ունէին նրանում ժողովրդականները, ուստի և ազգային տրիբունը Տերենտիլոս Արսա ուխտամեայ ընդդիմակացութիւնից յետո կարողացաւ (494 ին) գլուխ բերելու, որ երեք ընտրվածներ խրկվին ուրիշ ազգերի, մանաւանդ Յունաց տէրութիւնների, օրէնքները սովորելու և հաւաքելու։ Սոցա դառնալից յետո ընտրվեցան 451 ին տասն մարդիկ, որոնք պէտք է գրէին օրէնքներ ու այն միջոցումը ողջ իշխանութիւնը նոցա ձեռքում լինէր։ Նոյն տարուան մէջ օրինաց տասն տախտակներ պատրաստվեցան և հրապարակումը կախվեցան, որոնց վերայ յետագայ տարին էլի երկու տախտակ աւելացան։ Բայց տասնապետները, իրանց գործը աւարտելից յետո, էլ չէին ուզում թողնել ստացած իշխանութիւնները, մինչև որ երևելին նրանցից Ապպիոս Կլաւդիոս պատճառ եղաւ Վերգինիոսի իւր հարազատ աղջկան սպանելուն։ Արանից ծագեցաւ ընդհանուր անբաւականու-

թիւն, տասնապետները զրկվեցան իրանց իշխանու-թիւնից և հիւպատոսութիւնը ու միւս պաշտօն-ները կրկին վերականգնեցան: Այս օրէնքներ էլ չը-ջնջեցին զանազանութիւնը Պատրիկների և ժողովը-դականների մէջ, ուստի և սոքա սկսան նոր քայլեր անելու այդ նպատակին հասնելու համար: Կանու-լէոս տրիբունը 445 ին նոր օրէնք հանել տուաւ, որով ժողովրդականները խնամութիւն կարող էին անել Պատրիկների հետ և նրանցից կարող էր ընտրվել, թէև ոչ հիւպատոսը, միայն գոնէ հիւպա-տոսական իշխանութիւն ունեցող պաշտօնեաները, որոնք զինուորական տրիբուններ էին կոչվում: Պատ-րիկներն էլ իրանց կորուստը վարձատրելու համար 443 ին համարակալութեան պաշտօնը բաժանեցին հիւպատոսի իշխանութիւնից, ու իրանցից ընտրե-ցին երկու համարակալներ, որոնց պաշտօնը ամէն հա-մարակալութիւնից յետ նորոգվում էր: Հասարակաց երկիրների մասնակցութեան իրաւունքը չկարացին ստանալու ժողովրդականները. բայց առ ժամանակ բաւականացան նրանով էլ, ինչ որ ստացան: Ուստի և յիսուն տարիից առաւել հանդարտեցան ներքին խռովութիւնները և Հռովմայեցիները կարող էին իրանց ուժը արտաքին թշնամիների դէմ դարձնել: Վոլսկեանք և Եկուեանք յաղթվեցան:

ՎԷՅԻ ՔԱՂԱՔԻ ՆՈՒԱՃՈՒՄՆ· ԳԱՂԼԻԱՑԻՆԵՐԻ ՀՌՈՎՄ ԳԱԼԸ·

Հռովմի թշնամիների մեջ ամէնից հզօրը Վէյի քաղաքի բնակիչներն էին: Իրանց յոյսը քաղաքի պատերի ամրութեան վերայ դնելով, Վէյացիները մըղում էին բազմաթեայ պատերազմներ Հռովմի դէմ, որոնք արդէն 482 ին սկսվեցան և 474 ին երկու կողմն էլ ձանձրանալով և թուլացած գոլով խաղաղութիւն արին քառասուն տարով: Պատերազմը սկսաւ նորից և Հռովմայեցիները յանձն առին, մի քանի փոփոխական անյաջողութիւններից յետո, ամէն միջոց գործածելու այս իրանց ոխերիմ թշնամիներուն ջնջելու համար: Պաշարումն սկսաւ 405 ին և արտաքոյ սովորութեան ձմեռն էլ շարունակվեցաւ ու առաջին անգամ հեռաւակ զօրքերին վարձ նշանակվեցաւ: Ցանաամեայ պաշարումնից յետո 396 ին յաջողեցաւ սորերկրեայ ճանապարհով Մ· Փուրիոս Կամիլլոս դիկտատորին Վէյի քաղաքի առումն: Միւս նորուրացի քաղաքները չկարացին օգնել Վէյուն, ըստ որում Գաղղիացիները յարձակել էին այդ ժամանակ վերին Իտալիա և կողոպտում էին նոցա երկիրներն էլ: Երբ սոքա 381 ին հասան Կլուսիոն, Հռովմայեցւոց դեսպանները (փարիզանները), որոնք պէտք է միջնորդ լինէին խաղաղութեան, սխալեցան

ու Դաղղիացիներին դէմ ապած մի յարձակութիւն մանակից եղան։ Սոքա, այս գործը ազգային իրաւունքին դէմ համարելով, կատաղեցան և դարձան Հռոմի դէմ։ Այլիս գնաց մեռ դուրս եկաւ Դաղղիացիներին դէմ Հռոմէացիներին զօրքը և Ներոնց առաջին յարձակմանը չդիմանալով փախաւ, խայտառակաբար։ Հռոմէական մեծ յուսահատութիւն ծագեցաւ, քաղաքացիները, պաշարութեան պատրաստութիւն չունենալով, թողին քաղաքը թշնամիներին ու փախան Կապիտոլիան մասն։ Դաղղիացիները քաղաքումը մնացած ծերերուն ապանեցին, աւարը կողոպտեցին և քաղաքը կրակ տուին։ Որովհետև նոցա նպատակը Կապիտոլիան առով առնելը չյաջողեցաւ, փորձեցին մի մութ գիշերուան ժամանակ մեր երթալ և գրեթէ հասել էին պատի գլուխը, միայն ագերի աղաղակը մատնեց Ներոնց և Մանլիոսը (ուստի և Կապիտոլիան) վերայ հասաւ և արգելք եղաւ նոցա նպատակին։ Դաղղիացւոց զօրավարը Բրենոս յանձն առաւ հարար լիար ոսկով յետ դառնալու, բայց Կամիլլոս, որ աքսորած էր և էլի յետ կանչեցաւ Արդէայից, նոր ժողոված զօրքերով եկաւ, Ջարդեց Բրենոսին և կողոպտած աւարը ամբողջ էլի յետ առաւ։

ԲԱՂԱԲԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՒԱՆՑ ՀԱՒԱՍԱՐՈՒՄՆ·

Այրած տները նոր շինելով և ծանր հարկերով, որոնք դրած էին զինուորների փարձի համար, ժողովրդականները վերատին ընկան նոր պարարքների մէջ, ուստի և Պատրիկները արտօնութիւնները վերատին ծանր երևեցան նրանց։ Այս դժուար գրութեան օգնելու համար Լիկինիոս Ստոլոն և Սեքստիոս Լատերանոս տրիբունները երեք առաջարկութիւններ արին. ա. թէ պարարքները պէտք է թեթևացնել. բ. թէ ոչոք չհամարձակի հինգ հարիւր օրամարից առաւել երկիր ունենալ և գ. թէ հիւպատոսներից մէկը ժողովրդականների մէջից ընտրվի — և տասն տարի աշխատելից յետ գլուխ տարան այս գործը 366 թու թէև Պատրիկները հնարեցին իրանց համար վերատին մի նոր պաշտօն, այն է պրետորութիւն — պաշտօն դատաւորի, որ մինչև ցայժմ հիւպատոսներն էին կատարում — ասկայն ժողովրդականները, որոնք արդէն ամէնից երևելի պաշտօնի իրաւունքին, այսինքն, հիւպատոսութեան հասել էին, փոքր առ փոքր ստացան ամէն միւս պաշտօնների իրաւունքն էլ. ինչպէս 356 թու դիկտատորութեան, 351 թու համարակալութեան, 337 թու պրետորութեան և 300 թու քրմապետութեան։ Ժողովրդականների և Պատրիկների իրաւանց մէջ հաւասարվելովը սկսում է նոր շրջան

Հռոմայեցւոց պատմութեան։ Թագաւորների ժամանակը ծագում է այս բաժանումն, յեռոյ ժողովրդականները մինչև 366 կռվում են հաւասար իրաւանց համար. և վերջապէս հաւասարութիւնը գալիս է, ժողովրդեան զօրութիւնը երկպատկվում է ու ահալի է դառնում թշնամիներին։

ՀՌՈՎՄԷԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՄԻՆՉԵՒ ՍԱՄՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՐԸ.

Աբղէն Հռոմայեցիների մղած ներքին և արտաքին պատերազմերից պարզապէս երևում է Հռոմէական ազգի բնաւորութիւնը, որի էական յատկութիւններն են կամքի հաստատութիւնը, անձնազոհութիւնը, այրական քաջութիւնը, քաղաքական խոհեմութիւնը և ծանրաբարոյութիւնը։ Աղբիւրը և հիմն այս յատկութիւնների կայանում էր Հռոմայեցու յարգանքի և հաւատի մէջ դէպի իր տէրութեան պաշտպան Զաստուածները, որոնց հովանաւորութեան տակ նա յոյս ունէր իւր հայրենիքի յաւիտենականութեան վերայ։

Երկու հարիւրամեայ անընդհատ վէճը Հռոմայեցւոց ազգի երկու դասերի մէջ (պատրիկների և ժողովրդականների) իրաւունքների հաւասարութեան համար տուեց նոցա բնաւորութեանը խիստ և կոպիտ գոյն, որ նրան անընդունակ արեց ամէն քնքոյշ

և ոգի կրթող առարկաների համար. ուստի և երկար ժամանակ արհեստը ու գիտությունը չկարողացան արգաւանդ երկիր գտնել իրանց համար Հռովմայեցիների մէջ։ Ընդհակառակն հին Հռովմայեցու սէրը դէպի երկրագործութիւն հիմն եղաւ նորա չափաւոր կենցաղավարութեան և հեռու պահեց նրան ամէն տեսակ շռայլութիւնից։ Այս շրջանում Հռովմայեցւոց մեծագործութիւնը, մինչև անգամ ճաշակը և փառայեղութիւնը, ճարտարապետութեան վերաբերութեամբ, երևեցաւ ոչ թէ մասնաւոր, այլ հասարակաց շինուածների մէջ (Ապպիոսի գինուորական ճանապարհը և Հռովմի ջրանցքները)։

Լատինական լեզուն, որ նոյն տարրներից գոյացաւ, ինչից որ կազմվեցաւ Հռովմայեցւոց ազգը, այս շրջանում մեծաց զարգացման շատ ստորին աստիճանում և իր զօրութիւնը, ճշդութիւնը, պարզութիւնը և վսեմութիւնը, որ նորա յատկութիւններն են, ստացաւ յետին ժամանակներումը։ Հռովմայեցիները, մինչև իրանց ծանօթանալը Յոյների մատենագրութեան հետ, ոչ մի նշանաւոր գրականական գործ առաջ չբերին։

Բայց Հռովմէական ոգին և հանճարը երկու առարկայի մէջ անկախ, իրան յատուկ և մեծ եղանակով զարգացաւ, այն է, իրաւագիտութեան և պատերազմական արհեստի մէջ։

Հռովմէական իրաւաբանութիւնը ուղղած էր դէպի

այն, ինչ որ կազմում էր Հռոմայեցու կեանքի խնդիրը, այն է, պաշտպանել ձեռք բերած իրաւունքները (իրաքանչիւրին իւրը հատուցանել)։ այն ինչ ցոյները արդարութեան միւս մասերն էլ աչքից չէր թողնում, այսինքն, շարութիւնը իրրև անարդարութիւն, նոցա հասկացողութեամբ, պէտք է նոյնպէս իւր հատուցումն առնար։

Հռոմէական օրէնսդրութեան հիմն կազմեցին վերևը յիշած տասներկու տախտակները օրէնքների, որոնց վերայ յետոյ աւելացան նոցա մեկնութիւնները և պրէտորների հրամանները, որոնցից գոյացաւ հռոմէական օրէնքների ժողովածուն։

Հռոմայեցւոց պատերազմական արհեստը, որ շատ ամուր կապերով կապած էր նոցա տէրութեան կառավարութեան հետ, այս շրջանում արդէն բաւական առաջացած էր. բայց իր կատարելութեան հասաւ նա այն ժամանակ, երբ Հռոմայեցիները ծանօթացան ցոյների պատերազմական արհեստի հետ։

Հռոմէական զօրքը բաժանած էր լեգէոնների։ 4—5000 բարեկարգ, ընտիր և լաւ զինաւորած հետեւակ զինուորներ և 3—400 հեծեալներ կազմում էին մի լեգէոն։ Լեգէոնները բաժանվում էր 10 գունդ (կոհորտա)։ Սպարապետը ունէր իր իշխանութեան տակ երկու օգնականներ, որ լեգատ էին կոչվում, և ամէն լեգէոնի հետ կային 6 զինուորական տրիբուններ։

բ. Արտաքին յառաջադիմութիւնը ու մեծանալը Հռոմայեցւոց տէրութեան մինչև ի Մակեդոնիայի, Յունաստանի և Կարթագինէի նուաճումն 146։

ՍԱՄՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԵՐԸ։

Այս պատերազմերի առիթ տուին իրանք պատերազմասէր Սամնիացիները։ Սոքա սկսան նեղացնել Կամպանիայի բնակիչներուն, որոնք պաշտպանութիւն խնդրեցին Հռոմայեցիներից և նրանց յանձնեցին իրանց երկիրը։ Այսպէս սկսվեցաւ առաջին սամնիական պատերազմ 343—341, որ Սամնիացւոց երկու անգամ սաստիկ ջարդուելից յետ Կաւրոս լերան ու Սուեսուլայի մօտ վերջացաւ դաշնադրութիւնով։ Սրանից յետ ապստամբեցան Լատինացիք, Հռոմայեցիների դաշնակիցները, որովհետև նոցա պահանջմունքները, թէ Ծերակոյտի կէսը ու մի հիւպատոսը իրանցից ընտրվին, չկատարեցան։ Վիսուվի մօտ պատահած արիւնահեղ պատերազմում 340 Հռոմայեցիք յաղթեցին, միայն իրանց հիւպատոսի Դեկիոս Մուսի կամայ իւր անձը զոհելովը։ Երկրորդ յաղթութեամբ Մինտուրնէայի մօտ 338 ին բոլորովին նուաճվեցան Լատինները։ Այս միջոցումը Սամնիացիները կրկին զօրացել էին արդէն։ Երկրորդ պատերազմը ծագեցաւ Փրեգելլա քաղաքի համար և տե-

ւեց 326—304։ Սկզբումը Պապիրիոս Կուրսորտ դիկ-տատորի առաջնորդութեամբ Հռովմայեցիք յաղթող գտնվեցան. իսկ նոցա մէկ զօրքը յետոյ Կաւտինի կիրճում պաշարվեցաւ Պոնտիոս Սամնիացիից ու ստիպվեցաւ անձնատուր լինելու 321 ին։ Միայն Հռովմայեցիք չընդունեցին զօրավարի դրած դաշինքները ու փոքր ժամանակից վերստին յաղթող հանդիսացան։ Ի զուր միաւորվեցան Սամնիացիների հետ Եարուբացիք, Մարսերը և ուրիշ ազգերը միջին Իտալիայի։

Հռովմայեցիք ամէնին յաղթեցին Պապիրիոս Կուրսորի և Փաբիոս Մաքսիմոսի առաջնորդութիւնով ու ստիպեցին Սամնիացիներուն իրանց իշխանութեան հնազանդելու։ Երրորդ պատերազմը սկսաւ 298 ին և Հռովմայեցիք Սենտինոնի մօտ 295 յաղթեցին միայն կրտսեր Դեկիոս Մուսի կամայ իւր անձը հայրենեաց համար զոհելովը, ինչպէս երբեմն նորա հայրը արել էր։ Յետոյ Պոնտիոս ընկաւ գերի և 292 ին սպանվեցաւ։ Մանիոս Կուրիոս Դենտատոս կատարեց Սամնիոնի նուաճումն 290 ին. բոլոր Միջին Իտալիային այսպէս տիրեցին Հռովմայեցիք։

ՊԻՐՈՍ ԹԱԳԱՒՈՐԸ.

Հռովմ սահմանակից եղաւ ստորին Իտալիայի յոյն տէրութիւններին և անհնարին էր, որ նոցա մէջ

խաղաղութիւն մնար: Յոյն գաղթականները կամ պէտք է հպատակէին Հռոմայեցւոց կամ պատերազմէին նոցա դէմ: Մին քանիսը ինչպէս Նէապոլիս, Կրոտոն, Թուրիէս ընտրեցին առաջինը. իսկ Ճոխ ու հզօր Տարենտոնը, որ 700 ին Պարտասցիք հիմնել էին, լաւ համարեց պատերազմելը: Հռոմայեցւոց պէս թշնամու դէմ իրան ոկար զգալով, ուխտ կապեց Տարենտոն Եպիրոսի Պիւռոս թագաւորի հետ, որ իւր պատերազմական արուեստը բազմից ցոյց էր տուել Մակեդոնիաում ու Յունաստանում: Սա իւր փառանդով ու քան փղերով օգնութիւն եկաւ: Թէև յաղթական գտնվեցաւ Հերակլէայի մօտ 280 ին Հռոմայեցւոց դէմ, բայց էլի ինքը Պինէոսի ձեռքով առաջարկեց խաղաղութիւն, որի արդելք եղաւ Ապպիոս Կլաւդիոս Ծերունին Ծերակոյտի մէջ: Պիւռոս Կ. Փաբրիկիոսից ճանաչեց Հռոմայեցւոց բարոյական բնաւորութիւնը ու որովհետև Ասկոլոնի մօտի պատերազմը 279 ին շատ յաջող չեղաւ, հեռացաւ Իտալիայից 278 ին, պատճառ բերելով Սիրակուսացիների հրաւէրը կարթագինացիների դէմ: Սկզբում յաջողակ էին նորա գործքերը Սիկիլիայի մէջ. յետոյ ամէնին ատելի եղաւ՝ իւր իշխանասիրութեամբ և 276 ին վերստին դարձաւ Իտալիա: Բայց այստեղ Բենեվենտի մօտ Կուրիոս Դենտատոսից ջարդվեցաւ և ստիպվեցաւ 275 ին իւր երկիր յետ դառնալու: Սա փոքր ժամանակից Արգոսի առման ժամանակը մեռաւ:

272 կարթագինայի նաւատորմիղն ներկայութեան ժամանակ, որ զուցէ ինքը կամենում էր քաղաքին տիրել, Տարենտոն սոխակեցաւ իր գունները բանալ Հռովմայեցւոց առաջ և անձնատուր լինել: Տարենտոնի հետ միասին նուաճվեցաւ և ողջ ստորին Իտալիան էլ:

ՍԻԿԻԼԻԱ.

Բարբերը և Հարուսա Սիկիլիան 'ի սկզբանէ անտի էր ցանկալի ամէն միջերկրական ծովի վերայ նաւող ազգերին: Բնիկ բնակիչների մօտ գաղթեցան այստեղ փոքր առ փոքր Փիւնիկեցիք, Յոյները և Կարթագինացիք: Ամէնից երևելի եղաւ վաճառականութեամբ և բարօրութեամբ Յունաց գաղթականութիւնը Սիրակուսան, որի վերայ աչք դրին Կարթագինացիք: Բայց 'ի զուր էին անցնում սոցա բոլոր աշխատանքները: Արդէն 481 ին Գելոն Սիրակուսի իշխանը, այնքան հզօր էր, որ իրանից Պարսից դէմ օգնութիւն խնդրող Յոյներին խոստացաւ երկու հարիւր նաւով և քսան հազար բաւ զինաւորած զօրքով գալու, եթէ իրան սպարապետ կընտրեն բոլոր Յոյներին: Բայց պատգամաւորները մատնեցին, որ իրանք զօրքի և ոչ թէ զօրավարի են կարօտ: Այլ թէ Գելոն կարող էր իւր խոստմունքը կատարել, թէ ոչ, ցոյց է տալիս մեզ նորա Հիմերայի մօտ արած յաղթութիւնը Կարթագինացւոց դէմ 480 ին, ուր յիսուն հինգ հա-

զար զօրք ունէր։ Սրան յաջորդեց իր եղբայրը Հերոն ա. 477—466. որ երևելի եղաւ իւր ուսումնասիրութեամբ և արհեստասիրութեամբ։ Սրանից յետ վաթսուն տարուց առաւել ժողովրդապետական կանոնաւոր կառավարութիւն հաստատվեցաւ Սիրակուսում և այս շրջանի մէջ եղաւ մեր յիշած պատերազմը Աթենացւոց դէմ 415—413։ Կարթագինացիները 410 ին վերստին նորոգեցին իրանց յարձակումները և սկզբում մեծ յաջողութեամբ, այնպէս որ մինչև ամուր և հզօր Ագրիգենտը անգամ ընկաւ նոցա ձեռքը։ Նեղ դրութեան մէջ ընկնելով Սիրակուսացիները իրանց Դիոնիսիոս քաղաքացուն զօրավար ընտրեցին, որ այս իշխանութիւնը իւր օգտի համար գործածելով 405 ին թագաւորութեան հասաւ։ Սրան յաջողեցաւ արիւնահեղ և փոփոխական պատերազմից յետ Կարթագինացիներից ազատվելու։ Իշխանասիրութեան և բռնութեան հետ ունէր նա մեծ խորամանկութիւն էլ և ամենանեղ դրութեան մէջ էլ հնարագէտ էր։ Բանաստեղծութիւն շատ սիրում էր, թէև ինքը ամենևին շնորհք չունէր դորա համար։ Նորա որդին և յաջորդը Դիոնեսիոս բ. 368—343 էր խիստ թեթևամիտ և զուարճութիւն սիրող և չէր կարող այնքան վտանգների մէջ իւր իշխանութիւնը պահել։ Տիմոլէոն Կորնթացին քշեց նրան և իւր իմաստուն և մեղմ կառավարութեամբ առաւել երջանիկ օրեր բերաւ Սիրակուսային մինչև

337 ։ Բայց երբ 317 ին արկածասէր Ազաթոկլէսը իւր ձեռք ձգեց իշխանութիւնը, պատերազմը Կարթագինէի հետ վերսին նորոգվեցաւ։ Կարթագինացիք յաղթեցին և պաշարեցին նրան իւր մայրաքաղաքում. իսկ նա յանկարծ յարձակումն անելով բուն Կարթագինէի վերայ, պատերազմը Աֆրիկէ տեղափոխեց և 306 ին կապած դաշինքով յետ ստացաւ իր կորցրած բոլոր երկիրները։ Սորա մահից յետ 289 ին ծագեցան ներքին խռովութիւններ իշխանութեան համար. այն ինչ Մամերտացիները, Սիրակուսացիների վարձկան զինուորները, իրանց վարձը չբաւականալով տիրեցին Մեսսանային և Կարթագինացիք մինչև Սիրակուսայի դռներ հասան։ Սրանց, ինչպէս յիշեցինք, Պիւռռոս քշեց և ինքն էլ, որովհետև ուզում էր տիրել քաղաքին, ստիպվեցաւ հեռանալ։ Այս ժամանակ Սիրակուսացիները իրանց թագաւոր ընտրեցին 269 ին Գելոնի ցեղից ծագած ազնիւ Հերոն ը։ Նոքա կարող էին այս բաղդաւոր ընտրողութեամբ իրանց բարօրութիւնը հաստատած համարել. միայն Մամերտացիքը, որոնց Մեսսանայի մէջ պաշարեց Հերոն, նոր արկածքներ առաջ բերին և Պունիկեան պատերազմներին պատճառն եղան։

ԿԱՐԹԱԳԻՆԷ։

Կարթագինէ, որ առասպելին նայելով Փունիկեցի Դիդէ իշխանուհին 888 ին հիւսիսային Ափրիկէի Ծովեզերքի մօտ, այժմեան Ցունիսի երկրում, հիմնեց Տիւրոսի գաղթականների ձեռքով, փոքր ժամանակից անցաւ իւր լայնատարած վաճառականութեամբ Արևմուտքումը և հարաւումը իւր մայր քաղաքից էլ։ Ծովեզերքի բարեբեր երկիրները, հեշտ ցամաքային վաճառականութիւնը ներքին Ափրիկէի ազգերի հետ և իւր ամէն կողմ խրկած գաղթականները մեծամեծ հարստութիւնների աղբիւր դառան նորա համար։ Կարթագինէի նաւերը ոչ միայն միջերկրական ծովի վերայ էին նաւում, այլ համարձակ անցնելով Հերակլէսի արձաններից էլ դէն (ձիբրալտարի նեղուցը) գնում էին Մադէյրա և կանարեան կղզիները, մինչև Բրիտանիա անգամ հասնում էին, և դուցէ արևելեան ծովի (Պալտիկ) եզերքն էլ։ Միջերկրական ծովի արևմտեան կէսի կղզիներից շատերը՝ Սարդենիա, Կորսիկա և Բալէարեան կղզիները Կարթակինացւոց հպատակ էին և Սպանիան իւր արծաթահանքներովը էր նոցա համար անբաւ գանձերի աղբիւր։ Ջերմեռանդութեամբ աշխատում էին Կարթագինացիները ուրիշ ազգերից թագցնելու ծովային ճանապարհները։ Ցամաքային պատերազմի հա-

մար զօրքերը վարձում էին նոքա Սպանիայից կամ Գաղղիացիներից կամ Ափրիկեցի ազգերից, որոնցից Նումիդացիք երևելի հեծեալներ էին: Անուանի էին նոյնպէս Բալէարեան պարսաւորները:

Կարթագինէի կառավարութեան ձևը Հռովմայ նման էր. Սուֆետները, ինչպէս այնտեղ Հիւպատոսները, ունէին գլխաւոր իշխանութիւնը և ծերակոյտը խորհուրդ էր անում նոցա հետ երևելի գործքերի համար: Կրօնը Փունիկեցւոցը էր. պաշտում էին զանազան կուռքեր և ունէին այլ և այլ խիստ ծէսեր էլ. մինչև մարդ էլ զոհում էին իրանց կռքերին: Պատմաբանական գործքերը այս երևելի ազգի բոլորովին կորած են և ինչ որ մնացել է. յայտնի է մեզ միայն Յունաց աւանդութիւնից և նոցա թշնամիների, Հռովմայեցւոց, գրութիւններից: Արդէն 509 ին Հռովմի հետ վաճառականութեան դաշինք դրին Կարթագինացիք, ուր նոքա յայտնվում են իբրև տիրողք հիւսիսային Ափրիկէի, Սարդինայի և Սիկիլիայի մէկ մասին: Յանկալով բոլորովին տիրել այս վերջին կղզին մտան անդադար պատերազմների մէջ, որոնց համար հարկաւոր եղած մեծամեծ պատրաստութիւնները ցոյց տուին նոցա զօրութեան մեծութիւնը: Մէկ անգամ էլ, խառնվելով սիկիլիական պատերազմների մէջ, ստիպվեցան պատերազմ բանալ Հռովմայ դէմ, որ յայտնի է պատմութեան մէջ „Պունիկեան պատերազմներ“ անունով, որովհետև Հռովմայեցիները նրանց Փունիկեցի էին կոչում:

ԱՌԱՋԻՆ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ. 264—241.

Մամերտացիք Հերոնի ձեռքից նեղը ընկած օգնութիւն խնդրեցին Հռոմից: Ներաիկոյտը ամենևին չէր ուզում ապստամբների հետ կապակցութիւն ունենալ և մերժեց նորա խնդիրը, միայն ժողովուրդը, նոր երկիրների և աւարի ցանկալով, վճիռ հանեց՝ որ օգնութիւնը խրկուի և Ապպիոս Կլաւդիոս հիւպատոսը զօրքով ատորին Իտալիայի Ցունաց նաւերով անցաւ Մեսանա: Հերոն տկար զգալով իրան այս թշնամիների դէմ, պաշարումն վեր առաւ և օգնութիւն կանչեց Կարթագինացիներուն: Այսպէս առաջին անգամ թշնամութեամբ պատահեցան միմեանց արևմուտքի ամենահզօր ազգերը: Հռոմայեցւոց յաջողութիւնը այնչափ մեծ էր, որ շուտով Հերոնը ստիպվեցաւ Կարթագինացիներուն թողնել ու Հռոմայեցւոց դաշնակից լինելու: Փոքր ժամանակից Կարթագինացիները բոլոր իրանց երկիրները մինչև Լիլիբէոն կորցրին: Թշնամիների ծովային զօրութիւնն էլ ջնջելու համար Հռոմայեցիները 130 նաւեր շինեցին, ծովեզերքը ընկած թշնամեաց մի նաւի ձևով և զօրավար նշանակեցին այս նոր նաւատորմիղին Կ. Դուիլիոս հիւպատոսին, որ հնարեց ազատ անուանված կամրջաձև մեքենայն, որով և Միւլէի մօտ 260 ջարդեց Կարթագինացւոց նաւատորմիղը: Արանով

քաջալերված Հռովմայեցիքը իրանց աչքը կարթա-
գինէի վերայ դարձրին: Ատիլիոս Հռեգուլոսի առաջ-
նորդութեան յանձնված Հռովմէական նաւատոր-
միղը 257 ին Սիկիլիոյ հարաւային եզերքում եկնո-
մոս լերան մօտ մեծ ջարդ տվեց թշնամեաց նաւա-
տորմիղին և յաջողութեամբ անցաւ Ափրիկէ: Հռե-
գուլոս այնպիսի յաջողութեամբ առաջ տարաւ ցա-
մաքային պատերազմը, որ կարթագինացիք յուսա-
հատութեան մէջ ընկան: Այս դրութեան մէջ յոյն
վարձկան զօրքերի առաջնորդ Լակեդեմոնացին Քը-
սանթիպպոս խոստացաւ ազատել նրանց առաջիկայ
վտանգից, եթէ իրան սպարապետ կ'նշանակեն բոլոր
կարթագինական զօրքի վերայ: Լսեցին կարթագի-
նացիները նորա առաջ բերած պատճառները և կա-
տարեցին ցանկութիւնը: Ճշմարտիւ յաջողեցաւ Քը-
սանթիպպոսին յաղթել Հռեգուլոսին և գերի առ-
նել նրան 255 ին: Այսպէս անօգուտ մնացին Հռով-
մայեցւոց յաղթութիւնները Ափրիկայում: Առաւել
սաստկացաւ պատերազմը Սիկիլիաւումը, ուր երբ 247 ից
կարթագինացւոց զօրավարը ընտրվեցաւ Ամիլկար
Բարկասը, (կայծակ), որ գլխաւոր զօրութիւնը կեն-
դրոնացրեց Լիլիբէոնում և Դրեպանում, 'ի դերև
հանեց իր հանճարով Հռովմայեցւոց և Սիրակու-
սացւոց բոլոր ջանքերը: Միայն երբ Լուտատիոս կա-
տուլոս Էգատեան կղզիների մօտ ջարդեց կարթա-
գինացիներին օգնութիւն եկած նաւատորմիղը, որին

Բարկաս ցամաքից չկարողացաւ օգնել 241 ին. էլ հնար չմնաց Սիկիլիային տիրելու. և ստիպվեցան կարթագինացիք խաղաղութիւն խնդրելու, Հռովմայեցւոց տալով Սիկիլիան և 2200 տաղանդ: Հերոն տիրեց վերստին Սիրակուսային, և մնացած Սիկիլիան դառաւ առաջին գաւառը Հռովմայեցւոց (Provincia):

ԱՆՆԻԻԲԱՂ.

Հռովմայեցւոց զօրութիւնը անդադար աճում էր. և միշտ յաջող էին նոցա թէ ծովային և թէ ցամաքային պատերազմները: 226 ին նորաշէն նաւատորմիղով Լիւբիկեցի հինաց Տևտա թագուհուն յաղթեցին: Երբէմն ահալի եղող Գաղղիացիք յայսկոյս Ալպեանց բազմիցս (Մարկելլոս) յաղթվեցան 226—220 և նոցա յարձակումների առաջը առնելու համար հիմնուեցան զինուորական Հռովմայեցի գաղթական քաղաքները Պլակենտիա և Կրեմոնա հիւսիսային Իտալիայում: Պատերազմի համար Հռովմայեցւոց դրամական միջոցը բաւական մեծացաւ գաւառների, որոնց թիւը մտան 237 ից Սարդինիա և Կորսիկա կղզիներն էլ, տուած Հարկերովը: Կարթագինէն էլ այս ժամանակումը ջանք էր անում իւր զօրութեան աղբիւրը ընդարձակելու: Վարձկան զօրաց ապստամբութեան (240—237) վտանգից ազատեց իւր հայրենիքը Ամիլկար Բարկասը, միայն այս

պատերազմի ժամանակ ստիպվեցան կարթագինացիք համաձայնել Հռոմայեցիների անիրաւութեամբ Սարդինիային և Կորսիկային տիրելուն։ Ուստի և աշխատում էր Ամիլկար իրանց կորուստը Սպանիաումը վարձատրել, ուր մինչև այն ժամանակը միայն քանի մի գաղթականներ ունէին և յաջողեցաւ նրան հարաւային և արևմտեան Սպանիաումը նշանաւոր երկիրների տիրել։ Սորա մահից յետ 229 ին շարունակեց պատերազմը իւր փեսան Ասդրուբալը, որ մեծ երկիրների տիրեց հարաւային Սպանիաումը և շինեց Նոր—Կարթագինէն, միայն խոստացաւ Հռոմայեցւոց Իբերոս (Էբրօ) գետից չանցնելու ու Սակունտոն քաղաքին և միւս յոյն գաղթականների վերայ չյարձակելու։ Երբ 221 ին Ասդրուբալն էլ սպանվեցաւ, զօրքը ընտրեց իրան զօրավար Ամիլկարի քսանուհինգ տարեկան Անիբաղ որդուն, որ Ծերակոյտից էլ հաստատվեցաւ։ Սա է ամենընտիր և նշանաւոր զօրավարներից մէկը, որ պատմութեան մէջ յայտնի են։ Ոչ որ երկու բոլորովին միմեանց հակառակ բաներին, ինչպէս հպատակելու ու հրամայելու, այնպէս ընդունակ չէր, ինչպէս Անիբաղը։ Հանիբաղ պատրաստ ամէն բանի ձեռնամուխ լինելու, հնարագէտ ամէն վտանգի մէջ, անխոնջ ամէն աշխատանքի մէջ, անընկճելի կամքի տէր մարդ էր։ Միակերպ տանում էր ցուրտին և տապին, ուտելում և խմելում չափաւոր էր, գիշերի և ցերեկի մէջ զանազանութիւն չէր

անում, հանգստութեան էր նուիրում միայն իւր ազատ ժամերը։ Միայն ձիով և զէնքերովը զանազանվում էր իւր զինուորներից. թէ ձիաւորներից և թէ հետեւակներից ամէնից ընտիրն էր, առաջինը մտնում էր միշտ պատերազմ և վերջինը դուրս էր գալիս նրանից։

ԵՐԿՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 218—201.

Այս Աննիբալը արդէն իններ տարեկան երդում էր տվել իւր հօրը, մինչև մահը անհաշտ թշնամի լինելու Հռովմայեցւոց և երբ հասակի հասաւ, միտը դրեց իւր խօսքը կատարելու։ Նորա նպատակն էր պատերազմը Իտալիա տեղափոխել ու հիւսիսից յարձակել Հռովմի վերայ։ Սագունտոնի առումն 219 ին պատճառ տվեց Հռովմայեցիներին պատերազմ հրատարակելու, որ և էր Աննիբալի ցանկութիւնը։ Անհկարագրելի դժուարութիւններով և անդադար պատերազմելով, 60,000 զօրքով անցաւ նա Պիրենեան և Ալպեան լեռները, ու իւր զօրքի կէսը ճանապարհին կորցրած հասաւ 218 ին վերին Իտալիայի դաշտը։ Այստեղ նորա կողմը անցան Գաղղիացիք և Լիգուրացիք, և նա ջարդեց Հռովմայեցիներուն Տիկինոս, Տրեբիա գետերի (217) ու Տրասիմէն լճին մօտ։ Փաբիոս Մաքսիմոս դիկտատորը, ճանաչելով Աննիբալին, ամենևին մեծ պատերազմ չտվեց, այլ

կամաց կամաց ուզում էր տիարացնել նրան և ճշմարտիւ քանի մի ժամանակ արդելք եղաւ կարիագինացւոց յառաջադիմութեան ու իր գանգատութեան համար կունկառաւոր (յապաղող) անուն ստացաւ։ Բայց և այնպէս Անիբաղ 216 կանէր մեծ սատակ ջարդեց երկու նոր հիւպատոսներուն և գուցէ կարող էր այս յաղթութիւններից յետ Հռովմին էլ տիրել. միայն առաւել լաւ համարեց առաջ ստորին Իտալիայի ազգերուն իւր կողմը գրաւնել, քան տիար զօրքով յարձակել դեռ բաւական հզօր ու յուսահատութեան մէջ ընկած քաղաքին վերայ։ Անիբաղ իւր նպատակին չհասաւ, հայրենիքից ստացած օգնութիւնը չեկաւ և իւր զօրքերը ձոխ կապուտուտմը բնակելով փափկացան և արդէն 215 թին Նոլայի մօտ տեղի ունին Մարկելլոս հիւպատոսի առաջ։ Իւր կապակցութիւնները Փիլիպպոս բ. ի և Սիրակուսայի հետ նոյնպէս անօգուտ եղան, ըստ որում Փիլիպպոս պարտուած էր այլ պատերազմով և Սիրակուսան, ուր Հերոնի մահից յետ նորա թոռն Հերոնիմոս բաց կարթագինացիների կողմը բռնեց, Մարկելլոս պաշարեց և շնայելով երևելի Արքիմեդեսի հնարած պաշտպանողական մեքենաներին առաւ 212 թին։ Բայց երբ վերջապէս Անիբաղի Ադրուբալ եղբայրը Սպանիայից ստացած զօրքովը Մեսաւրոս գետի մօտ ջարդվեցաւ և սպանվեցաւ 207 թին, կորաւ ամենեին նորա պատերազմը յաջողութեամբ աւարտելու յոյսը

և ստիպվեցաւ ստորին Իտալիայի հարաւային ծայրը, Պրուտտիոնը, պաշտպանելով բաւականանալու։

Սպանիաումը, ուր երկար ժամանակ անյաջող էին գնում Հռովմայեցւոց գործերը, 210 ին զօրավարութիւնը ստացաւ մատաղահաս Պուբլիոս Կուռնելիոս Սկիպիոնը, որ ոչ թէ միայն իմաստութեամբ և քաջութեամբ յաղթեց թշնամիներին, այլ արդարութեամբ և բաղցրութեամբ ամէն հպատակների սիրտերը առաւ և սիրելի եղաւ ամէնին, այնպէս որ կարճ ժամանակվան մէջ ողջ ազգերը Սպանիայի նորան հպատակեցան և չորս տարվան մէջ ամբողջ Սպանիան Հռովմայեցւոց իշխանութեան տակ ընկաւ։ Սկիպիոն 204 ին կարողացաւ շատ ժամանակից 'ի վեր ցանկացած նպատակը գլուխ բերել և յարձակեցաւ Կարթագինացւոց բուն երկրի վերայ Ափրիկաումը։ Այստեղ էլ շուտով մեծ յառաջադիմութիւններ արաւ և Կարթագինացւոց ծերակոյտը հընար չգտնելով իւր հզօր թշնամուն ընդդէմ կենալու, վճռեց Աննիբաղին Իտալիայից կանչելու։ Տխրութեամբ դուրս եկաւ Աննիբաղ 202 ին այն երկրից, ուր ինքն փառք ստացաւ և որը նա էլ միւսանգամ տեսնելու չէր։ Զամայի դաշտերումը, դաշնադրութիւնը չյաջողելից յետ, բանակեցան երկու ամէնից երևելի զօրավարները այն դարի, միայն անհաւասար զօրութեամբ։ Հռովմայեցւոց զօրքը էր կարգաւորեալ, կրթած և արևմտեան Նումիդիայի Մասինիսսա

թագաւորին, ողջ իւր զօրութեամբ, օգնական ունէր իրան. ըստ որում նոցա օգնութեամբ նա յաղթել էր իւր թշնամուն, արևելեան Նումիդիայի Սիփաքս թագաւորին և տիրել էր նորա երկրին: Աննիբաղի զօրքը ոչ միայն փոքրաթիւ էր առաւել, այլ և բաղկացած էր զանազան ազգերից, որոնք պէտք է վարձի համար պատերազմէին: Աննիբաղի իմաստուն կարգադրութիւնները անօգուտ եղան, զօրքը տեղի տուաւ, և հարուածը կատարեալ եղաւ 201 ին: Ինքն Աննիբաղ խորհուրդ տվեց Կարթագինացիներին խաղաղութիւն անելու, որ և ստացան նոքա յետ կենալով ողջ Ափրիկէից դուրս ունեցած երկիրներից, 10,000 տաղանդ վճարելով և ողջ պատերազմական նաւերը բացի տասնից և փիղերը թշնամեաց տալով. խոստացան նոյնպէս առանց Հռովմայ համաձայնութեան ոչինչ պատերազմ չանել: Յաղթական Սկիպիոնը Ափրիկանոս մականունը ստացաւ: Բայց Աննիբաղ, որ սկզբումը ժրաջան աշխատում էր իւր հայրենի քաղաքի ներքին կառավարութեան համար, ստիպվեցաւ 195 ին մի թշնամի կուսակցութեան բամբասանքներից և Հռովմայեցւոց դարանագործութիւններից փախչել և գնաց Ասորւոց Անտիոքոս երրորդ թագաւորի մօտ, որ բարեկամաբար ընդունեց նրան, միայն Հռովմի դէմ պատերազմումը չհետևեց նորա խորհրդին:

ՅԱՂԹՈՒԹԻՆՆԵՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՈՑ ԵՒ ԱՍՈՐԻՈՑ ԴԷՄ· ԵՐՐՈՐԴ ՊՈՒՆԻԿԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 149—146.

Սրանից յետո դարձան Հռոմայեցիները Մակեդոնիայի Փիլիպպոս երկրորդ թագաւորի դէմ, որ 214 ից Աննիբալի դաշնակիցն էր: Կուինկտիոս Փլամինինոս յաղթեց նրան 197 ին Կինոսկեփալէի (շանագլուխք) մօտ և ցունասանը խլեց նրանից: Էտոլացիները Անտիոքոս երրորդին օգնութիւն կանչեցին, որին Լ· Կոռնելիոս Սկիպիոն (Ասիացի), Սկիպիոն Աֆրիկանոսի եղբայրը, ջարդեց 191 ին Թերմոպիւլէի մօտ և 190 ին Մագնեսիայի մօտ և ստիպեց փոքր Ասիայի մեծ մասից ձեռք վերս առնելու, որ Հռոդոսի և Պերգամայ Եւմենէս թագաւորի մէջ բաժանվեցաւ: Մակեդոնիայի անկախութեան վերջ դրաւ Եմիլիոս Պաւլոսի Պիդնայի մօտ 168 ին արած յաղթութիւնը և Մեսելլոս (մակեդոնական) 148 ին նոր ապստամբութիւնը ճնշելով դարձրեց այն երկիրը Հռոմայ սէրութեան գաւառ: Այս յաջողութիւններին շնայելով Հռոմայեցիք աչքերից չէին զցում Կարթագինէն էլ: Աննիբալի երկիւղը Հանդիսաց չթողեց նրանց, մինչև որ այս երևելի մարդը, Անտիոքոսի մօտից Բիւթինիայի Պրուսիաս թագաւորի մօտ փախած և սրանից էլ գաւաճանած, ինքը իրան զրկեց կեանքից թոյնով 183 ին, չկամենալով կենդանի ընկնել

իւր թշնամիների ձեռքը։ Սորա մահից յետո էլ անհանգստացնում էր Հռոմայեցիներուն այն միտքը, թէ մի գուցէ յանկարծ էլի յարձակուին պատահի Կարթագինէի կողմից, որ շուտով զօրանում և ծաղկում էր։ Ուստի և երէց Կատոնը ամէն անգամ ծերակոյտում արած առաջարկութիւններից յետո աւելացնում էր այս խօսքերը. „Կարթագինէն պէտք է քանդել“. և սորա հետ համաձայն էին շատ քաղաքացիներ։ Այս պատճառով էլ պատերազմը այս Հռոմայեցիներին ասելի քաղաքի դէմ, պատերազմը, որ ամենից անարդարն էր, չնչին պատճառներով սկրատաւ։ Մասինիսսա, որին Հռոմայեցիք պաշտպանում էին, գրգռում էր Կարթագինացիներուն զանազան կերպերով և տիրեց նոցա երկիրների մեծ մասին իւմանալով, որ նոքա առանց Հռոմայ հրամանին չեն համարձակիլ պատերազմելու։ Վերջապէս Կարթագինացիները յուսահատած Մասինիսսային պատժելու համար զէնք բարձրացրին. իսկ Հռոմայեցիք շուտով, այն գործը դաշնադրութեան ընդդէմ համարելով, զօրք խրկեցին և պահանջեցին 149 ին, որ ողջ նաւերը և զէնքերը իրանց տան։ Երկիւղից պաշարած Կարթագինացիները հնազանդեցան այս հրամանին։ Սրանով էլ չբաւականացաւ Հռոմայ ծերակոյտը, այլ պահանջեց, որ Կարթագինացիք իրանց քաղաքը թողնեն, ծովից երկու մղոն հեռի անցափոխին և նոր քաղաք չինեն։ Յուսահատութիւնը

տիրոց ամէնին, Կարթագինացիք վճռեցին մինչև վերջը պաշտպանելու իրանց, տունները քանդեցին, որ նրանցից նաւեր շինեն, ոգջ մեռաղէ կարասիքները նուիրեցին զէնքերի համար և աշխատում էին, առանց ատիճանի ու հասակի խտրութիւն անելու, քաղաքը ամրացնել: Հռովմայեցիք կապեցին նաւահանգիստը, պաշարեալները նորը փորեցին. նոքա պաշարման մեքենաներով քանդեցին պարիսպը, սոքա ներսից նոր պատեր շինեցին. բայց վերջապէս պատերազմի չորրորդ և քաղաքի պաշարման երրորդ տարին 146 ին յաղթվեցան Հռովմայեցիների զօրագանց զօրութիւնից և նոցա զօրավարի Սկիպիոնի (Ափրիկանոս կրտսեր) հանճարովը: Երբ պարիսպները առնվեցան, եօթն օր շարունակվեցաւ պատերազմը քաղաքի փողոցներում, վերջապէս անձնատուր եղան միջնաբերդը և Ասդրուբալ զօրավարը: Տասնեօթն օր այրվում էր Կարթագինէն, ուր քանդվելից առաջ, 700,000 ժողովուրդ էր բնակում: Նորա երկիրը Ափրիկէ անուամբ Հռովմայ գաւառ եղաւ: Մինչոյն տարին քանդվեցաւ Կորնթոսն էլ և Յունաստանը Աքայիա անունով մտաւ Հռովմայեցւոց գաւառների շարքը:

ՅՈՒԳՈՒՐԹԱ.

Կարթագինէի ընկնելեց յետոյ էլ շկար տէրութիւն, որ կարողանար երկար ժամանակ Հռոմայ դէմ կենալ և եթէ կային մի քանի հեռաւոր ազգեր, որ պատերազմը շարունակում էին դեռ, ինչպէս Լուսիտանացիք Վիրիաթի առաջնորդութեամբ և Սպանիայի Նումանտիա քաղաքի բնակիչները, միայն սոքա չէին պարտադրւում Հռոմայ ազգ զօրութիւնը և քաղ թէ ուշ պէտք է նուաճվէին: Լուսիտանացիք նուաճվեցան 140 թն. իսկ Նումանտիան 133 թն: Այսուհետև Հռոմայ թշնամիներին միայն Հռոմայեցւոց զօրավարների արծամթութիւնով և կաշառակերութիւնով հնար էր պատերազմը ձգել. մինչև որ ծերակոյտը խրկէր մի պատուարժան և անշահասէր մարդ: Այսպէս պատահեցաւ Նումիդիայում: Այս տեղ 118 թն Յուգուրթա տիրեց երկրի մի մասին, բայց ցանկանում էր բոլոր Նումիդիային տիրելու: Ուստի սպանել տուաւ իւր մի հօրեղբօր որդուն Եմպսալին. իսկ միւսն Ադերբալը փախաւ Հռոմ օգնութիւն խնդրելու: Բայց Յուգուրթա կաշառքով ոչ միայն պատիժից ազատ մնաց, այլ և Նումիդիայի նոր բաժանման ժամանակ երկրի լաւ կէսն էլ ստացաւ: Արանով էլ չբաւականանալով, Հռոմայեցւոց պատգամաւորները հեռացան թէ ոչ, պաշարեց

Աղերբայիջ Կիրառայի մէջ (այժմեան Կոնստանտինէն) և նրան սպանել տուաւ։ Այս գործից յետո Համարձակվեցաւ Հռոմի անգամ երթալու իւր անձը արդարացնելու համար և այնտեղ էլ իւր մի ազգականին սպանել տուաւ։ Այսքան մարդասպանութիւնները ու լրբութիւնները սոսկեցին Հռոմայեցիներուն 111 թն Ափրիկէ գաղթ խրկելու։ Բայց Յուգուրթա իր դէմ խրկված Հռոմայեցի զօրավարների արծաթասիրութեամբը երկու տարի դէմ կեցաւ, մինչև որ անկաշառասէր Մետելլոսը (Նումիդիկոս) յաղթեց նրան 109 թն և փախցրեց իւր Բոկքոս անլերջ մօտ, որ Մաւրիտանիայի թագաւորն էր։ Որա հետ միացած նորոգեց Յուկուրթա պատերազմը 107 թն. Միայն Կայիոս Մարիոս, ստորին վիճակից ծնած, մտաւ մինչև երկրի մէջ տեղը ու անհնարին արաւ ընդդիմակացութիւնը։ Մարիոսի զանձապետը Սուլլան դաշնադրութեան ժամանակ պահանջեց Բոկքոսից Յուգուրթային էլ 106 թն, որ Հռոմում բանդի մէջ քաղցից մեռաւ։ Նումիդիայի մի մասը Հռոմայեցւոց ընկաւ. իսկ մնացածը Բոկքոսին և Մասինիսայի ազգականներին։

ԿԻՄԲՐԱՑԻՔ ԵՒ ՏԻՒՏՈՆԵԱՆՔ.

Պարիոս գտաւ մի նոր թշնամի էլ։ Կիմբրացիք և Տիւտոնեանք, գուցէ հիւսիսային արևելեան Գերմանիայից դուրս գալով, մտել էին արևելեան Ալպեանց երկիրները, և Նորէաւմը (այժմեան Շտէյերմարկում) ջարդելով 113 ին Հռովմայեցւոց զօրքերը գնացել էին Եվէից երկիրը ու միացել ուրիշ ցեղերի հետ։ 109 ին երևեցան նորից հռովմէական գաղղիաում և պահանջում էին իրանց համար երկիր, խոստանալով Հռովմայեցիներին ծառայել պատերազմերի մէջ։ Եւ որովհետև մերժվեցաւ նոցա խնդիրը, ջարդեցին քանիցս անգամ Հռովմայեցւոց զօրքերուն և հասան մինչև Ալպեան լեառները։ Ահուդողը տիրեց Հռովմայեցիներին. սոքա միտը բերին Գաղղիացի Բրեննոսի ժամանակը։ Ճշմարտիւ, Հռովմայեցիք մինչև ցայժմ դեռ այսպիսի թշնամիների հետ չէին պատերազմել։ Այս Գերմանացիք ահագին զօրութիւն ունէին և արտաքոյ կարգի հասակ նոքա կարող էին իրանց մեծ պատերազմական թուրերի մի հարուածով կէս անել սաղաւարտը և վահանը։ Պատերազմ մտնելիս իրանց սարսափելի ձայներով խափանում էին Հռովմայեցւոց փողերի ձայները, մինչև նոցա կանայք անգամ վտանգի ժամանակ զէնք էին վեր առնում և քաջութեամբ կռվում էին զի-

նուորների շարքում: Միայն Կայիոս Մարիոս էր ընդունակ այսպիսի թշնամիների դէմ կռվելու: Զօրքը խիստ սիրում էր սրան և ուրախութեամբ համբերում էր նորա խիստ զինուորական կարգադրութեանց, որովհետև ամէն նոցա նեղութեանց մասնակից էր լինում Մարիոս ինքն էլ և միշտ առաջինը մտնում էր պատերազմ: Սրան երկրորդ անգամ ընտրեցին 104 ին հիւպատոս և արտաքոյ կարգի չորս անգամ կրկնեցին ընտրութիւնը մինչև 101: Մարիոս գործով արդարացրեց իր վերայ դրած յոյսը: Սա առաջվան հարուածներից լքած զօրքերուն, երկար ճանապարհորդութիւններով և ծանր աշխատանքներով, կաղդուրելից ու գերմանացւոց պատերազմելու եղանակին և նրանց տեսքին ընդելացնելից յետ, ջարդեց երկու արիւնահեղ պատերազմերի մէջ ցեւտոնեաններուն Աքուէ Սեքստիէի մօտ 102 ին և Կիմբրացիներուն Վերոնայի մօտ 101 ին: Երկու ազգերն էլ գրեթէ բոլորովին ջնջվեցան. հարիւր հազարից առաւել իբրև գերի ծախվեցան Իտալիայի մէջ:

ը. Անց դէպի ինքնիշխանութիւն. ներքին խռովութիւնները, որ փառաստէր անձինք պատճառեցին, մինչև 30 ամն Քրիստոսի ծննդից առաջ։

ՀՌՈՎՄԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԱՆԿՈՒՄՆ։

Հարուստ երկիրներից յափշտակած աւարները, այն մեծ գումարները, որ վճարում էին յաղթեալները և Հռովմայեցի պաշտօնատարների, որ իբրև տեղակալներ կառավարում էին գաւառները, ժողոված հարստութիւնները ընդելացրին Հռովմայեցիներուն ճոխութեան և փափկասիրութեան։ Էլ դաշտերը ազատ քաղաքացիքը բնաւ չէին մշակում, այլ բազմաթիւ գերիները, որոնց ամէն երկիրներից բերում էին, և էին հարուստների ծառաները, նոցա որդոց սընուցիչ վարժապետները։ Պիտոյքների հետ միասին մեծանում էին և ագահութիւնը և արծաթասիրութիւնը, և հայրենասիրութեան տեղը տիրեցին ամէնին անձնասիրութիւնը և փառասիրութիւնը։ Սորա հետ միասին ժողովրդեան մեծ մասը, բացի փոքրաթիւ հարուստներից, ընկաւ աղքատութեան մէջ և ազատ հռովմէական քաղաքացու իրաւունքներ ունենալով շատերը առաւել լաւ էին համարում իրանց ընտրութեան ձայնը ծախելով ապրուստ ճարել, քան իրանց ձեռքով դաշտերը գործելով։ Ժո-

ղովրդեան զբօսանքն էին ըմբշամարտութիւնը ու մենամարտութիւնները ամէհի գազանների հետ, որ պատրաստում էին պաշտօնատարները։ Ուստի և մասնաւոր մարդոց բարութիւնը տէրութեան բարութիւնից նախադաս եղաւ, օրէնքները խորամանկութեամբ զանազան մեկնութիւններ ստացան ու ամէն պաշտօն ու աստիճան փողով սկսան ծախվել։ Այս դրութեան մէջ, յայտնի բան է, բարձր պաշտօնների միայն ամենահարուստ ցեղերի անդամներն էին հասնում։ Հին թշնամութիւնը Պատրիկների և ժողովրդականների մէջ նորոգվեցաւ՝ վերստին, միայն այլ եղանակով, որովհետև մին քանի փառասէր անձինք սկսան մէկ կամ միւս մասին կողմը բռնել, կամենալով այդ կերպով իրանց ներգործութիւնը կամ իշխանութիւնը մեծացնել։ Պատերազմները անգամ դառան փառասէր անձանց համար միջոցներ իրանց ցոյց տալու ու զօրքի սիրտը իրանց քաշելու համար, որ յետոյ խաղաղութեան ժամանակն էլ ունենան ազդեցութիւն կառավարութեան մէջ։ Այս դրութիւնը ժողովրդեան կամ վիճակը հասկացաւ Տիբերիոս Սեմպրոնիոս Գրակքոսը։ Մեծ ճարտասան գոլով, իբրև ազգային տրիբուն, 133 ին կամեցաւ նորոգել Լիկինիոսի արտօրէից օրէնքը, որից անցել էին նաև մի քանի բարձր աստիճանի հասած և ծերակոյտը մտած ժողովրդականներն էլ և այս կերպով հարուստներից հանած երկիրները աղքատ քա-

ղաքացիներին բաժանել։ Նորա առաջարկութիւնը ընդունվեցաւ, միայն ինքը ընդդէմ օրինաց պաշտօնից զրկել տուաւ իւր ընկերակիցը, որ նորա հետ համաձայն չէր։ Դեռ այս առաջարկութիւնը 'ի գործ դնելից առաջ սպանվեցաւ Գրակքոս խռովութեան ժամանակ, որ հարուստները պատճառեցին։ Նորա կրտսեր եղբայրը Կայիոս Գրակքոսը, տասն տարիից, փորձեց միևնոյն առաջարկութիւնները գլուխ տանելու և բացի սրանից կամենում էր, որ ամէն Իտալացի դաշնակիցները հռովմէական քաղաքացու իրաւունք ունենան. ուստի և հարուստների դաւադրութեամբ, իր եղբօր պէս, սա էլ սպանութեամբ մեռաւ 121 ին։ Նորա կուսակիցները սաստիկ հալածվեցան և պատժվեցան և ազգը առհասարակ շատ ճնշեցաւ։ Միայն Կիմբրացւոց պատերազմից յետ վերատին գլուխ բարձրացրին Մարիոսի զօրութեամբ։ Այն ժամանակ ողջ դաշնակիցները պահանջում էին քաղաքացու իրաւունքը և որովհետև Հռովմայեցիք կամակորութեամբ միշտ բացասում էին նրանց, 90 ին Իտալացի ազգերի շատերը, ինչպէս Սամնիացիք, Մարսիացիք, Պելիգնացիք և Լուկանացիք և այլն զէնք առան (դաշնակիցների պատերազմը), միայն մի քանիսը, որոնց մէջ էին Լատինացիք, մնացին հաւատարիմ։ Փոփոխ յաջողութեամբ պատերազմելից յետ, հնայելով ողջ Հռովմայեցի զօրավարների ջանքին, Հռովմը մեծ վտանգի մէջ ընկաւ և նախ տուաց քա-

ղաքացու իրաւունքները հաւասարիմ մնացողներին և յետոյ նրանց էլ, որ զէնք վայր դրին 88 ին: Այսպէս Հռուբիկոնից մինչև ստորին Իտալիայի ծայրը բնակիչները ամէնքը հռովմէական քաղաքացու իրաւունքներ ստացան: Այս խաղաղութիւնը խիստ հարկաւոր էր, մանաւանդ որ նոր թշնամի էր յայտ եկել:

ՄԻՀՐԴԱՏ· ԱՌԱՋԻՆ ՆԵՐՔԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ:

Պոնտոսի թագաւորը Միհրդատ կառավարութիւնը ձեռք ձգելուն պէս 112 ին արտաքսեց Սկիւթացիներուն տաւրիկեան Քերսոնեսից, դաշնակցութիւն կապեց Գերմանացի ազգերի հետ մինչև Իստրոս գետը և նուաճեց Կողքիսը: Սրանից յետո փոքր առ փոքր սկսաւ տիրել Փոքր Ասիային էլ, ուր թշնամացաւ Հռովմայեցւոց հետ, որոնք 133 ից Ատտալոս երրորդի կտակի զօրութեամբ տիրում էին Պերգամոսի թագաւորութեան: Այստեղի ցոյն գաղթականների մեծ մասը, Հռովմայեցւոց դէմ ունեցած ատելութիւնից, ինքնակամ հպատակեցան նրան: Պատերազմ Հռովմի դէմ սկսաւ Միհրդատ սպանելով ողջ Փոքր Ասիաում գտնուող Հռովմայեցիներուն, որոնց թիւը մինչև 80,000 հասնում էր, և իւր Արքելայոս զօրավարին խրկեց Յունաստան, որ այնտեղից էլ առաջ գնայ: Սա սկզբումը մեծ յաջաղիմութիւններ արաւ. Թրակիա, Մակեդոնիա,

Եւ բէա և Ամէնք հպատակեցին նրան։ Սորա դէմ պէտք է Սիլլա (Հիւպատոս 88 ին) առաջնորդէր հռոմէական զօրքին, միայն Մարիոս, որ ինքը կամենում էր այս պատերազմի փառքը ստանալ, ժողովրդի օգնութեամբ, որ նրան սիրում էր, վճիռ հանել տուաւ, որով առաջնորդութիւնը իրան յանձնվեցաւ։ Սիլլա գնաց Նոլայի մօտ եղած բանակը, յորդորեց զօրքին իրան դէպի Հռոմ հետևելու, առաւ քաղաքը, արտաքսեց Մարիոսին և նորա կուսակիցներուն և ծերակոյտի իրաւունքը ընդարձակելից ու հաստատելից յետ գնաց Միհրդատի դէմ։ Մարիոս, որ ծովով փորձեց փախչելու և ալեկոծութեամբ ընկաւ ցամաքը, թաղնվեցաւ Մինտուրնէի ճահիճներում, բայց դըտնվելով բռնվեցաւ ու ընկաւ բանտը, որտեղից ազատեց նրան իւր ձայնը և կերպարանքը, որով իրան սպանելու համար խրկած կիմբրացի ստրկին վախացրեց։ Ապահով տեղ գտաւ իրան Մարիոս Ափրիկէի ծովեզերքումը։ Բայց Հռոմմումն էլ անգործ չէին նորա բարեկամները։ Հազիւ Սիլլան հեռացաւ Հռոմից, Կիննա հիւպատոսը ժողովուրդը ոտք հանեց Մարիոսի համար։ Եւ որովհետև այս չյաջողեցաւ, ժողովեց զօրք նոր քաղաքացիներից, որոնց Մարիոս զանազան արտօնութիւններ պարգևել էր, որոնք ծերակոյտը չէր հաստատում, միաւորեցաւ Մարիոսի հետ, որ շտապով յետ էր դարձել և 87 ին մտաւ Հռոմ։ Մարիոս այստեղ իրան վերստին հիւպատոս

ընտրել տուաւ ու սկսաւ զարհուրելի կերպով իւր վրէժը հանել ամէնքից, որոնց նա Սիլլայի կուսակից էր համարում: Հինգ օր տևեց մարդասպանութիւնը, մինչև որ բարեմիտ անձինք, որոնց գլուխ էր Սերտորիոս, Մարիոսի մտերիմ բարեկամը, արիւնհեղութեան վերջ դրին:

Սիլլան թէև լսում էր միշտ Հռովմում պատահած անցքերը, միայն առաջ մտածում էր արտաքին թշնամուն նուաճելու: Պաշարեց և առաւ Աթէնքը, յաղթեց Արքեղայոսին Քերոնէայի մօտ 87 ին և Օրքոմենոսի մօտ 86 ին և յետոյ անցնելով Ասիա ստիպեց Միհրդատին խաղաղութիւն անելու, որով Միհրդատ պէտք է ողջ փոքր Ասիաում նուաճած երկիրները յետ դարձնէր և 2,000 տաղանտ էլ տուգանք վճարէր 84 ին: Այժմ դարձաւ Սիլլա Հռովմ: Միայն իւր գլխաւոր թշնամիներուն չգտաւ, ըստ որում Մարիոս եօթնաւուն երկու տարեկան իւր եօթներորդ հիւպատոսութեան ժամանակ 86 ին մեռել էր և Կիննան իւր զինուորներից սպանած էր. Սերտորիոս էլ գնաց շուտով Սպանիա: Ընդհակառակն կրտսեր Մարիոսը, որդին, ժողովրդեան գլուխ դառաւ և բազմաթիւ ապստամբած դաշնակիցները, մանաւանդ դեռ հզօր Սամնիացիքը, Պոնտիոս Տելեզինոսի առաջնորդութեամբ նորա կողմը բռնեցին: Սոցա զօրքը երկուհարիւր յիսուն հազարի էր հասնում: Բայց և այնպէս Սիլլա իւր հանճարով և ընտրել տուաւ ու սկսաւ զարհուրելի կերպով իւր վրէժը հանել ամէնքից, որոնց նա Սիլլայի կուսակից էր համարում: Հինգ օր տևեց մարդասպանութիւնը, մինչև որ բարեմիտ անձինք, որոնց գլուխ էր Սերտորիոս, Մարիոսի մտերիմ բարեկամը, արիւնհեղութեան վերջ դրին:

տիր քառասուն հազար զօրքով յաղթեց նրանց շատ մեծ պատերազմերում, ուր առաջին անգամ կն. Պոմպէոս և Լիկինիոս Կրասսոս նորա համար պատերազմելով անուն հանեցին և իբրև յաղթական 82 ին մտաւ Հռովմ, ուր իրան մշտենջենաւոր դիկտատոր անուանել տուաւ: Նորոգեցան վերստին մարիոսեան իշխանութեան արհաւիրքը Հռովմում, հազարաւոր մարդիկ զոհ եղան Սիլլայի կուսակիցների սուրերին և ամէն առաւօտ հրատարակվում էին դատապարտութեան ցանկերում այն քաղաքացւոց անունները, որոնց Սիլլա զրկում էր իրանց ստացուածքից և կեանքից: Վերջապէս հրամայեց արիւնհեղութեանը վերջ դնել և նոր օրէնքներով փորձեց Ծերակոյտի ազնուապետութիւնը վերստին զօրացնելու և հաստատելու: Ազգային տրիբուններուն նոր օրէնքներ առաջարկելու իրաւունքից զրկեց և թողեց նրանց միայն իրանց հին արդելում եմ բառը, խլեց նոյնպէս նրանցից տրիբունութիւնից առաւել բարձր պաշտօնների հասնելու իրաւունքը. Ծերակոյտին միայն տուաւ դատաստան կարելու իշխանութիւնը: Նորա գինուորները, որոնց Մարիոսի օրինակին հետևելով բնակեցրեց Իտալիայի ամէնից բարեբեր երկիրներում (Կամպանիա և Ետրուրիա), պահպանում էին, որքան ինքն կենդանի էր, նորա կարգադրութիւնները: Երեք տարի բարձրագոյն իշխանութիւնը վայելելից յետոյ, իրան բաղդաւոր մականունը տալով, դուրս եկաւ

79 տարեկան պաշտօնից և բնակում էր իւր կալուածքում Նէապոլսի ծովածոցի մօտ իբրև մասնաւոր մարդ։ Ոչ ոք չհամարձակեցաւ դատաստանի կանչել նրան և իր գործոց համարը պահանջել։ Մեռաւ 78 ին չարաչար հիւանդութիւնով, իր ամբողջ պատմութեան ցունարէն քսաներկու հատոր գիրքը, որ այժմ կորած է, աւարտելից յետ։

ԿՆԷՈՍ ՊՈՄՊԷՈՍ ՄԵԾԸ։

Սիլլայի կուսակիցներից երևելին էր Կնէոս Պոմպէոս, որ 106 ին ծնել էր։ Արդէն քսան երեք տարեկան պատերազմումէր Սիլլայի համար իւր ժողոված զօրքովը Իտալիայի և Ափրիկէի մէջ և յաղթանակի արժանացաւ։ Յետոյ խրկվեցաւ Սպանիա Սերտորիոսի դէմ, որ այնտեղ խմաստութիւնով կառավարում էր։ Շատ երևելի զօրավարներ 'ի զուր պատերազմել էին նորա դէմ. Պոմպէոսը վերջ դրեց պատերազմին, երբ միայն Պերպերնայի դաւաճանութեամբ կեանքից զրկվեցաւ այն ընտիր և իմաստուն մարդը 72 ին։ Յետ դառնալիս ճանապարհին յաղթեց մի քանի հազար ապստամբ ստրուկների և պարծենում էր, թէ ինքը ճնշել է սարկաց ապստամբութիւնը, թէև նոցա գլխաւոր առաջնորդին, Սպարտակոսին, Կրասոսը արդէն ջարդել էր և սպանել 71 ին։ Յաջորդ տարուան համար Կրասոսի հետ

միասին հիւպատոս ընտրվեցաւ և Միլոյի օրէնքները ջնջելով սերելի եղաւ ժողովրդեան, ու տրիբունների օգնութեամբ, որոնց առաջվան իրաւունքները յետ դարձրեց, նոր յանձնարարութիւն ստացաւ, այն է, ինքնիշխան զօրավարութիւն պատերազմում հիմից դէմ, որ ողջ միջերկրական ծովի նաւագնացութիւնը խանգարում և Հռոմին սով էին սպառնում: Իւր խնամատուն կարգադրութիւններով աւարտեց այս երեւելի պատերազմը, որի ասպարէզը Հերակլեան սիւներից մինչև Կիւլիկիայի ծովեզերքն էր ձգվում, երեք ամսում և շատով նրանից յետ ստացաւ զօրավարութիւն Միհրդատի դէմ 66 թն: Այս անխոնջ թագաւորը, երկրորդ անգամ յաջողութեամբ պատերազմելից յետ Հռոմայեցւոց դէմ 82 թն, գտաւ պատճառ երրորդ անգամ պատերազմ բանալու նոցա հետ: Բիթինիայի Նիկոմեդէս թագաւորը կատակով 75 թն իւր թագաւորութիւնը թողնում է Հռոմայեցւոց և Միհրդատ չկամելով այսպիսի վտանգաւոր և ճեռասակար դրացի ունենալ, սպաշտպան կացաւ Բիթինիայի միւս ժառանգներին և յարձակեցաւ Պափլագոնիա: Նորա դէմ գնաց Հռոմայեցւոց Լուկիոս Լիկինիոս Լուկուլլոս զօրավարը, յաղթեց նրան զանազան պատերազմներում 73—71, հալածեց իւր թագաւորութիւնից և որովհետև նա փախաւ իւր աներոջ Մեծ Տիգրանի մօտ, որ Հայոց և Ասորոց տիրում էր, հետևեց նրան այնտեղ էլ, առաւ

Տիգրանի մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը և պատ-
բաստվեցաւ պատերազմի Պարթևաց Արշակ թագա-
ւորի դէմ։

Այն ինչ Լուկուլլոսի զօրքի մէջ ծագած անբա-
ւականութիւնները արգելք էին լինում նրան յա-
ռաջադիմութիւններ անելու, Միհրդատ յայտնվե-
ցաւ յանկարծ նոր զօրքերով փոքր Ասիաւում և մեծ
յառաջադիմութիւններ արաւ։ Լուկուլլոս կամենում
էր նորա դէմ դառնալ, միայն նորա տեղ 66 ին եկաւ
Պոմպէոս։ Այս զօրավարին, որ իւր զինուորներին սի-
րելի էր, դիւրին էր զօրութիւնից ընկած Միհրդա-
տին յաղթելը։ Նա գիշերով յարձակեցաւ Միհրդատի
վերայ Եփրատի մօտերում մի նեղ ձորի մէջ ու բոլո-
րովին գրեթէ ջնջեց նորա զօրքը։ Արանով խոնար-
հեցաւ Տիգրան էլ և Ասորիքը Հռովմայեցւոց տա-
լով խաղաղութիւն արաւ 64 ին։ Իսկ ինքը անընկ-
ճելին Միհրդատ գնաց սեաւ ծովի հիւսիսային ծովե-
զերքը, միտը դնելով այնտեղից Սկիւթացւոց և Գեր-
մանացւոց օգնութեամբ Դանուբի երկիրներով Իտա-
լիա անցնել։ Միայն իւր ուղեկիցների մէջ ծագեցաւ
յանկարծ ապստամբութիւն, որի գլուխը նորա որ-
դին Փառնակն էր։ Միհրդատ ստիպվեցաւ վերջապէս
Պանտիկապէոնի (կէրչ) մէջ իւր ձեռքով զրկել իրան
կեանքից 63 ին։ Փառնակին տուաւ Պոմպէս Բոսփորի
թագաւորութիւնը, բայց Պոնտոսը, Բիւթենիան,
Պափլագոնիան և Կիլիկիան Հռովմայեցւոց գաւառներ

դարձեց. նա թագաւորներ էր նշանակում, պատիժներ գրում և ազատութիւններ տալիս և վերջապէս դարձաւ Պալեստինէ, որ խառնում էին Աղեքսանդր Յանէոսի որդիքը Հիւրկանոս և Արիստոբուլոս պատերազմներով ժառանգութեան համար: Պոմպէոս վճռեց բանը աւագ եղբօր օգտի համար և պատերազմեց յետոյ Արաբների դէմ: Պոմպէոս կարող էր պարծենալ նրանով, որ ողջ երկիրները Արարիայից մինչև Կասպից ծովը յաղթութեամբ անցել էր, շատերը նրանցից նուաճել, երկու հազար քաղաքներ ու ութհարիւր նաւեր առել, քսան հազար տարանտ ընդհանուր գանձը մտցրել էր և տէրութեան եկամուտը գրեթէ կրկնապատկել:

Մ. ՏՈՒԼԼԻՈՍ ԿԻԿԵՐՈՆ. Կ. ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ.

Այս ժամանակ Հռոմում մեծ անուն հանեց Մարկոս Տուլլիոս Կիկերոնը (ծնաւ Արպինոնում 106 ին), որ իւր ժամանակի ամենամեծ ճարտասանն ու իւր ազգի ամէնից ընտիր մատենագիրներից մէկն էր: Աշակերտութեան ժամանակ արդէն իւր ընկերակիցների համար օրինակ էր աշխատասիրութեան և համբերութեան, կրթեց իւր միտքը յոյն վարժապետների մօտ և նուիրեց իւր ժամանակը առաւել պերճախօսութեան և իրաւագիտութեան: Քանի օրէն տարբեկան երևելի եղաւ ծառայութեան մէջ և իւր ընտ-

դունակութիւններով կամաց կամաց հասաւ բարձր պաշտօնների և 63 ին հիւպատոս ընտրվեցաւ: Այս պաշտօնում յաջողեցաւ նրան հռովմէական տէրութիւնը կործանումից ազատել: Մի, ծանր պարտքերի մէջ ընկած, զեղխ, բայց մեծ ընդունակութեան տէր փառասէր պատրիկ, Լուկիոս Սերգիոս Կատիլինա անունով, կամենում էր, իր ընկերակիցների հետ միաբանած, դաւաճանութիւնով տէրութիւնը տակն ի վերայ անել և Հռովմը կողոպտել: Կիկերոնի արթնութեամբ դաւաճանութիւնը բացվեցաւ և նորա մասնակիցները դատապարտվեցան. միայն Կատիլինան փախաւ և մեռաւ պատերազմում Պիստորիայի մօտ 62 ին: Սրանով վերստին բարձրացաւ Ժերակոյտի յարգն ու պատիւը, որ Պոմպէոս նուազցրել էր: Ուստի երբ Պոմբէոս յետ դարձաւ Ասիայից, Ժերակոյտը ընդդէմ կացաւ նորա կարգադրութիւնների հաստատմանը: Պոմպէոս չդիտէր, թէ ինչպէս հասնէր իր նպատակին, որ էր իր արած կարգադրութիւնները Ասիայում հաստատելն. նա զինուոր էր և ոչ ճարտասան: Այս դրութեան մէջ օգնութիւն հասաւ նրան մի ուրիշ նշանաւոր անձն, այն է, Կայիոս Յուլիոս Կեսար (ծնաւ 100 ին): Սորա համար մի նոր պատմագիր ասում է. „Երևելի մարդոց շատերը երևելի „եղան մի քանի բանում միայն. իսկ սրան բնու„թիւնը ստեղծել էր ընդունակ ամէն բանում երե„ւելի լինելու համար. նա երևելի էր իրրև զօրա-

„վար, քաջ քաղաքական պաշտօնատար, իբրև օրէնս-
„տու և իրաւաբան. իբրև ճարտասան և բանաստեղծ,
„իբրև պատմաբան, Մաթեմատիկոս և ճարտարապետ:
„Երբէք ոյժ և ժամանակ չէր պակասում Նրան, ըստ
„որում ինչ որ ուրիշները դժուարութեամբ էին
„իւրացնում իրանց, նա շուտով էր ըմբռնում, ո-
„չինչ նորա արծուի սրատեսութիւնից չէր թագ-
„նվում և մինչև զանազան բաների վերայ անգամ
„միևնոյն ժամանակը կարող էր մտածել. գիտութեան
„արժանի ոչ մի բան, ինչ տեսակից էլ լինէր, երբէք
„չէր անտես առնում“:

Կ. ՅՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ.

Ազգականութիւնով և բարեկամութիւնով կին-
նայի և Մարիոսի հետ կապված գոլով, Կեսար
արդէն իբրև երիտասարդ ապացուցեց իւր աներկիւ-
ղութիւնը Սիլլայի հալածանքների ժամանակ: Սը-
բանից դատապարտվեցաւ Կեսար, բայց ողորմութիւն
գտաւ միայն բարեկամների խնդիրքով: 80 ին արաւ
սա առաջին պատերազմը Ասիաւումը: Հռոդոս գնալիս,
ուր կամենում էր պերճախօսութիւն սովորել, ընկաւ
հէնքերի ձեռքը, որոնց նա գրեթէ իշխան դառաւ իւր
գերազանց խելքով: Սա թէև մեծ փրկանք վճարեց
Նրանց, որ պահանջեցին նոքա սորա ազատութեան
համար. բայց Կեսար ճշմարտիւ գլուխ բերեց Նրանց

խոստացած պատիժն էլ։ Իւր քաղցրութեամբ և մտերմութեամբ այնպէս սիրելի եղաւ ժողովրդեան, որ նրան երևելի պաշտօններ յանձնվեցան։ Պատմում են, թէ սա Սպանիա գնալիս, որ իբրև Պրետոր պէտք է կառավարէր 61 ին. Ալպեան լերանց մի գեղում յայտնել է իւր փառասիրութիւնը ասելով. „թէ յօժար է առաւել այն գեղում առաջինը լինել, քան Հռովմում երկրորդ մարդը։ Հռովմ դառնալից յետ, չկատարեց յաղթանակը, որի արժանացել էր Լուսիտանացւոց յաղթելով, միայն իւր հիւպատոսութեան ժամանակը չուշացնելու պատճառով։ Պոմպէոս նոր յետ էր դարձել։ Կեսար բարեկամացաւ Կրասսոսի հետ էլ և երկուսի հետ դաշինքով կապվեցաւ (առաջին եռապետութիւն)։ Սոցա օգնութեամբ ստացաւ Կեսար հիւպատոսութիւն յաջորդ 59 տարվան համար. բայց ինքն էլ փոխարէնը օգնական եղաւ Պոմպէոսի կարգադրութիւնները ընդունել տալու և տարուան վերջին իբրև պրոկոնսուլ (փոխ հիւպատոս) ստացաւ յայս և յայնկոյս ալպեանց Գաղղիայի կառավարութիւնը—արտաքոյ սովորութեան — հինգ տարիով։

ԿԵՍԱՐԻ ԳԱՂԼԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ 58—50

Յայնկոյս ալպեանց Գաղղիայի՝ այժմեան Ֆրանսիայի միայն մի նեղ ծովեզերեայ գաւառը, Միջերկրական ծովի մօտ, պատկանում էր Հռովմայեցւոց (Պրովինցիա այժմեան Պրովանսը)։ Իսկ երկրի միւս մասում բնակում էին զանազան անկախ և պատերազմասէր գաղղիական և այլ ցեղեր։ Այստեղ գտաւ Կեսար ընդարձակ ասպարէզ, իրան փառք և գանձ գտնելու, որոնք էին ամենակարևոր միջոցները, իւր ապագայ նպատակները յառաջ տանելու համար։ Սա յաջորդ ութն տարիում գլուխ բերեց մեծ պատերազմական գործքեր, որոնք ինքը իւր ժամանակագրութեան մէջ նկարագրում է։ Առաջին պատերազմը արաւ նա Հելուետիացւոց դէմ, որոնք բնակում էին Հռենոս և Հռոդանոս գետերի մէջ և կամենում էին նոր բնակարան գտնել իրանց համար Գաղղիաում։ Կեսար յաղթեց նրանց 58 ին Բիբրակտոնի մօտ և ստիպեց նրանց վերստին իրանց հայրենիքը դառնալ։ Յետոյ դարձաւ Սուեվացւոց Արիովիստ թագաւորի դէմ, որ Հռենոսը անցնելով իր գերմանական անունով Կեսարի զինաւորների սիրտը երկար ժամանակ ահ ու դող էր քցել։ Սրան էլ յաղթեց միևնոյն տարին Կեսարի գերազանց պատերազմական ճարտարութիւնը Վեսոնտիոնի մօտ, դաշնադրութեան չը

յաջողելից յետո։ Բելգիացիք Հռոմայեցւոց լուծից վախենալով զէնք առան, պատերազմեցան քաջութեամբ. բայց վերջապէս նմանապէս յաղթվեցան 57 ին։ Այս մինչև ցայժմ ահալի կարծուած ազգերի դէմ արած յաղթութիւնները որչափ ուրախութիւն և զարմանք էին պատճառում ազգին, այնքան առաւել ևս զրգռում էին Պոմպէոսի և Կրասոսի նախանձը։ Բայց և այնպէս սոքա երկուսը միասին, Լուկկաում ժողովելիս, յորդորեցին Կեսարին, որ սա իր ազդեցութեամբ ազգի վերայ երկրորդ անգամ նոցա հիւպատոսութիւն տալ տայ ու հինգ տարի ժամանակով Պոմպէոսին Սպանիայի և Կրասոսին Ասորւոց կառավարութիւնը յանձնել տայ։ Ինքն Կեսար էլ հինգ տարի ժամանակով կրկին Գաղղիայի կուսակալութիւնը ստացաւ։ Այս տարիներն էլ երևելի եղան զանազան նշանաւոր գործքերով։ Ճարտարարուեստ կերպիւ շինած կամուրջով անցաւ նա առաջներ Հռոմայեցիներից այժմեան Բոնն քաղաքի մօտ Հռենոսը 55 ին և ստիպեց մերձակայ տեղերում բնակող Գերմանացիներուն վերատին իրանց խորին անտառները քաշվելու։ Նոյն տարին անցաւ Բրիտանիա էլ, ուր նոյնպէս դեռ ոչ մի Հռոմայեցի տոք չէր դրել և 54 ին վերատին անցաւ այսանգ միայն տեղական իշխանութիւն չկարաց հաստատել։ Մեծ վրանդ էր ապառնում նրան երբ 52 ին գրեթէ ողջ Գաղղիացի ազգերը Վերցինգետորիքսի առաջնոր-

դութեամբ ապստամբեցան։ Գլխաւոր պատերազմը եղաւ Ալեզիայի մօտ, ուր Կեսար թշնամեաց զօրավարին իր 80,000 զօրքով միասին պատեց վաթսուն հազար Հռովմայեցիներով և ինքն էլ վերատին 250000 գաղղիացիներից պաշարվեցաւ։ Միայն այս նեղ դրութիւնից էլ յաղթութեամբ ազատեցաւ Կեսար և գաղղիայի նուաճումն այնուհետև կատարեալ եղաւ։ Այսպէս մի քանի տարվան մէջ բաց արաւ կապակցութիւն մինչև ցայժմ անյայտ հիւսիսային երկիրների հետ, տարածեց Հռովմայեցւոց զէնքի փառքը երկու հեռաւոր երկիրների մէջ, մի մեծ գաւառի տիրեց և Հռովմայեցւոց զօրութիւնը անգամ մեծացրեց, գաղղիացիներուն ընդունելով փոքր առ փոքր փափկացող Հռովմայեցի զօրքերի մէջ։

ԵՐԿՐՈՐԴ ՆԵՐՔԻՆ (ՔԱՂԱՔԱԿԱՆ) ՊԱՏԵՐԱԶՄԸ։

Մինչև որ այս անցքերը անցնում էին գաղղիաում, Կրասսոս սպանվեցաւ Կարռի մօտ (Խառան) Պարթևների դէմ արած պատերազմում, իսկ Պոմպէոս օրինաց դէմ, որ հրամայում էին նրան իրան յանձնված գաւառում բնակել, կենում էր անգործութեան մէջ ընկղմած, խռովութիւններ հանելով, Հռովմում կամ նորա շրջակայքում։ Բայց երբ մօտացաւ ժամանակը և Կեսար պէտք է թողնէր գաղղիայի կառավարութիւնը, սա խնդրեց իր համար

վերստին հիւպատոսութիւն, որ Պոմպէոս Ծերակոյտի կողմը բռնելով բացասել տուաւ Նրան և հրաման հանեց, որ Կեսար իր լեգէոնները արձակէ: Պոմպէոս յոյս ունէր այս կերպով իւր նախանձորդը ստիպելու, որ իրրև մասնաւոր մարդ անզօր յայտնվի Հռոմ և գուցէ կարողանայ դատաստանի էլ կանչել Նրան, համար տալու իւր գործոց: Կեսար լաւ ճանաչելով Պոմպէոսին յանձն առաւ այս, միայն այն պայմանով, որ Պոմպէոս էլ դուրս գայ իւր պաշտօնից, և որովհետև այս չեղաւ, Կեսար հրատարակեց պատերազմ: Հռուբիկոնը էր Նորա գաւառի սահմանը, ոչ մի զօրավար իրաւունք չունէր զօրքով այս գետը անցնելու: Կեսար 59 ի սկզբին անցաւ գետը, յանկարծակի յարձակմամբ անպատրաստ թշնամիների վերայ հասաւ, աննշան ընդդիմութիւնից յետ 60 օրում տիրեց բոլոր Իտալիային և մտաւ Հռոմ: Պոմպէոս Ծերակոյտի մեծ մասի հետ, սորա մէջ էր անընկճելի Կատոնը և փոփոխական Կիկերոնը, փախաւ Յունաստան: Կեսար վճռեց առաջ Պոմպէոսի Սպանիաում գտնվող զօրքերուն նուաճել—„առաջ զօրքերուն առանց զօրավարին պէտք է նուաճել“, ասաց նա, „յետոյ զօրավարին առանց զօրքի“: Նրան յաջողեցաւ Իլերդայի մօտ (այժմեան Լերիդան) առաւել հնարքով և ճարտարութեամբ քան բաց դաշտում պատերազմելով ստիպել Ափրանիոս և Պետրէոս Լեգատներուն անձնատուր լինելու: Գիտնական Վարրոն

առանց մի գինք շարժելու անձնատուր եղաւ։ Պինդ
այս միջոց այն Պոմպէոս զինուորից ոմանք զը-
սուսպասանելու, հարստակ թագաւորներու և իշ-
խաններու իրանց զօրքերով ժողովեց Վասիլիսանիս,
իւր հետ փախած սիլիցիացիներից կողմից ծերա-
կոյս, որի անուանով և սուտաշարիւթիւնով ամէն բան
անում էր։ Դեռ ակը էր Պոմպէոս ապրիսանին և յա-
նիսական ծովերի, որ պահում էր հինգ հարիւր
նաւերով և ծովեզերքը առաւել քան պաշտպանելու
համար բնքը անձամբ գնաց Դիւրրաքիոն։ Ա-
պիսի անցաղող հանդամանքների մէջ Կեսար — որ
Սպանիայից դառնալով կարճ ժամանակ մնաց Հռոմ-
ում և իրան առաջարկած դիկտատորութեան տեղ
հիւպատոսութիւնը յանձն առաւ — ձմեռան մէջ,
փոքր զօրքով Ցրունդիսիոնից Եպիրոս անցաւ, ամ-
բացաւ շուտ այստեղ և շտապից շուտով իւր զօրքի
մնացորդն էլ անցկացնել, որ մրրկի և նաւերի պա-
կասութեան պատճառով յետ էին մնացել։ Անբերի
ծովեզերքումը, ուր մեծ բազմութիւնը թշնամիների
և սոսկ սպառնում էին, բան որում Պոմպէոս նա-
ւատորմիղով արդելից նրան պաշար ստանալու — ե-
բեւեցաւ նորա զինուորների համբերութիւնը և քա-
ջութիւնը։ Վերջապէս պաշարից նա Պոմպէոսին Դիւր-
բաքիոնի մոտ, միայն երկու Դաղղիացի իշխանների
դաւաճանութեամբ և իւր զօրքի յանկարծական
խռովութեամբը ջարդ ստացաւ։ Ուստի և առաւել

լաւ համարեց Թեսսալիա գնալ, ուր միտը դրել էր Գոմիտիոս Կալվինոսի հետ միաւորվիլ. Պոմպէոսը հեռուներց նրան այնտեղ, որ օգնութիւն հասնի իւր աներոջ՝ Մետելլոս Սկիպիոնի զօրքին, որ նմանապէս այնտեղ էր:

ՖԱՐՍԱԼԻՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ. ՊՈՄՊԷՈՍԻ ՄԱՀԸ.

Թեսսալիաւում Փարսալիայի մօտ (ամառը 48 ին) պատահեցան միմեանց երկու հակառակորդները: Պոմպէոսի կողմն էր զօրաց բազմութիւնը, ընտիր հեծելազօրքը, որ Հռովմայեցի ազնուական երիտասարդներից էր կազմած, զէնքերի և պատերազմական կարասեաց ճոխութիւնը ու լիութիւն ամէն բանում: Կեսարի համար ընդհակառակն պատերազմում էին իւր քաջ Գերմանացի և Գաղղիացի ազգերի դէմ անթիւ պատերազմերում փորձված զինուորները, որ թէև աննշան ու անճոխ զէնքով զինաւորած էին, միայն հաստատ յոյս ունէին իրանց զօրավարի վերայ, որ նրանց միշտ դէպի յաղթութիւն էր առաջնորդել: Ուստի և սակաւաթիւ լինելը իրանց բնաւին չէր վախացնում նրանց: Սոքա քսան երկու հազար հետևակ և հազար հեծելազօրներ էին, իսկ Պոմպէոս ունէր քառասուն հինգ հազար հետևակ և եօթը հազար հեծելազօր: Սա չէր կամենում բանը պատերազմով վերջացնել. այլ առաւել լաւ էր հա-

մարում իր թշնամուն սովով թուլացնել և ջնջել, միայն այս յապաղումն ուրիշ հռովմայեցի իշխանների աչքին փոքրոգութիւն թուեցաւ և Պոմպէոս վերջապէս, թէև ակամայ, տեղն տուեց նոցա ցանկութեան: Պոմպէոսի կարգադրութեամբ նորա գերազանց և ընտիր հեծելազօրքը պէտք է գործը վճռէր. միայն ճարտար կարգը, ինչպէս կեսար իւր հետևակ զօրք շարեց, 'ի դերև հանեց նոցա յարձակումն, նոքա ջարդվեցան և մնացած զօրքերն էլ շուտով նոյն վիճակի մէջ ընկան: Ցուսահատած և խռոված, ծովով փախաւ Պոմպէոս Եգիպտոս, ուր Պտղոմէոս Դիոնիսիոս թագաւորը շատ պարտաւորած էր իրանից, ուստի և շատ օգնութեան և պաշտպանութեան յոյս ունէր նրանից, բայց չար խրատտուներուն լսելով, հրամայեց նա Պոմպէոսին դեռ ցամաք չդուրս եկած սպանել դաւաճանութեամբ 48 ին:

ԿԵՍԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԳՈՐԾՔԵՐԸ.

Կեսար յաղթված զօրքը բոլորովին նուաճելից յետ գնաց Պոմպէոսի ետևից, միայն ուշ վերայ հասաւ, չկարողացաւ փրկել նորա կեանքը: Դատաւոր ընտրվելով դաւաճան թագաւորի և նորա Կլէոպատրա քրոջ մէջ, որ պատերազմում էին թագաւորութեան համար, կեսար թագը վերջինին տուեց, մահուան վտանգի մէջ իւր կեանքը գցելով Աղեքսանդ-

րիաում 47 ին։ Կեսարին շատ դիւրին եղաւ Պոմպէոսի փառնակէս թագաւորին յաղթելը, որ Հռովմայեցւոց երկպառակութիւնը տեսնելով. յոյս ունէր իւր հայրենի թագաւորութեան տիրելու և բաւական առաջ էր գնացել յաղթութեամբ փոքր Ասիայի մէջ։ Սրան յաղթեց Կեսար 47 ին Զելայի մօտ այնպէս շուտ, որ Հռովմ իմաց արաւ իր յաղթութիւնը հետևեալ երեք բառերով. „Եկի, տեսի, յաղթեցի“։ Սորանից յետ գնաց Կեսար պատերազմելու Ափրիկէ, և անցաւ Իտալիայի վերայով, ուր ինքը երկրորդ անգամ դիկտատորութիւն ստացաւ և իւր լեգատ, Մարկոս, Անտոնինոս, հեծելազօրքի գլուխ ընտրվեցաւ։ Ափրիկայում ժողովել էին Պոմպէոսի զօրքերի մնացորդները, որոնց գլուխ էին Մետելլոս, Սկիպիոն և Կատոն, որ Մաւրիտանիայի Յուբա թագաւորի հետ միացել էին և Կեսար այս թշնամիներուն էլ ջնջելու համար ստիպվեցաւ մեծ պատերազմ տալու Թապսոսի մօտ 46 ին ու ջարդեց նրանց։ Կատոնը Ուտիկաում և Յուբա իրանք իրանց սպանեցին և Նումիդիան դարձաւ Հռովմայեցւոց գաւառ։ Իւր յաղթութիւնները սկսաւ Կեսար տօնել, որին ծերակոյտը դիկտատոր ընտրեց տասն տարիով. Կեսար կատարեց չորս օր հանդէս — Գաղղիայի, Եգիպտոսի, Պոնտոսի և Ափրիկէի նուաճման համար — հասարակաց խաղեր և խնճոյքներ կազմեց այնպիսի ճոխութեամբ, որպիսի դեռ չէին տեսնված։ Կեսարի ներքին կար-

գաղրութիւններից մէկն էլ էր տոմարի ուղղելը, որ մինչև ներկայ ժամանակ նորա անուամբ յուլիոսեան է կոչվում: Առաջ քան թէ ժողովրդեան բարօրութեան վերայ կ'մտածէր, նորա ուշադրութիւնը գրաւեց մի նոր վերջին և յուսահատ պատերազմ: Կնէոս և Սեքստոս, մեծին Պոմպէոսի որդիքը, Սպանիաում հաւաքեցին իրանց հօր կուսակիցների մնացորդներուն և կազմեցին տասն լեգէոն զօրք: Կեսար փութով վերայ հասաւ և Մունդայի մօտ 45 ին պատահեցաւ արիւնահեղ պատերազմը, որ պէտք է գործը վճռէր: Կեսարի թշնամիները պատերազմում էին քաջութեամբ, կամենալով կամ իրանց հօր վրէժը հանել կամ մեռնել և նոցա նշանը էր „սէր որդիական": Ողորմութեան յոյս չկար ոչ մի կողմից: Արդէն Կեսարի զօրքը սկսաւ լքանել և հարուածը կատարեալ էր երևում: Միայն կոչեց այն ժամանակ նա իւր զինուորներին. „Մի՞թէ կամենում էք ինձ երեխայիս մատնել". և սաղաւարտը գլխից առնելով, որ ամէնքը ճանաչեն իրան, առ ոչինչ համարելով մահը, ընկաւ առաջ: Նորա ձայնը և օրինակը քաջալերեցին զօրքը և թշնամիների անզգուշութիւնը կատարեց նոցա յաղթութիւն: Երեսուն երեք հազար սպանած հոգիք ծածկեցին պատերազմի դաշտը. Կընէոս Պոմպէոսը սպանվեցաւ փախչելիս. իսկ Սեքստոսը դեռ շատ տարիներ պաշտպանեց իրան, իւր նաւատորմիղովը:

ԿԵՍԱՐԻ ՄԱՀԸ.

Հռոմ դառնալից յետո Կեսար վարձատրեց իւր կուսակիցներուն և բարեկամներուն, հոգս տարաւ ժողովրդեան աղքատ մասի վերայ, իր փախած և աքսորած թշնամիներին իրաւունք տուաւ յետ դառնալու և սկսաւ հասարակաց բարօրութեան գործքերով պարապել: Ցերակոյտը պատիւներով ծածկեց նրան և իրաւունք տուաւ իր պաշտօնը որդուց որդի ժառանգելու և կարգեց նրան գրեթէ աստուածների դասը: Բայց նա ցանկացաւ աւելի անուանն էլ: Նորա բարձրաթռիչ ոգին չէր կարողանում խաղաղութեան հանգիստով գոհ լինել. ուստի նախ կամենում էր Կրասսոսի մահուան վրէժը հանել Պարթեւներից և յետոյ Դանուբով երթալ Գերմանացիներուն նուաճելու: Առաջին պատերազմի համար արդէն պատրաստութիւնները արած էին և լեգէոնները նշանակած, միայն նորա անակնկալ մահը ամէն բան ընդմիջեց: Վաթսունից առաւել հոգիք, ըստ մեծի մասին սինկղիտոսներ, որոնց շատերին Կեսարի բարեխառնութիւնը շնորհել էր իրանց կեանքը և հայրենիքը, դաւակցութիւն գործեցին նորա դէմ: Կեսարին զգուշացրին, միայն նա առ ոչինչ համարեց վտանգը և հաւատ անգամ չընծայեց այս զգուշացնելուն: „Լաւ է մեռնել, քան միշտ երկիւղի մէջ

լինել», էին նորա խօսքերը մահից փոքր ժամանակ առաջ։ Մարտի 15 ին 44 ին, երբ Ծերակոյտում նըստած էր, յարձակեցան դաւակիցները, Մարկոս Բրուտոսի և Կայիոս Կասսիոսի առաջնորդութեամբ և սպանեցին նրան, քսան երեք վէրք տալով նրան։ Մեռաւ Կեսար Պոմպէոսի արձանի տակը առանց մի հառաչանքի ձայն հանելու։ Նորա սպանողները իրանց գործած գործքի վերայ զղջացան, միայն ուշ էր արդէն, և երեք տարուց յետո նրանցից ոչ մէկին էլ կենդանի չէր։

ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՊԵՏՈՒԹԻՒՆ։

Կեսարի մահուան համբաւը ընկղմեց Հռոմը խռովութեան ու տրտմութեան մէջ։ Մ. Անտոնիոս, որ այն ժամանակ հիւպատոս էր և գործքի մէջ քաջ ու գործունեայ, պատեհ համարեց ողջ ժողովուրդը, Կեսարի թաղման և կոտակը կարդալու ժամանակ, գրգռելու սպանիչների դէմ այնպէս, որ ամէնքի տները քանդեցին և ստիպեցին նրանց փութով Հռոմից փախչելու։ Բրուտոս և Կասսիոս գնացին գաւառները, որ նրանց Կեսար յանձնել էր։ Առաջինը Մակեդոնիա գնաց, իսկ երկրորդը Ասորիք։ Այս ժամանակ Հռոմ դարձաւ Կեսարի ամենամերձ ժառանգը, նորա Յուլիա քրոջ թոռն Կայիոս Ոկտաւիոս, որ իրրև որդեգիր նորա Յուլիոս Կեսար Ոկտաւիանոս կոչվեցաւ և

ծնել էր 63 ին: Անտոնիոս նրան արհամարհելով պատ-
ճառ տուեց նրան Ծերակոյտի և մանաւանդ Կիկե-
րոնի հետ միաւորվելով պատերազմ յարուցանելու
իրան դէմ (այս է Մուտինական անուանված պատե-
րազմը) 43 ին: Բայց շուտով հաշտվեցաւ նորա հետ
և նորա ու Մ. Էմիլոս Լեպիդոսի հետ, որ յայնկոյս
ալպեանց Գաղղիան էր կառավարում, միասին կազ-
մեց երկրորդ եռապետութիւնը: Միաւորված զօրու-
թեամբ 43 ին եռապետները տիրեցին Հռովմին և
և դատապարտեցին իրանց թշնամիներուն, որոնց
մէջ էր Կիկերոն էլ, որի մահը ցանկացաւ Անտոնիոս:
Բրուտոս և Կասսիոս, որ բազմաթիւ զօրքով Մակե-
դոնիաում կանգնած էին, դեռ վտանգաւոր էին շատ:
Սրանց դէմ գնացին Անտոնիոս և Ոկտաւիանոս, իսկ
Լեպիդոս մնաց Հռովմ պաշտպանելու համար: Փի-
լիպպէ քաղաքի մօտ կրկին պատերազմում 42 ին
երկու կողմից էլ քաջութեամբ պատերազմեցան, Ան-
տոնիոս Կասսիոսի զօրքին և Բրուտոս Ոկտաւիանո-
սին յաղթեցին. միայն Կասսիոս, իւր ընկերակցի
յաղթութիւնը չգիտենալով և նորա հեծելազօրքը,
որ իրան օգնութիւն էր գալիս, թշնամի կարծելով
ինքը իրան սպանեց, որով Բրուտոս էլ լքած, երկ-
րորդ պատերազմը անյաջող լինելով, հետևեց նորա
օրինակին: Զօրքի մնացորդը անձնատուր եղաւ և
յաղթութիւնից յետ եռապետները բաժանվեցան:
Ոկտաւիանոս գնաց Իտալիա, զինուորներին երկիր բա-

ժանելու ու վարձատրելու և Անտոնիոս Ապա անցաւ Կեսարի սպանչաց կուսակիցներուն պատժելու: Այսպէս ծանօթացաւ Կլէոպատրա թագուհու հետ ու նորա հրապարանքներին գերի դառաւ: Այս և Պերուզիական պատերազմը, որի առիթը Լուկիոս Անտոնիոս էր, պատճառ եղան նորա և Ոկտաւիանոսի մէջ ծագած երկպառակութեան. միայն համաձայնութիւնը վերստին հաստատվեցաւ Պրունդուզիոնում միմեանց հետ տեսութիւն անելով, ուր ողջ Հռովմայեցւոց տէրութեան երկիրները երեք մասն բաժանեցին: Լիբիկէի Կորդա քաղաքից դէպի արևելք եղած երկիրները ընկան Անտոնիոսին, դէպի արևմուտք եղածները Ոկտաւիանոսին և Ափրիկէն Լեպիդոսին: Երեքի մէջ սէրը և համաձայնութիւնը հաստատ պահելու համար Անտոնիոս իրան կին առաւ Ոկտաւիանոսի Ոկտավիա քրոջը 40 ին: Ոկտաւիանոսի զօրութիւնը շուտով առաւել մեծացաւ, երբ Ագրիպպա զօրավարը Սիկէի մօտ ջարդեց և զրկեց իւր երկիրներից Սեքստոս Պոմպէոսին, որ տիրում էր Սիկիլիային և այլ կղզիներին 36 ին և Լեպիդոսը պաշտօնից զրկվեցաւ: Այժմ ամենեին առանց երկիւղի կարող էր Օգտաւիանոս Անտոնիոսի դէմ կենալ. մանաւանդ երբ սա Պարթևների դէմ անյաջողութեամբ պատերազմելից յետ 36 ին յանձնեց իրան բոլորովին Կլէոպատրային, բաժանեց նորա որդւոց Հռովմայեցւոց դաւառները և ազնիւ Ոկտա-

վիային հեռացրեց իրանից 32 ին։ Պատերազմը, ըստ անուան Կլէոպատրայի դէմ, սկսաւ։ Անտոնիոս Կլէոպատրայի հետ միասին պատրաստվեցաւ պատերազմի, որ Ակտիոնի մօտ տեղի ունեցաւ Ծովի վերայ 31 ին։ Կռուի սկզբումն Կլէոպատրան փախաւ, Անտոնիոս էլ նրան հետևեց։ Ագրիպպա Ոկտավիանոսի Ծովակալը բոլորովին յաղթեց։ Մի շաբաթից անձնատուր եղան նոցա ցամաքային զօրքերն էլ։ Ըստ որում Անտոնիոս ոչինչ հրաման չտուաւ նրանց փախչելիս։ Երկու փախստականներն էլ, երբ տեսան, որ Ոկտաւիանոս իրանց Եգիպտոս հետևում է, ինքնասպանութիւնից աւելի այլ միջոց չգտան թշնամուց ազատվելու, Կլէոպատրայի 'ի զուր իւր ախոյեանի սիրտը գրաւել փորձելից յետ։ Ոկտաւիանոս մնաց միակ իշխող ամբողջ Հռովմայեցւոց տէրութեան, որի հետ միաւորեց 30 ին Եգիպտոսն էլ իրրև գաւառ։

դ. Հռովմայեցւոց կայսերութիւնն մինչև 476 թիւը Քրիստոսի։

ՏԷՐՈՒԹԵԱՆ ԴՐՈՒԹԻՆԸ ՕԳՈՍՏՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ։

Հռովմայեցւոց տէրութիւնը պարունակում էր գրեթէ բոլոր այն ժամանակ յայտնի աշխարհը՝ Միջերկրական Ծովի չորս կողմում եղած բարեբեր երկիրները, և սահմանն էր հարաւից Սահարա անա-

պատը, արևելքից Եփրատ գետը, հիւսիսից Հռենոս, որ Ոիտաւիանոս դանուբի հետ միաւորեց և արևմուտքից Ատլանտեան Ովկիանոսը: Երկրի տարածութիւնը էր մինչև հարիւր հազար քառակուսի մրդոն և բնակչաց թիւը մօտ հարիւր քսան միլիոն: Թէև Ոիտաւիանոս առանց խորամանկութեան և բրուտութեան չհասաւ այս իշխանութեան, գոնեա 'ի բարին գործածեց այն, հոգալով բարգաւաքել իր իշխանութեան տակ եղող ազգերուն: Սա կառավարեց իմաստութեամբ և քաղցրութեամբ և լաւ օրէնքներով մեծաւորեաց էր վերատին կարգ հաստատել տէրութեան մէջ ու ժողովրդեան բարոյականութիւնը ուղղել: Ներակոյտը պատուեց նրան երախտագիտութեամբ, Օգոստոս անուն տալով: Որքան երջանիկ կարող էր համարել իրան Օգոստոս արտաքուստ ամէն բանում յաջողութիւն գտնելով և յառաջադիմութիւն իր նպատակին հասնելում. այնքան էլ ընտանեկան կողմից դժբաղդ գտնվեցաւ, որովհետև իր բոլոր որդոց և սիրելի ազգականների մահը աչքով տեսաւ և կասկած էր տանում իւր երկրորդ ամուսնի Լիվիային վերայ, որ կամենում էր իւր առաջին ամուսնից ունեցած որդուն Տիբերիասին ժառանգ անել կայսերութեան: Պահմանների մէջ Օգոստոսի ինքնակալութեան ժամանակն էլ մի քանի պատերազմներ պատահեցան, մանաւանդ սաստիկ էր պատերազմը Գերմանացիների դէմ, որ Գրիտոսից 15

տարի առաջ սկսել էր։ Սկզբումը Օգոստոսի երկրորդ որդեգիրը Դրուզոսը յաջողութեամբ պատերազմեցաւ Նոցա դէմ և հասաւ մինչև Ելբա գետը. բայց երբ վաղահաս մահը սրան վերայ հասաւ Ց֊ին Ն. Ք. Հռովմայեցւոց հարուածը մեծ եղաւ. մանաւանդ Ջերմանիայի անտառուտքի անտառումը, ուր Արմինիոս (Հերման) Քերուսկեանց իշխանը մեծ ջարդ տուաց Հռովմայեցւոց Վարոս զօրավարին Ց֊ին Ն. Ք. Ք։ Հռովմայեցւոց յուսահատութիւնը այնքան մեծ էր, որ վախենում էին, թէ գուցէ Գերմանացիներուն Հռովմի դրան մօտ տեսնեն և Օգոստոս յուսահատած իւր ջարդված լեգէոնները էր պահանջում Վարոսից։

Տէրութեան մէջ ամէն տեղ Օգոստոսի հոգացողութեամբ, որի մէջ նրան օգնում էին Ագրիպպա և Մեկենաս, թագաւորում էին հանգստութիւն և բարօրութիւն։ Նոյնպէս խաղաղական ազնիւ արհեստները՝ գիտութիւնները և արուեստները, սորա իշխանութեան ժամանակ, հասան վերին աստիճանի, ուստի և այս դարը անուանում են օգոստոսեան դար։ Սկզբումը Հռովմայեցիք էին բիրտ, և միայն երկրագործութեան և պատերազմի համար ազգ, որ իւր կրօնը և գիրը Սարինացիներից, Ետրուսկացիներից, Յոյներից և ուրիշ ազգերից առացաւ։ Այս վերջիններից առացան նմանապէս վերջին դարերում բարձրագոյն լուսաւորութիւն էլ. միայն իրանց վարժապետներին բոլորովին չհասան։ Թէև յափշտակում

էին ցոյներից նոցա արհեստական աշխատանքները և պարարտում էին նրանցով իրանց քաղաքը և տները, միայն իրանք արհեստը այն աստիճանին չկարողացան հասցնել գերճախճուութիւնը և իրաւագիտութիւնը ընդհակառակն հասան Հռովմայեցւոց մէջ բարձր կատարելութեան, ինչպէս մանաւանդ Օգոստոսի ժամանակը և փոքր ինչ նրանից առաջ պատմագրութիւնը և բանաստեղծութիւնը: Իբրև պատմագիր երևելի եղան Սալուստիոս, Յուլիոս Կեսար և Լիվիոս. իբրև բանաստեղծներ առաջին տեղը բռնեցին Ովիդիոս, Վիրգիլիոս, և Ովիդիոս: Թէև ցամաքային և ծովային վաճառականութիւնը ըստ մեծի մասին ամենեքեակ քաղաքի օգտի համար էր լինում, բայց շատ փոքր էին բուն Հռովմայեցի քաղաքացիներ, որ նրանով պարապում լինէին. այլ առաւել ծովեզերեայ երկիրների բնակիչներն էին, որ ծովային վաճառականութիւնով պարապում էին, որպէս և միջին երկիրների բնակիչները ցամաքայինով: Գաւառները, որ կայսեր և ծերակոյտի մէջ բաժանած էին, կառավարում էին լեգատները կամ փոխհիւպատոսները:

Տէրութեան եկամուտը բաղկանում էր ազգունի երկիրների վարձից, մաքսից և տասանորդից, ժառանգութեան և վաճառման տուրքից: Բազմաթիւ ցամաքային զօրքերը, մօտ երեք հարիւր հազար հոգիք, պահպանում էին տէրութեան սահմանները և

այս զինուորների բանակներից ապրոզայում ծագեցան մեծ քաղաքներ. զորօրինակ Կոլոնիա Ագրիպպինա (Կեօլն) Մոգունտիակոն (Մայինց), Աւգուստա Վինտիլիկոռում (Աուգսբուրգ) Հռեգինոն (Հռեգենսբուրգ) և այլն։ Ընայելով այսքան արտաքին ճոխութեան Հռովմայ մէջ արդէն երևում էր իր անկման և վախճանի սերմն. որովհետև ճոխութիւնը և փափկասիրութիւնը անցել էին չափից, արդարութեան և հայրենասիրութեան կայծը բոլորովին հանգել էր Հռովմայեցւոց սրտերում, մանկանց կրթութիւնը յանձնված էր գերիներին կամ ազատագրեալներին և ներքին կապը՝ բուն հաւատը բոլորովին ջնջվել այն ժամանակ, երբ սկսան զանազան կրօնների հետ ծանօթանալ, որոնցից կամ բոլորովին ոչ մէկը չէին ընդունում և կամ օտար և անծանօթին ցանկանալով բոլորովին անմիտ աւելորդապաշտութիւնների մէջ էին ընկղմում։

ՑԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ. ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ ՀՐԷԻՑ ՎԵՐԱԿԱԳՆԱԾ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ.

Հռովմայեցւոց տէրութեան անկման առաջը առնել չէր կարող ամենալաւ իշխանն էլ. իսկ բարոյական անկման, որ այս ժամանակս սպառնում էր, Աստուած ինքը արգելք եղաւ և մարդկութիւնը ազատեց վտանգից. որովհետև երբ ընդարձակ եր-

կիրները Միջերկրական ծովի շրջ կողմերում միաւորվեցան մի իշխանութեան տակ, երբ բազմազան և հեռաւոր ազգեր, լեզուներ, կրօններ և սովորութիւններ միմեանց պատահեցան, խառնվեցան և միացան, Օգոստոսի կառավարութեան երեսներորդ տարին հրէից մի փոքրիկ քաղաքումը, ազգատոհմ վիճակից, ծնաւ Յիսուս Քրիստոս՝ աշխարհիս փրկիչը: Ինչպէս կեցաւ սա, վարդապետեց, չարչարվեցաւ և Աստուծոյ արքայութիւնը երկրիս վերայ քարոզեց, նորա աշակերտների սուրբ գրութիւնները, որ ամէնի ձեռում գտնվում են, ճշմարտութեամբ և մանրամասնաբար նկարագրում են: Բայց դեռ երկար ժամանակ անցաւ, մինչև որ քրիստոնէական հաւատը իշխող դառաւ: Յուդայի երկրում Հիւրկանոսից յետոյ, որին Պոմպէոս թագաւորացրել էր և որ շուտով պէտք է միայն քահանայապետական պաշտօնով գոհ լինէր, 43 ից թագաւորեց Կեսարից նշանակած Անտիպատրոսը, և սորա մահից յետոյ իւր որդին Հերոդէս 41 ից Ն. Ք. Ք. մինչև 1 Քրիստոսի թուականի. սրան հաստատեցին յետոյ Անտոնիոս և Օգոստոս էլ. երբ սա վախճանեցաւ, իր երեք որդիքը տէրութիւնը միմեանց մէջ բաժանեցին: Արդէն Քրիստոսի 6 թուականին երկրի լաւ մասը երուսաղէմ մայրաքաղաքովը միաւորեցաւ Հռովմայեցւոց կայսերութեան հետ և 37 ին և 41 ին միւս մասերն էլ նոյն վիճակին ենթարկեցան:

ՏԻԲԵՐԻՈՍ, ԿԱԼԻԳՈՒԼԱ, ԿԼԱՒԴԻՈՍ ԵՒ ՆԵՐՈՆ

Օգոստոսի չորս յաջորդների կառավարութիւնը բոլորովին մարդկութեան օգուտ չբերեց։ Տիբերիոս, կասկածոտ և խիստ 14—34 թ. Կալիկուլա, յիմար և կրքերի ծառայ 37—41. Կլաւդիոս, բարի և գիտուն, միայն թոյլ, ուստի և իւր կանանց Մեսսալինայի և Ագրիպպինայի իշխանութեան տակ էր, 41—54. և այս վերջինի որդին Ներոնը, որի անունը խստութեան վերին աստիճանի նշանակութիւն ստացաւ 54—68, թէ իրանց ժամանակակիցներին և թէ յետագաներին ոչինչ պատուաւորման յիշատակ չթողին։ Բայց և այնպէս շարութիւնները, որ գործում էին կամ գործել էին տալիս, պատահում էին միայն Հռոմի քաղաքում։ Ազնիւ անձինք ինչպէս էին վերոյիշեալ Դրուսոսի որդին Գերմանիկոսը և անմեղ Բրիտաննիկոսը մեռան սպանութեամբ և իշխանութիւնը ընդհակառակն տրվեցաւ զեղխ և չար շողոքորդներին (Սէյանոս և Նարկիսսոս) և Հռոմի ժողովրդեան սիրտը գրաւվում էր խաղերով և ընծաներով։ Միայն հեռուում դեռ գործում էին մեծ գործեր լաւ զօրավարները, որպիսի էին Սուետոնիոս Պաւլինոս 59—61, որ նուաճեց Բրիտանիան և Կորբուլոն, որ 56—64 յաղթեց Պարթևներին։ Ներոնի ժամանակ նորա կարգադրութեամբ, որ կա-

մնում էր տեսանել, թէ ինչպէս էր ազդել Ներոնի քաղաքը, Հռովմում մեծ հրդեհ պատահեցաւ, որի պատճառաւ քրիստոնեաներուն դնելով, ժողովրդեան երկիւղից, սատրիկ տկաւ նրանց հալածել ճգ թն: Երբ վերջապէս նորա յիմարութիւնը և անմիտ խստութիւնը հասան վերին աստիճանի և նորա ամենասիրելի բարեկամները և ազգականները, մայրը, եղբայրը, կինը, վարժապետը Սենեկան, մասամբ ծածկաբար, մասամբ յայտնապէս սպանվեցան, ծագեցան զօրքերի մէջ Գաղղիաում և Սպանիաում խռովութիւններ: Սոցա մեծ մասը ցանկացան գալբային, որ Սպանիական լեգէոնների զօրավարն էր: Սա գնաց Հռովմ զօրքով, Ներոն փախաւ և իր հալածողներից նեղացած, իւր ազատագրեալներից մէկի կալուածքում սպանեց ինքը իրան: Արանով վերջացաւ Օգոստոսի կայսերական ցեղը:

ԳԱԼԲԱ, ՈԹՈՆ, ՎԻՏԵԼԼԻՈՍ, ՎԵՍՊԱՍԻԱՆ.

Գալբան երկար չիշխեց. այլ մի ապստամբութեան ժամանակ սպանվեցաւ 69 թն: Ոթոնը, երրէմն Ներոնի մտերիմը, Գալբային դահից զրկելից յետոյ, ինքն էլ Ֆեդրիակոնի մօտ Հռովմայեցի Գերմանական զօրքերի զօրավար Վիտելլիոսից յաղթվեցաւ և ինքը իրան զրկեց կեանքից: Բայց Վիտելլիոս էլ, որ իւր շռայլութեամբ և զեղխութեամբ երևելի եղաւ, նոյն

տարին զրկվեցաւ գահից Աստուց զօրքերի վերադարձուցեալ զօրավարի ձեռքով և սպանվեցաւ Հռոմում։ Վեսպասիանից 69—79 սկսվեցան յաւ ժամանակները։ Սորա իմաստուն և արդար կառավարութեան ամի փոքր ինչ հոգի առաւ զօրութիւնից ընկած ազգութիւնը. սա կաշառակերութեանց և ներգութեանց առաջը առաւ, հոգս էր տանում բարեկարգութեան և բարոյականութեան վերայ, հիմնեց ընդհանուր գրատուն, վարձեց առաջին անգամ հասարակաց վարժապետներ. և զարդարեց Հռոմը մեծակառոյց և ճոխ շինուածներով, որոնց ամենից երևելին Կոլոսէոնը մինչև ցայժմ էլ կայ։— Արդէն սորա կայրը ընարվելից առաջ Հրէաները, Փլորոս տեղական խիստ կառավարութիւնից ներգացած և ճնշած գոլով, իրանց ապստամբութիւնը 66 ին սկսել էին։ Ի զուր փորձեցին Վեսպասիան, որ այն ժամանակ Աստուց երկրի կուսակալ էր և նորա կայսր դառնալից յետո, նորա որդին Տիտոսը՝ քաղցրութեամբ նուաճելու մոլորեալներուն։ Դրանց պէտք եղաւ զէնքով նուաճել։ Հինգամեայ պաշարումից յետո, երբ սովը վերին ծայրը հասել էր, առան Հռոմայեցիք Տիտոսի առաջնորդութեամբ Երուսաղէմը և տաճարը, ուր ամենից կամակորները յուսահատութեամբ էլի դէմ կեցան։ Երկուսն էլ մոխիր դարձան 70 ին։ Մի միլիոնից առաւել մարդիկ մեռան այս պատերազմերում։ Իսկ կենդանի մնացածները իրրև գերիք ծախվեցան և հեռաւոր երկիրներ ղրկվեցան։

ՏԻՏՈՍ, ԴՈՄԵՏԻԱՆՈՍ, ՆԵՐՎԱ, ՏՐԱՅԻԱՆՈՍ.

Տիտոս, որ դեռ իւր հօր կենդանութեան ժամանակ կայսերակից ընտրվեցաւ, իւր կարճ կառավարութեան ժամանակ 79—81 անցաւ նրանից էլ իշխանական և մարդկային ամէն առաքինութիւնների մէջ: Իւր քաղցրութեամբ և բարեսրտութեամբ ստացաւ „սէր և ուրախութիւն մարդկութեան", մականունը: Սորա կառավարութեան ժամանակ 79 ին պատահեցաւ սարսափելի երկրաշարժը, որ Վեսուվի բորբոքման հետ միասին ողջ ստորին Իտալիան ամայի դարձրեց և շատ քաղաքներ մոխիրով և լաւայով ծածկվեցան, որոնցից նոր ժամանակներումն երկուսը Հերկուլանոն և Պոմպէյան գտնվեցան և մասամբ բացվեցան: Այս բնական դիպուածի ժամանակ իր ուսումնասիրութեան զոհ եղաւ, իբրև բնաքննին, երևելի Պլինիոս մեծը: Իր եղբօր բոլորովին անման Դոմետիանը, 81—96, նորոգեց վերստին ներոնեան իշխանութեան սարսափանքները, նոր հալածանք քրիստոնեաների դէմ հանելով: Բրիտանիաումը յաղթական գտնվեցաւ նորա զօրավարը Ագիրկոլան 84 ին. Դակիաումը ընդկառակն շատ անյաջող եղաւ պատերազմը և Դոմետիանոս յանձն առաւ տարեկան հարկ տալու Դակիացիների Դեկեբալոս թագաւորին 90 ին: Սորանից յետ եկան արժանաւոր կայսրներ:

Այս կայսրներից առաջինը եղաւ մարդասէր Փիլիպ զառամեալ Ներվան 96—98, որ առաւել իր ընտրած արժանաւոր զրգեցրով, քան իր սեփական գործունէութեամբ, հոգս տարաւ Հռոմայեցւոց սէրութեան վերայ: Տրայանոս օրինակ եղաւ իշխանների սա ծննդեամբ Սպանիացի էր: Սորա լաւ կառավարութեան յիշատակի համար, երկու դար անգադար ծերակոյտը միշտ նորընտիր կայսեր շնորհաւորելու ժամանակը ասում էր. „Եղիր Օգոստոսից բարգաւոր և Տրայիանոսից լաւ“: Պատերազմական գործքերի էլ անհմուտ չէր սա: Սա ընդարձակեց սէրութեան սահմանները մինչև Դանուբ և Եփրատ գետերի ափերը և վերստին նորոգ հաստատեց Հռոմայեցի Լեգէոնների սէրը: Առաջին պատերազմը արաւ Տակիացւոց դէմ: Երկու պատերազմում յաղթող դուրս եկաւ Տեկերալոսի դէմ և 106 թն նորա երկիրը դարձրեց Հռոմայեցւոց գաւառ: Մինչև ցայժմ Հռոմում գտնուող յաղթութեան սիւնը յիշատակ է այս անցքին: Սորանից յետո 114 թն դարձաւ Պարթևների դէմ, առաւ նոցա Կտեսիփոն (Տիզբոն) մայրաքաղաքը, Հայաստան, Միջագետք և Արաբիայի մի մասը 116 թն միացրեց իւր սէրութեան հետ և մինչև նպատակ էլ դրել էր իրան, Աղեքսանդրի պէս, պատերազմի գնալ Հնդկաստան անգամ: Նուաճած երկիրների ապստամբութիւնները ուշացրին այս նպատակը և սրանից յետո վաղահաս մահը բոլորովին

արդեալ եղաւ նրան։ Բայց որ ոչ մի զարդ չպակասի նորա կառավարութեան, ծաղկեցաւ վերջին անգամ կրկին Հռովմայեցւոց գրականութիւնը սորա ժամանակ։ Սորա կայսերութեան ժամանակը գրեցին Ցակիտոս և Սուետոնիոս իրանց պատմագրութիւնը և Պլինիոս կրտսերը իւր նամակները և ներբողեանները կայսեր վերայ։

ԱԴՐԻԱՆՈՍ, ԱՆՏՈՆԻՆՈՍ, ՄԱՐԿՈՍ ԱՒՐԵԼԻՈՍ·

Ադրիան, Տրայիանոսի ազգականը երևելի եղաւ իւր գործունէութեամբ և արդարասիրութեամբ 117—138։ Սորա միտքն էր խաղաղութիւնը հաստատպահել, ուստի Եփրատից դէնը եղած երկիրները յետ տուաց Պարթևներին և ոչինչ երկիր չաւելցրեց տէրութեան։ Ցասնեօթը տարի ճանապարհորդութիւն արաւ իւր տէրութեան մէջ, ըստ մեծի մասին ոտով, 122 ից, չարագործութիւնները ջնջեց, բարեկարգութիւն ամէն տեղ հաստատեց և օրէնքները կատարելագործեց։ Սրանից մնացած շինուածներից երևելին է մինչև ցայժմ գտնուող հրեշտակաբերդը Հռովմի։ Նոյնպէս խաղաղասէր էր նորա որդեգիրը Անտոնիոս Պիոս 138—161։ Սա իւր հանգիստ գործունէութեան և իր հպատակների բարօրութեան վերայ ունեցած հոգատարութեան համար իւր ժամանակակիցներից երկրորդ Նումա կոչվեցաւ։ Ոչ միայն

ներքին հակումով, այլ և անփոփոխ գոտորդությամբ էլ, իբրև նորա արժանաւոր յաջորդ, Մարկոս Աւրելիոսը գնաց իւր հոգևոր հօր ընթացքով 161—180։ Ջնայելով իւր իմաստութեան և հաստատութեան, կարօտութիւն զգաւ օգնութեան, զանազան ներքին և արտաքին թշնամիներին դէմ կենալու համար։ Թէ և յաջողեցաւ իրան ընտրած կայսերակիցի Լուկիոս Վերոսի օգնութեամբ Պարթևներին յաղթելու, բայց ժանտախտը և սովը, երկրաշարժութիւնը և գետերի բարձրանալը մեծամեծ քանանիք էին պատճառում և վերջապէս Գերմանացի ցեղերը՝ Մարկոմանները, Կուադները, Սուեվիացիները, Վանդալները, Սարմատացի Յազիկների և Հռոքոլանների հետ միաւորվելով, յարձակեցան ամբութեան հիւսիսային սահմանների վերայ։ Սոքա ստիպեցին կայսրին իրանց դէմ սաստիկ պատերազմ յարուցանելու և սա թէև յաղթական գտնվեցաւ. բայց Վինդոբոնաւումը (Վիեննա) ինքն էլ զոհ եղաւ իւր աշխատանաց։ Սորա մահուամբ սկսան Հռոմայեցոց ուժութեան համար դժբաղդ ժամանակները։ Սորա որդին Կոմմոդոսը 180—192 իւր բրտութեամբ և խստութեամբ նորոգեց Կալիգուլայի և Ներոնի ժամանակները։ Որովհետև սրանով վերջացաւ Անտոնինեանց ցեղը, լեգէոնները, որ գրեթէ ազգը Գերմանացիներից էին բաղկացած, մի և նոյն ժամանակ ընտրեցին զանազան կայսրներ, որ միմեանց դէմ ան-

դադար պատերազմում էին։ Իշխանությունը Հռոմում փոխվում էր անդադար և ընտիր կայսրները անգամ չէին կարողանում երկար իշխել։ Այստեղ կյիշենք միայն նրանցից անուանիներուն։

ԲԱԶՄԱԿԱՑՍԵՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ 193—284.

Սեպտիմիոս Սեվերոսից յետո (193—211), որ երկու կայսրների դէմ պաշտպանեց իւր իշխանությունը, երևելիներից մէկը եղաւ Աղեքսանդր Սեվերոս (222—235)։ Թէև տասնվեց տարեկան էր, որ կայսր ընտրվեցաւ, բայց ցոյց տուեց իւր գործքերով, որ ինքը հասակը առած մարդու խելք ունի և երբ մի բան իրան անհասկանալի էր լինում, դիմում էր ժողովին, որ վեց փորձառած սինկղիտոսներից բաղկացած էր, որոնց մէջ էր նմանապէս երևելի իրաւագէտը Ուլպիանոս։ Սորա իշխանության ժամանակը պատահեցաւ Պարսկաստանի Պարթևաց Արշակունի ցեղի իշխանության վերջանալը և Սասանեանց իշխանության սկսելը 226 ին։ Պարսք անուանած լեռնային գաւառից, որ Կիւրոսի հայրենիքն էր, վերկացաւ Արտաշիր, Սասանի որդին, յաղթեց Արտաւան գ. ին, որ երեսներորդ թագաւորն էր Պարթև Արշակի ցեղից և իւր ազգը, որ այնուհետև Նոր Պարսիկ կոչվեցան, Նորից արաւ տիրող արևելքին։ Հռոմայեցւոց վերայ էլ յարձակեցաւ և

կամենում էր նրանց բոլորովին քշել Ասիայից, որ Պարսից թագաւորների սեփականութիւն էր համարում: Բայց Աղեքսանդր Սեվերոս պաշտպանեց Հռովմայեցւոց սահմանները քաջութեամբ: Անյաջող եղաւ առաւել Փիլիպպոս Արաբացին, որ թէև մեծ ճոխութեամբ տօնեց 247 ին Հռովմի հազարամեայ հիմնարկութիւնը, բայց Միջագետքը սոխպվեցաւ Շապուհ առաջինին տալու, որ Արտաշրի որդին էր:

Դեկիոս Նորոգեց Քրիստոնէից հալածանքները և սպանվեցաւ պատերազմում 251 ին Գոթացւոց դէմ, որոնք, առաջին անգամն էր, որ Դանուբը անցել էին: Սորա մահից յետ այնպիսի երկպառակութիւն ծագեցաւ, որ մի և նոյն ժամանակ մինչև տասնիններ կայսրներ ընտրվեցան: Այս ժամանակը առհասարակ կոչում են ժամանակ երեսուն բռնաւորների (ապօրինաւոր իշխանների): Կլաւդիոս բ. յաղթեց ահալի արտաքին թշնամիներին՝ Գոթացւոց 270 ին. բայց ինքն էլ մեռաւ ժանտախտով: Աւրելիանոս 270—275 իւր քաջութեամբ տէրութեան միութիւնը հաստատեց: Մեծ աշխատանք տուեց նրան Զենոբիա թագուհին, որ Արաբացւոց Օդենաթոս ցեղապետի կինն էր, որ Պարսիկներից Ասորիք և Միջագետքը խլել ու փոքր Ասիայից ընդարձակ երկիրներ իւր տէրութեան հետ միացրել էր: Նորա մահից յետ Զենոբիան ոչ միայն պահպանեց այս երկիրները, այլ և նուաճեց Եգիպտոսն էլ: Սա անուանում էր իրան

արևելքի թագուհի և բնակում էր Պալմիրա քաղաքում, որ Ասորւոց անապատի մի բարերեր ովասիսում շինած էր և կարաւանի վաճառականութիւնով ծաղկել ու զանազան տաճարներով և պալատներով զարդարած էր: Այնտեղ 'ղնաց Աւրելիան, յաղթեց Զենոբիային երկու պատերազմերում Անտիոքի և Էմեսայի մօտ, երկար պաշարումից յետ գերի առաւ նրան և նորա մայրաքաղաքը բոլորովին քանդեց: Բայց և այնպէս պատուեց նա Զենոբիայի հաստատութիւնը և անբաղդութիւնը, նրան կեանք և ազատութիւն շնորհելով և կալուածքներ պարգևելով Իտալիայի մէջ: Գործունեայ և քաջ էր նոյնպէս և Պրոբոսը 276—282: Սա յետ քշեց Գերմանացի ազգերուն, որոնք Դանուբ և Հռենոս գետերը անցել էին, շինեց նոր բերդեր և հոգս էր տանում նոր նուաճած երկիրները մշակելու, հրամայելով որթ տնկել Հռենոսի և Դանուբի մօտերը:

ԿԱՅՍԵՐԱԿԻՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԸ 284—395. ԴԻՈԿՂԵՏԻԱՆՈՍ:

Ապօրինաւոր կայսրների անդադար յայտնվելը ստիպեց Դիոկղետիանոսին 284 ին կառավարութեան մի նոր եղանակ 'ի գործ դնելու: Սա ընտրեց Մաքսիմիանոսին իբրև կայսերակից (Օգոստոս) և ամէն մէկը նրանցից վերատին ընտրեց իբրև մի օգնական (Կեսար). Դիոկղետիանոս Գալերիոսին ընտրեց և Մաք-

սիմիանոս Կոնստանտիոս Քլորոսին։ Այս եղանակը «Կրգ-
բում շատ օգտաւէտ երևեցաւ։ Կայսրների Ներ-
կայութեամբ յաղթվեցան Գարսիկները, նուաճ-
վեցան ապստամբները Գաղղիայի, Բրիտանիայի, Աֆ-
րիկայի և Եգիպտոսի մէջ։ Դիոկղետիանոս մեծացրեց
գահի արտաքին ճոխութիւնն էլ։ Պատեց իրան բազ-
մաթիւ պալատականներով, արևելեան թագաւոր-
ների խոյրը դրեց գլուխը և ժողովրդին երևում էր
փառաւոր հանդերձներով և ճոխ ուղեկիցներով պա-
տած։ Կայսրներից ոչ մէկը Հռոմում չէր բնակում,
այլ ամէնքը բնակում էին վտանգաւոր սահմանների
մօտ։ Դիոկղետիանոս էլ հալածում էր քրիստոնեա-
ներուն, որոնց անսահման տարածմամբը կարծում
էր, թէ տէրութիւնը կ'քանդվի։ Այս էր վերջին
հալածումն։ Դիոկղետիանոս գովելի գործունէու-
թեամբ տէրութիւնը կառավարելից յետո մինչև 303 ը
կամայ թողեց գահը և կենում էր իւր հայրենի-
քում Դալմատիայի Սալոնա բերդում, ուր մինչև
313 ին պարտիզպանութեամբ պարապելով անցկաց-
րեց իր վերջին օրերը։ Մաքսիմիանոսին ստիպեց Գա-
լերիոս Դիոկղետիանոսի օրինակին հետևելու։

ՄԵԾՆ ԿՈՆՍՏԱՆԴԻՆ· ՑՈՒԼԻԱՆՈՍ·

Կայսերակիցներից և ապօրինաւոր կայսրներից Ծա-
գեցաւ Կոնստանտինոս, Կոնստանտիոս Քլորոսի (306ին

մեռաւ) որդին։ Սա ծնաւ 274 ին, կեսար դառաւ 306 ին, կայսերակից ընտրվեցաւ 313—337, և թէև էր մեծ ոգւոյ ու խելքի տէր · բայց շատ անգամ բարկութեան և խստութեան էլ գերի էր դառնում։ Միայն ինչ պակասութիւն էլ որ ունեցած լինի, էլի անանց երախտիք ունի իւր քրիստոնէութեան 311ից արած պաշտպանութեամբը, որին յետոյ մեծ օգնութիւն էլ արաւ։ Սա հաւաքեց առաջին տիեզերական ժողովը Նիկիայի մէջ 325 ին, ուր Արիոսի ուսումն իբրև հերետիկոսութիւն դատապարտեցաւ և զատկի օրը ճշդութեամբ նշանակվեցաւ, որ մինչև ցայժմ էլ տեւում է։ Կանգնեց նոյնպէս շատ եկեղեցիներ և բարձրացրեց հոգևորականութիւնը։ Այս պաշտպանութիւնը, իրաւ է, ապահովացրեց քրիստոնէական եկեղեցին արտաքին հալածանքներից, միայն մի և նոյն ժամանակ թուլացրեց նորա անդամների ներքին կապը, եկեղեցականներուն աշխարհականներից զատելով և նրանց արքունի աշխարհական պաշտօնատարների կարգը անցկացնելով, որով եկեղեցին ընկաւ մարմնաւոր իշխանութեան ներքոյ և կորցրեց իր անկախ զարգացումն։ Տէրութիւնը նոր կերպով չորս մասն (պրեֆեկտուրա) բաժանեց (Իտալիա, Գաղղիա, Լիւրիկէ (Իլլիրիա) և Արևելք), կարգադրեց առաւել կարգաւորեալ եղանակ հարկի և ճիշդ որոշեց պաշտօնը, աստիճանը և գործունէական ասպարէզը ամէն պալատական և արքունի պաշտօնա-

տարներին։ Իւր ամբողջ տեղափոխեց Բիւզանդիան, որ 330 թին, Կոնստանդինուպոլիս անուանելով, մայրաքաղաք ընտրեց իր բոլոր տէրութեան։ Սորա և իւր որդւոց մահից յետո նոր վտանգ սպառնացաւ Քրիստոնէութեան Յուլիանոսից (Ուրացող) 360—363, որ թէև խորհրդաւոր և քաղցրաբարոյ մարդ էր, բայց սաստիկ թշնամի էր քրիստոնէական ճշմարտութեանց և ժամանակի պահանջմունքները և տէրութեան կարիքը չէր հասկանում։ Միայն կարճ ժամանակաց կառավարութիւնից յետո մեռաւ վաղահաս մահուամբ պատերազմում Պարսից դէմ։ Սորա յաջորդները հաւատարիմ մնացին քրիստոնէութեան և փոքր առ փոքր բոլորովին անհետացան Հռոմայեցւոց տէրութեան երկիրներում հեթանոսների տաճարները և հին աստուածների երկրպագութիւնը։

ԱԶԳԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ, ՀՌՈՎՄԱՑԵՑԻՈՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ։

Այն մեծ շարժողութեան, որ ազգերի տեղափոխութիւն է կոչվում, սկիզբն տուին Հունք։ Այս թափառական ազգը 374 թին իւր Բալամիր թագաւորի առաջնորդութեամբ անցաւ Վոլգա գետը, յաղթեց Վոլգայի և Դոնի մէջ բնակող Ալաններին և յարձակեցաւ գերմանական Գոթացի ցեղի վերայ, որ Դոնից մինչև Դանուբի ստորին կողմերը բնակում էին և դէպի հիւսիս մինչև արևելեան ծովը (Բալ-

տիկ ծովը) տարածված էին: Սոքա ըստ մեծի մասին քրիստոնեայք էին, և Ուլֆիլաս Եպիսկոպոսը իւր հնարած տառերով թարգմանել էր գոթացիների համար Աստուածաշունչ գիրքը 370 ին: Գոթացիք բաժանվում էին երկու Օստգոթք և Վեստգոթք. առաջիններին իշխանական ցեղը էր Ամալեան. իսկ վերջիններինը Բալդեան: Դնեպրը էր նոցա միջնասահմանը: Օստգոթները քաջութեամբ պատերազմելից յետո, իրանց հերմանարիք ծեր թագաւորի առաջնորդութեամբ, յաղթվեցան 366 ին Հոներից: Մի և նոյն վիճակից ազատվելու համար Վեստգոթները գնացին դէպի հարաւ և խնդրեցին արևելքի կայսրին Վաղէսին, որ արևմտեան կայսեր Վալենտինիանոսի եղբայրն էր, որ ընդունէ իրանց Հռովմայեցւոց տէրութեան մէջ: Նոքա ստացան Մեսիայի և Թրակիայի մէջ բնակութեան տեղեր, բայց փոքր ժամանակից, դաւաճան և խիստ ու ճնշող կառավարութեան չհամբերելով, ստիպվեցան զէնք բարձրացնելու: Վաղէս կորցրեց սոցա դէմ պատերազմ և իւր կեանքը 378 ին Ադրիանուպոլսի մօտ: Միայն նորա յաջորդի Թէոդոսիոս մեծի 378—379 խոհեմ վարմունքը վերականգնեց խաղաղութիւնը, առանց տէրութեան մի նշանաւոր վնաս հասցնելու: Թէոդոսիոս քաղցրութեամբ Վեստգոթների սիրտը գրաւելով բազմաթիւ խումբերով ընդունեց նրանց իւր ծառայութեան մէջ և մի և նոյն ժամանակ իւր

զօրքերի զենաւորութիւնը ու պատերազմական արհեստը կատարելագործելով, յաջողութիւն գտաւ նա ուրիշ արտաքին թշնամեաց դէմ տահմանները պաշտպանելու�էլ: Իւր մահից յետ թողեց նա տէրութիւնը մի և նոյն տարածութեամբ—արևմուտքն էլ ստացել էր 394 ին Վալենտինիանի որդոց մահից յետ — իւր երկու որդւոցը, որոնցից անդրանիկին Արկադիոսին (395—408) թողեց արևելքը, ուր ցոյն լեզուն և սովորութիւնները տարածված էին և ազգրական ծովից դէպի արևմուտք եղած երկիրները, ուր Լատինաց լեզուն էր տիրողը, յանձնեց կրտսեր որդուն՝ Ոնորիոսին (395—423): Սոքա կազմեցին բոլորովին միմեանցից բաժան և անկախ տէրութիւններ. առաջինը կոչվում էր արևելեան Հռոմայեցւոց կամ բիւզանտիոնեան կայսերութիւն և տևեց մինչև 1453 ը, երբ Օսմանցիք տիրեցին նրան, և մայրաքաղաքն էր Կոստանդնուպոլիս. իսկ երկրորդը անուանվում էր արևմտեան կամ Հռոմայեցւոց կայսերութիւն, որ արդէն 476 ին վերջացաւ:

ՎԵՍՏԳՈԹՆԵՐԸ ՀՌՈՎՄՈՒՄ· ՆՈՅԱ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆՎԵԼԸ ԳԱՂԳԻԱՑԻ ԵՒ ՍՊԱՆԻԱՑԻ ՄԷՋ·

Հինգերորդ դարի սկզբում շատ սաստկացաւ հիւսիսից և արևելքից եկող ազգերի յարձակումը:

Վեստգոթները, որոնց սիրտը Արկադիոս մեծ ընծաներով շահել էր, գնացին 403 ին, նրան խնայելով, իրանց Ալարիքոս թագաւորի առաջնորդութեամբ Իտալիա: Ստիլիքոն գերմանացին, որ մատուցեալ Ոնորիոսի հոգաբարձուն էր, թէև պաշտպանեց կայսերութեան գլխաւոր երկիրը, Բրիտանիայի և Հռենոսի սահմանների լեգէոնները Իտալիա կանչելով. միայն հռոմէական Բրիտանիայի վերայ յարձակեցան հիւսիսաբնակ Պիկտերը և Սկոտացիները և Գաղղիայի վերայ Վանդալները և՝ Սուեվիացիները: Այս վերջիններին հետևեցին շուտով ուրիշ Գերմանացի ազգերը Ֆրանկները Բուրգունդները և Ալեմանները: Վանդալները, Սուեվիացիների և Ալանների հետ միացած, Պիրենեան լեռները անցնելով մտան Սպանիա, որտեղից նոցա Գենսերիքոս թագաւորը 429 ին նաւեց Աֆրիկէ և հիմնեց հին Կարթագինէի տէրութիւնը կազմող երկրում գերմանական թագաւորութիւն: Մինչև որ կենդանի էր Ստիլիքոնը, Հռոմայեցիք քաջութեամբ դէմ էին կենում Ալարիքոսի շատ անգամ նորոգած յարձակմանցը. բայց երբ նա 408 ին զբաղարտված ապանվեցաւ, Վեստգոթների թագաւորը 410 ին տիրեց Հռոմին, որ Անիբալի ժամանակից մինչև այն օրը դեռ արտաքին թշնամի չէր տեսել իւր պարիսպների մօտ: Իսկ Ալարիքոս ամենևին չկամեցաւ այնտեղ իւր բնակութիւնը հաստատել, այլ քաղաքը կողոպտելից յետ

գնաց Սիկիլիա։ Այս ճանապարհորդութեան ժամանակ կոնսենտիայի մօտ մահը վերայ հասաւ նորա յաջորդը Ա թաուրիք 411—415. հետևելով ազգերի մեծ տեղափոխութեանը, անցաւ Գաղղիա և Սպանիա։ Վալլիա (416—419) հիմնեց այնտեղ Վեսոգոթների յայնաստաքած թագաւորութիւնը, որի մայրաքաղաք ընտրեց Տուլուզ։— Այսպէս Հռոմայեցւոց արևմտեան կայսրութիւնը կորցրեց իւր ամենալաւ գաւառները և պահպանեց Իտալիան միայն և Գաղղիայի մէկ մասը։

ՀՈՆՔ ԵՒ ՎԱՆԴԱԼՔ ԻՏԱԼԻԱՈՒՄ· ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԱՑՍԵՐՈՒԹԵԱՆ ՎԱԽՃԱՆԸ։

Սակաւամեայ խաղաղութիւնից յետ Վալենտինիանոս գ. ի կայսերութեան ժամանակ արևմուտքը (525—455) նորից ամայի դարձաւ պատերազմից։ Հոնք, որ մինչև այն ժամանակ բնակում էին Դոնի և Դանուբի մէջ և բաւականացել էին սահմանակից ազգերուն (Օստրոգոթներուն, Գեպիդներուն և այլն) հարկատու անելով, 444 ին շարժեցան կրկին Ատիլասի առաջնորդութեամբ, որ իւր եղբօր Բլեդայի սպանելից յետ նոցա միակ իշխողն էր դառել։ Նորա արտաքին տեսքը ցոյց էր տալիս որ ազգի անդամ լինելը—կարճահասակ էր անձամբ, ամուր կազմուածք ունէր, մեծ գլուխ լայն ուսերի վերայ, փոք-

բիկ խորը ընկած աչքեր և սափրարակ քիթ. հոգեւոր որպիսութիւններով ամէն Հոներից գերազանց էր նա: Խորամանկութեամբ գիտէր ամէն հանգամանքներից օգուտ քաղել, շափազանց խիստ էր. բայց շուտ քաղցրաբարոյ էր դառնում, երբ իւր նպատակների համար այս հարկաւոր էր լինում: Թէև սիրում էր իրան շրջապատող մարդոց ճոխութեամբ զարդարել, բայց ինքը հագնվում էր միշտ հասարակ, ատում էր փափկասիրութիւն և մանակից էր լինում վերջին գենուորի ամէն նեղութիւններին: Իրան ընտրեալ էր համարում աշխարհս կողոպտելու և ամայացնելու համար, նրան կոչում էին խարազան Աստուծոյ և նորա ազգը, որ կուրութեամբ հպատակում էր նրան, հաւատում էր նրան Աստուածանից խրկված լինելուն: Արևելեան կայսրից՝ Թէոդոսիոս երկրորդից (408—450) մեծ գումարներ, նրան և նորա տէրութեանը խնայելուն համար, ստանալից յետ 450 ին Օստգոթների և Գեպիդների ուղեկցութեամբ Գերմանիան անցնելով, ահագին զօրութեամբ գնաց Գաղղիա: Կատալաունեան դաշտերում, այժմեան Մարնի մօտ գտնուող Շալոնի շրջականերում, դէմ ելաւ նրան Վեստգոթներից և Հռոմայեցիներից, որոնց հասարակաց փառքը միաւորել էր, բաղկացած զօրքը Այէտիոսի և Թէոդորիքոսի առաջնորդութեամբ և այստեղ 451 թուականին պատահեցաւ մէկը այն ամենապարհուրելի և

որբունահնգ պատերազմերից, որ պատմութիւնում յիշվում են: Կամակորութեամբ երկար ժամանակ պատերազմելից յետո հանաց 800,000 զոհեալ յարթվեցաւ 500,000 արևմտեան զօրքից. միայն Վենետիկցոցիների թէոդորիքոս թագաւորն էլ ընկաւ պատերազմում, ու իւր որդին թողիմանեցը բանից նորա տեղը: Ատտիլաս անցաւ Հռենոսը ու յետ քաշվեցաւ և յաջորդ տարին երևեցաւ Խաղիայի հիւսիսային սահմանում, ուր ծագված ու Ռոմ Ակուիլէա քաղաքը առաւ և քանդեց: Ապատեղից փախստականները հիմն գրին այն Վենետիկ քաղաքին, որնոր ժամանակով շատ նշանաւոր և երևելի եղաւ: Բայց Հռոմ չհասաւ Ատտիլաս: Գլխաւոր հրեշտակութիւնները, որ մեծամեծ ընծաներ բերին նրան, ցաւերը և հիւանդութիւնները զօրքերի մէջ, և վերջապէս արևելեան Հռոմայեցիների նորա ժառանգական երկրի վերայ յարձակելը ստիպեցին նրան յետ դառնալու: Արանից յետ փոքր ժամանակից մեռաւ Ատտիլաս 453 ին և նորա որդուց անմիաբանութիւնը տէրութեան վախճան դրին: Օստգոթները և գեպիները վերստին անկախ տէրութիւններ կազմեցին. բայց սրանից ոչինչ օգուտ չեղաւ Հռոմին: Արդէն 455 ին եկաւ կարթագինէից նոր թշնամի, ամէն առաջիններից առաւել անխնայ, այս էր գենսերիկոս Վանդալը: Քաղաքը գրեթէ առանց ընդդիմութեան առնվեցաւ և այնպիսի ագահութեամբ և

յաջողակութիւնամբ կողոպտեցաւ, որ Վանդալ-
ութիւն անունը առած դառաւ այդ մասին: Շու-
տով այս բարբարոսներին հեռանալից յետ Հռոմա-
յեցւոց կայսեր անունը միայն տիտղոսով էր մնաց,
որը Հռիկիմեր Սուեվիացին, ըստ մնծի մասին Գեր-
մանացիներից բաղկացած վարձկան զօրքի զօրավարը
տասնվեց տարի 456—472 ում կամենում էր տա-
լիս էր և խլում: Սորա յաջորդը Օրեստէս Պանոնա-
ցին 475 ին կայսերական թագը դրեց իւր Հռոմու-
լոս անունով տասներեքտարեկան որդու գլուխը:
Իսկ Ոդոակր, Նորիկոնի (այժմեան բուն Աւստրիայի
և Շտէյերմարքի) մէջ բանակած ըստ մնծի մասին Հե-
ռուլներից և Հռուգիացիներից կազմված զօրքի գլ-
ուխը, վերկացաւ Օրեստէսի դէմ, սպանեց նրան և
որդուն զրկելով գահից 476 ին իրան անուանեց
թագաւոր Իտալիայի: Դեռ Օրեստէսից աքսորած
կայսրը Յուլիոս Նեպոս անունով վախճանեցաւ 480 ին
Դալմատիաում:— Այսպէս վերջացաւ Հռոմայեցւոց
տէրութիւնը հազար երկու հարիւր տարուց առաւել
տևելից յետ մի Հռոմուլոսի իշխանութեան ժամանա-
կը, որի անուանակցի իշխանութեամբ էլ սկսվել էր:

ՑԱՆԿ.

ԱՐԵԻԵԼ.

1 Արևելեան Հնդկաստան և Ճենաստան . . 4
2 Ասորեստան 5
3 Նոր Ասորեստան և Բաբելաստան 7
4 Մարաստան կամ Մեդիա 8
5 Փիւնիկէ 10
6 Սիւրիա (Ասորիք) 14
7 Եգիպտոս 15
8 Փոքր Ասիա 29
9 Պարսկաստան, Կիւրոս 21
10 Կամբիուս, կեղծ Սմերդիս 26
11 Դարեհ Վշտասպեայ 27

ԱՐԵՒՄՈՒՏՔ.

12 Յունաստան. աշխարհագրութիւն . . . 30
13 Յունաստանի բնակիչները 33
14 Արգոնաւորդները 34
15 Յոյների դիւցազնական ժամանակը . . . 35
16 Տրոյական պատերազմը 37
17 Գաղթականները 40
18 Սպարտա 42
19 Մեսսենիոյ պատերազմը 44
20 Աթէնք 46
21 Սոլոնի օրէնքները 48

22 Պիսիստրատ և իւր որդիները 50
23 Յոյների քաղաքական կեանքը 51
24 Պարսկական պատերազմը. 55
25 Նախագահութիւն (Հեգեմոնիա) Աթէնքի. 60
26 Պելոպոննեսական պատերազմը 62
27 Բիւրի նահանջը, Անտալկիտասի դաշնագ. 66
28 Թեբէի բարձրանալը ու անկումն. Պելոպիտաս և Եպամինոնդաս 69

ՄԱԿԵԴՈՆԻԱ.

29 Փիլիպպոս արքայ 71
30 Աղեքսանդր Մեծը. 73
31 Պարսից թագաւորութեան վախճանը . . 75
32 Աղեքսանդրի վերջին գործերը 79
33 Մակեդոնացւոց համատարած թագաւորութեան բաժանվիլը 82
34 Սիւրիա (Ասորիք) Սելևկոսեանց իշխանութեան ժամանակ 84
35 Եգիպտոս 87
36 Բուն Մակեդոնիա. 89
37 Յունաստան 91

ՀՌՈՎՄԱՑԵՑԻՔ.

38 Իտալիայի աշխարհական բաժանումն . . 93
39 Իտալիայի նախկին պատմութիւնը. . . 94
40 Հռոմուլոս 95
41 Հռոմուլոսի յաջորդները. 97

42 Առաջին հիւպատոսները, Պորսեննա . . 100
43 Ժողովրդականաց տեղափոխու�, Կորիոլանոս. 102
44 Օրինաց տասներկու տախտակները . . . 105
45 Վէյի նուաճուիմ Գաղղիացիների Հռովմ գալը 107
46 Քաղաքացիների իրաւանց հաւասարուիմ. 109
47 Հռովմէական կեանքը մինչև Սամնիական պատերազմը 110
48 Սամնիական պատերազմները 113
49 Պիւռոս թագաւորը 114
50 Սիկիլիա 116
51 Կարթագինէ 119
52 Առաջին Պունիկեան պատերազմը . . . 121
53 Աննիբաղ 123
54 Երկրորդ Պունիկեան պատերազմը . . . 125
55 Յաղթութիւններ Մակեդոնացւոց և Ասորւոց դէմ. երրորդ Պունիկեան պատերազմ. 129
56 Յուգուրթա 132
57 Կիմբրացիք և Տեւտոնեանք 134
58 Հռովմի բարոյական անկումն 136
59 Միհրդատ. առաջին ներքին պատերազմը . 139
60 Կնէոս Պոմպէոս Մեծը 143
61 Մ. Տուլլիոս Կիկերոն. Կ. Յուլիոս Կեսար . 146
62 Կ. Յուլիոս Կեսար. շարունակութիւն . . 148
63 Կեսարի գաղղիական պատերազմները . . 150
64 Երկ. ներքին (քաղաքական) պատերազմը. 152

65 Ֆարսալոյ պատերազմը. Պոմպէոսի մահը 155
66 Կեսարի վերջին գործքերը 156
67 Կեսարի մահը. 159
68 Երկրորդ եռապետութիւն 160
69 Տէրութեան գրութիւնը Օգոստոսի ժամ. 163
70 Ցիսուսի Քրիստոսի ծնունդը. վերջին ժամանակները Հրէից վերականգնած թագաւորութեան 167
71 Տիբերիոս, Կայիգուլա, Կլաւդիոս, Ներոն . 169
72 Գալբա, Ոթոն, Վիտելլիոս, Վեսպասիան . 170
73 Տիտոս, Դոմեատիանոս, Ներվա, Տրայիանոս. 172
74 Ադրիանոս, Անտոնինոս, Մարկոս Աւրելիոս . 174
75 Բազմակայսերութեան ժամանակը . . . 176
76 Կայսերակիցների ժամանակը. Դիոկղեսիանոս 178
77 Մեծն Կոնստանդին. Յուլիանոս 179
78 Ազգերի տեղափոխութիւնը 181
79 Վեսպոթները Հռոմում 183
80 Հոնք և Վանդալք Իտալիայում, արևմտեան կայսերութեան անկումն . . . 185

ՍՏՈՒԳՎԱԾ է 1971 թ.